

Եղիշե Չարենց - 125



«Կասկած» թամաշա
Սերգեյ Աբուտչյան, կերպարների էսքիզ



Դրվագ «Կասկած» թամաշայից
Հ. Պարոնյանի անվան կոմերիայի պետական թատրոն
Բեմ.՝ Տ. Վարդապարյանի


դրամատուրգիա

գրական - գեղարվեստական հանդես

70 ²⁰²² 71

Նորայր ԱԴԱԼՅԱՆ ՈՎ ՈՎ Է ՄԱՀՎԱՆ ՊԱՏԻ ԱՌՋԵՎ.....	5
Գուրգեն ԽԱՆՋՅԱՆ ԹՈՐԳՈՄԱ ՏՈՒՆ. ՀԱՅԿ.....	21
Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ ԱՆԱՆՈՒՆԸ.....	49
Սամվել ԿՈՍՅԱՆ ՓՈՇՈՒԿ ՔՇՎԱԾՆԵՐԸ.....	65
Դավիթ ԽԱԶԻՅԱՆ ՏԱՐ ԻՆՁ ԴԵՊԻ ԱՍՏՂԵՐԸ	87
Ռազմիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՆԿ.....	105
Նինա ՄԱԶՈՒՐ ԱԳՆԵՍԸ՝ ՈՒԻԼԼԻ ԿԻՆԸ.....	115

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



Նորայր
ԱԴԱԼՅԱՆ

Հեղինակն այս խաղը սկսեց գրել իր ցանկությանը հակառակ և կանգ առավ յոթ գործող անձանց վրա, որոնց նմանները հազար ու մեկ են, պարզ է՝ հնարավոր չէր բոլորին բեմ կանչել, մանավանդ աշխարհում նրանց մարմնավորող այդքան շատ դերասաններ էլ չկան: Թեև եթե մեզ հարցնեն, կասենք՝ ես էլ դերասան եմ, և՛ հանճարեղ: Բսկապես, մեզանից ով հանճար չէ:

Բեմական վարագույրը բաց է, որ նշանակում է. ներկայացումը սկիզբ չունի:

ՈՎ ՈՎ Է ՄԱՀՎԱՆ ՊԱՏԻ ԱՌՋԵՎ

(խոսքի դրամատուրգիա մեկ գործողությամբ)

Գործող անձինք

ՍԻՄՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ - պատմության պրոֆեսոր

ՅՈՒԴԱ

ՆԱԶԱՐ

ԿԻՆ

ՌՌԲ

ԾԱՂՂԱԾՈՒ

ԴԱՅԻՃ

Բանտի ներքին բակ հիշեցնող բեմում շուրջանակի դանդաղ քայլում են հինգ գործող անձինք. առջևից՝ Կինը, ետևում՝ Ծաղրածուն: Տղամարդիկ բանտային գորշ-գծավոր համազգեստով են, իսկ Կնոջ հագին՝ թափանցիկ գիշերանոց, որ գրեթե չի սքողում նրա գայթակղիչ մարմինը: Տեսնելով ներս մտնող Սիմոն Երևանցուն, որն ամբողջովին սպիտակի մեջ է, միայն թիթեռնիկ փողկապն է սև, բոլորը շփոթված քաշվում են պատի տակ:

ՊՐՈՖԵՍՈՐ - (հանում է թիթեռ փողկապը և դնում բաճկոնի արփաքին գրպանը): Մահվան պատի տակ կանգնած գնդապետ Աուրելիանո Բուենդիան հիշեց, թե ինչպես մի օր հայրն իրեն սառույց տեսնելու տարավ:

ՌՌԲ - Ես գնդապետ չեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Գիտեմ, գեներալ ես:

Օդում կախվում է որսորդական մեկ հրացան, ինչին ոչ ոք ուշադրություն չի դարձնում:

ՊՐՈՖԵՍՈՐ - Կին, կանգնիր տղամարդկանց մեջտեղը:

ԿԻՆ - Բայց ինչո՞ւ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Այդպես ճիշտ կլինի:

ԿԻՆ - Որ ասում ես...

ՊՐՈՖԵՍՈՐ - Չեմ ասում, հրամայում եմ իբրև պատմաբան, որ պատմություն է գրում և ոչ՝ սիրային բանաստեղծություն:

ԾԱՂՂԱԾՈՒ - Ես էլ տեղս փոխեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու ճիշտ տեղում ես:

Նազար, դու գեներալ չես:

ՆԱԶԱՐ - Գնդապետ էլ չեմ, Պրոֆեսոր:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ոչնչություն ես: Երկու քայլ արագ ետ քաշվիր:

ՆԱԶԱՐ - Եղավ, Պրոֆեսոր:
ՊՐՈՖԵՍՈՐ - Հուդա, դու մեկ քայլ առաջ արի: Կես քայլ արեցիր, ասացի՝ մեկ լրիվ քայլ: Այ, հիմա պատրաստ ենք ճշմարտությունը խոսելու:
ՆԱԶԱՐ - Ո՛ւմ է պետք:
ՊՐՈՖԵՍՈՐ - Ինձ: Ամեն մեկիս: Պատմությանը: Երբ ես քառասունյոթ տարի առաջ ծնվեցի, հայրս ինձ տարավ բարձր լեռան ձյունե գագաթը՝ սառույց տեսնելու: Ես մի կտոր սառույց կերա և ասացի. հայր, սառույց է: Նա շոյեց գլուխս ու ասաց. այո, սառույց է, դու, ասաց, միայն ճշմարտությունն ես խոսելու մարդկանց, սուտը մահ է, ճշմարտությունը՝ կյանք: Այդ ժամանակ էլ երդվեցի հավերժորեն սիրել ճշմարտությունը և երբեք չդավաճանել նրան:
ՀՈՒԴԱ - Պրոֆեսոր, դու մի քիչ խելագար ես:
ՊՐՈՖԵՍՈՐ - Շատ:
ԿԻՆ - Սիրելիս:
ԾԱՂՐԱԾՈՒ - Լարախաղացը եկավ մեր թաղը:
ՌՌՔ - Ճշմարտությունը ես եմ, թեև երբեք սառույց չեմ կերել:
ԿԻՆ - Ռոբ, սրիկա:
ՌՌՔ - Պոռնիկ:
ՊՐՈՖԵՍՈՐ - Ըստ իմ ուսումնասիրությունների՝ բոլորդ էլ սրիկա

եք, հանցագործ, կաշառակեր, մարդասպան և այլն, և այլն, ես, իբրև պատմաբան, ձեզ պիտի դատեմ ու խստագույնս դատապարտեմ:
ՀՈՒԴԱ - Դու կարգին խելագար ես:
ՊՐՈՖԵՍՈՐ - Մի քիչ:
ԿԻՆ - Քիչը ինչքան է, սիրելիս:
ՊՐՈՖԵՍՈՐ - Շատ ու շատ:
Բեմի երկնքում հրացանը տարուբերվում է քամուց:
ՆԱԶԱՐ - Ամեն առավոտ և երեկոյան, քնելուց առաջ, ես խոսում եմ Հիսուսի տասը պատվիրանները:
ՊՐՈՖԵՍՈՐ - Մեկն ասա:
ՆԱԶԱՐ - Հայրս ինձ սառույց տեսնելու չտարավ, որովհետև ես այդ ժամանակ ոչ գնդապետ էի և ոչ էլ գեներալ:
ՊՐՈՖԵՍՈՐ - Ո՛վ էիր:
ՆԱԶԱՐ - Չգիտեմ
ՊՐՈՖԵՍՈՐ - Ես գիտեմ:
ՆԱԶԱՐ - Ո՛վ էի:
ՊՐՈՖԵՍՈՐ - Կին, դու ասա:
ԿԻՆ - Նա մի անտաղանդ տղամարդ է, Պրոֆեսոր:
ՆԱԶԱՐ - Մոռացմբ, երեք օր առաջ, ամբողջ գիշեր քեզ ոնց էի տանջում, մի բռնակ քուն չունեցար:
ԿԻՆ - Դու չէր, փախքոտ, Ծաղրա-

ծուն էր, իմ վրա աճապարարություն էր անում, քիչ մնաց խելագարվեի:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ես էլ էի խելագարվում, Պրոֆեսոր, այս կնոջ մեջ ապրում են աշխարհի բոլոր կանայք:

ՊՐՈՖԵՍՈՐ - Անտադանդությունը սովորական մեղք չէ, Նազար, հանցագործություն է, ես դեռ չգիտեմ՝ ինչպես մարդկությանն ազատեմ քեզնից:

ՆԱԶԱՐ - Գնամ եկեղեցի, մոմ վառեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Մոմով չի, հավատքով ու սիրով է մարդը լուսավորվում:

ՀՈՒԳԱ - Անհավատ Նազար:

ԿԻՆ - Անսեր:

ԾԱՂՐԱԾՈՒ - Դու էլ մի բան ասա, Ռոբ:

ՌՈՐ - Ինչ ասեմ, չգիտեմ, ինչ չասեմ, երբ դուք խաղեր եք անում, ես իմ բանտախցում լուռ ու միայնակ մտածում եմ՝ ինչպես այս երկիրը հանեմ փոսից:

ԿԻՆ - Անսեր Նազարեթ:

ՆԱԶԱՐ - Անունս մի խեղաթյուրիր:

ԿԻՆ - Էլ մտքովդ չանցնի ինձ մոտենալ, մարմինս քեզնից զզվում է:

ԾԱՂՐԱԾՈՒ - Այս գիշեր էլ կգամ ծոցդ:

ՌՈՐ - Ոչ տեսել եմ, ոչ լսել:

ԿԻՆ - Ռոբ...

ՌՈՐ - Հա ջան...

ԿԻՆ - Ինձ վախեցնում ես:

ՀՈՒԳԱ - Մարդասպան:

ԿԻՆ - Երկուսդ էլ մարդասպան եք:

ՌՈՐ - Ոչ լսել եմ, ոչ տեսել:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ճշմարիտ է ասված՝ փոս փորողը մի օր այդ փոսն է ընկնում: Բոլորդ էլ փոսում եք: Ես ձեզ կանչեցի, որ հասկանաք՝ հանցանքին հետևում է պատիժը, եթե չի հետևում, մարդկությունն ապրում է ստի հետ: Միթե մենք դատապարտված ենք հավերժորեն ապրելու ստի մեջ:

ԿԻՆ - Չէ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ինչո՞ւ մյուսներդ լռեցիք:

ԾԱՂՐԱԾՈՒ - Իհարկե չէ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ռո՞բ...

ՌՈՐ - Քանի՞ անգամ ասեմ՝ ոչ տեսել եմ, ոչ լսել:

ԾԱՂՐԱԾՈՒ - Գրիր, որ հավատամ:

ՌՈՐ - Ես անգրագետ եմ, ջազ եմ սիրում, կյանքումս ոչ մի գիրք չեմ կարդացել:

ԾԱՂՐԱԾՈՒ - Նույնիսկ «Էմբրիոնը»:

ՌՈՐ - «Շունն ու կատուն» լսել եմ, տատս է պատմել:

ԾԱՂԲԱԾՈՒ - Բա ինչպէս ես դեկավարում երկիրը:

ՌՌՌ - Տասու է դեկավարում, ես վայելում եմ:

ԾԱՂԲԱԾՈՒ - Ազնիվ Յագո:

ՌՌՌ - Իմն է այն ամենը, ինչ պատկանում է ձեզ՝ տուն-տեղը, հողն ու ջուրը, քաղաքներ, անտառներ, գետեր ու լճեր: Տասու ինձ այնքան էր սիրում, որ ասում էր՝ Ռոբիկ, բալիկ ջան, քեզ մեծ ապագա է սպասվում, մի օր թագավոր էլ կդառնաս:

ՆԱԶԱՐ - Հիմա դու թագավոր ես:

ՌՌՌ - Դեռ մի բան էլ ավելի:

ՀՈՒԴԱ - Տեր իմ... *(Խոնարհվում է:)*

ԾԱՂԲԱԾՈՒ - Թագավորը մերկ է... *(Խոնարհվում է և հոհոում:)*

ՊՐՈՖԵՍՈՐ - Կին, դու ինչո՞ գլուխ չես խոնարհում թագավորին:

ԿԻՆ - Որովհետև պոռնիկ չեմ:

ՆԱԶԱՐ - Երեք օր առաջ քեզ այնքան տանջեցի, որ մեռար ու չմեռար:

ԿԻՆ - Պոռնիկը նա է, ով մարմինն է վաճառում և ոչ՝ հոգին ու սիրտը:

ՌՌՌ - Չայներդ կտրեք, պոռնիկներ, տասու է ականջիս խոսում:

ՀՈՒԴԱ - Մեռածը:

ՌՌՌ - Նա անմահ է:

Բոլորը լռում են: Ռոբը լարում է մեկ այս, մեկ այն ականջը:

ՌՌՌ - Շնորհակալություն, տատ: **ՀՈՒԴԱ** - Ի՞նչ ասաց, հո չասանց, թե ես եմ խաչ հանել Աստծո որդուն:

ՌՌՌ - Չէ, այդպիսի բան չասաց:

ՆԱԶԱՐ - Հո չասանց՝ ես անտառանդ եմ:

ՌՌՌ - Չէ, չէ:

ՆԱԶԱՐ - Ուրեմն տաղանդավոր եմ:

ԾԱՂԲԱԾՈՒ - *(պար գայով):* Ռոբ, Ռոբ, Ռոբ:

ԿԻՆ - Վերջապես ի՞նչ խոսեց, ասա իմանամ:

ՌՌՌ - Ոչ մի բան էլ չասաց, բայց հասկացա՝ աշխարհը դմակ է, ես՝ դանակ, հա կտրիր, կեր ու մի կշտացիր:

ԾԱՂԲԱԾՈՒ - Պապիդ կենացը:

ՌՌՌ - Երբ տասու ինձ սառույց տեսնելու տարավ, ես դեռ թագավոր չէի: Սառույցը տաք էր ու քաղցր ու կարմիր գույն ուներ:

ԾԱՂԲԱԾՈՒ - Սատանա:

ՌՌՌ - Կսպանեմ:

ԾԱՂԲԱԾՈՒ - Ես մեռա: *(Տապալվում է գեղերին՝ մեռած ձևանալով:)*

ՀՈՒԴԱ - Հանուն հոր և որդվո... Ամեն: *(Խաչակնքում է նրան:)*

Կինը և Նազարը հեկեկում են:

ԾԱՂԲԱԾՈՒ - *(ծիծաղելով ուրբի էելնում)*: Բոլոր մեռածները ողջ են, բոլոր ողջերը՝ մեռած:

ՊՐՈՖԵՍՈՐ - Սա պատմաբանիս ամենակարևոր ժամն է, սահմանային վիճակ կյանքի և մահվան միջև: Ու ես ինձ ու ձեզ հարցնում եմ՝ լինել, թե՛ չլինել:

ԿԻՆ - Լինել, իհարկե լինել, իմ մարմինն ու հոգին մեղք չե՛ն, որ մեռնեն:

ՆԱԶԱՐ - Ես մե՞ղք չեմ:

ԾԱՂԲԱԾՈՒ - Դու մեղք չես:

ՀՈՒԴԱ - Ո՛վ է մեղք:

ՌՌՐ - Տառս:

ՊՐՈՖԵՍՈՐ - Բոլորս էլ մեղք ենք, որովհետև մեղքի տակ ենք:

ՀՈՒԴԱ - Դո՛ւ էլ, Պրոֆեսոր:

ՊՐՈՖԵՍՈՐ - Եթե այժմ ինձ չհաջողվի ապացուցել ձեր մեղքն ու մեղավորությունը, ուրեմն ես էլ եմ հանցագործ իբրև պատմաբան, որ տարիներ շարունակ, այն բանից հետո, երբ մի առավոտ հայրս ինձ սառույց տեսնելու տարավ, ձեզ սիրել եմ՝ ատելու փոխարեն:

ԿԻՆ - Ինձ ինչո՞ւ չես սիրում, Պրոֆեսոր, ամեն գիշեր սպասում եմ, որ ծոցս գաս, բայց քո փոխարեն Նազարեթն է գալիս, որից զզվում եմ, ինչո՞ւ, Պրոֆեսոր, մի՞թե գեղեցիկ չեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Քեզ սիրում եմ, Կին, շատ եմ սիրում, այդ պատճառով էլ չեմ գալիս, մի սպասիր:

ՀՈՒԴԱ - Դու մեծ հանցագործ ես, Պրոֆեսոր, որ մերժում ես այս գեղեցկուհու սերը:

ԿԻՆ - *(լաց լինելով)*: Խնդրում եմ, սիրելիս, մի օր արի, առանց քեզ ես կմեռնեմ:

ՀՈՒԴԱ - Ես կգամ, չես մեռնի:

ԿԻՆ - Նազար, դու չգաս:

ՌՌՐ - Այսօր իմ հերթն է, ոչ ոք տեղից չշարժվի:

ԿԻՆ - Դու չգաս, քեզնից վախենում եմ:

ԾԱՂԲԱԾՈՒ - Մի վախեցի, ես եմ գալու, քեզ կսիրեմ ամբողջ գիշերն ու առավոտ, ամբողջ օրը, մի քանի օր անդադար, կգժվես ու չես մեռնի:

ԿԻՆ - Բոլորդ էլ եկեք: Բոլորիդ էլ սպասում եմ այս գիշեր, նույն տեղում ու նույն ժամին: Պրոֆեսոր, խնդրում եմ, խիղճ չունե՛ս:

ՊՐՈՖԵՍՈՐ - Խիղճը մարդուն հաճախ հեռացնում է ճշմարտությունից: Ես դատում եմ ձեզ: Իսկ դուք ինչո՞ւ ինձ չեք դատում, ինձ խղճո՞ւ եք, մի խղճացեք, ես էլ տարիներ շարունակ հանցանքներ եմ գործել, սև երևույթները ներկայացրել սպիտակ ու ոսկեգոծ գույներով, բարե-

կամությունն ու եղբայրություն արել սատանայի հետ, հպարտացել, որ մեծ տան զավակն եմ, մեծ տան անձնագիր ունեմ, դավաճանել եմ հորս, որ մի օր ինձ սառույց տեսնելու տարավ՝ բացելու աչքերս չար աշխարհի հանդեպ, լարելու լսողությունս նրա հաչոցներին, բայց ես, հարգելիներս, շատ տարիներ կույր ու խուլ մնացի, և հայրս ինձնից նեղացած գնաց այն աշխարհ, ներիր, հայր, քո մեղավոր որդուն: Ձեզանից ո՛վ է ուզում դատել ու դատապարտել ինձ, թող երկու քայլ առաջ անի:

Հուդան երկու քայլ առաջ է գալիս:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու ետ գնա:

Նագարը երկու քայլ առաջ է գալիս:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու իրավունք չունես ինձ դատելու:

ՆԱԶԱՐ - Ինչո՞ւ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Անտաղանդ ես:

Ծաղրածուն երկու քայլ առաջ է գալիս և անմիջապես էլ ընկրկում:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ազնիվ մարդ:

Ռոբը երկու քայլ առաջ է գալիս:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ետ գնա, Բրուտոս:

Կինը անհամարձակ երկու քայլ առաջ է անում:

ՊՐՈՖԵՍՈՐ - Բարև, սիրելիս:

ԿԻՆ - Բարև, Պրոֆեսոր:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ի՞նչ պատիժ ես տալիս ինձ, որ դավաճանել եմ հորս և պատմությանը:

ԿԻՆ - Մեռիր, Պրոֆեսոր, դու այս կյանքին արժանի չես:

ՊՐՈՖԵՍՈՐ - Լուսավոր և ճշմարիտ կին:

ԿԻՆ - Այս գիշեր կամուսնանամ քեզ հետ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Մեռածի՛:

ԿԻՆ - Մինչև աշխարհի վերջը քեզ հավատարիմ կլինեմ: Մենք շատ երեխաներ կունենանք ու բոլորին կկոչենք հորդ անունով:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ի՞նչ է քո անունը:

ԿԻՆ - Ջոկոնդա:

ՊՐՈՖԵՍՈՐ - Երբ մեռնեմ ու մի օր հարություն առնեմ, նկարելու եմ հավերժորեն ժպտացող քո աչքերն ու շուրթերը: Ես քեզ սիրում եմ: Դու ինձ ինչո՞ւ չես սիրում:

ԿԻՆ - Մեռածին սիրում են ավելի, քան ողջին: Մեռիր, որ սիրեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Արդեն մեռած եմ:

ԿԻՆ - Ստախոս:

ՊՐՈՖԵՍՈՐ - Այո, սուտ խոսել՝ նշանակում է ուրանալ և՛ ծնողիդ, և՛ պատմությունը:

ԿԻՆ - Այս գիշեր չգաս ինձ մոտ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Կգամ ու քեզ կասեմ
աշխարհի լավագույն բառերը,
որոնք միայն տղամարդը կա-
րող է շնչալ սիրելի կնոջը:

ԿԻՆ - Բոլորն էլ սուտ ու կեղծ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ինչ ճշմարիտ ես
դատում ինձ: Վերջապես դա-
տավճիռդ ասա:

ԿԻՆ - Ապրիր երկար, շատ երկար,
որ այդքան ժամանակ էլ տանջ-
վես:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դաժան Կին: Քանի
դեռ այս ներկայացումը շարու-
նակվում է, ես քեզ ու բոլորիդ
կապացուցեմ՝ ով է պրոֆեսոր
Միմոն Երևանցին, դու կզոջաս:
Գնա տեղդ:

Կինը շարք է վերադառնում:

ՊՐՈՖԵՍՈՐ - Մեկ քայլ ետ ու կես
քայլ աջ: Մի թաքնվիր այդ ան-
տաղանդ Նազարի ետևում:
Կանգնիր Հուդայի կողքին: Ո՛չ՝
Ծաղրածուի: Այ Ծաղրածու,
կես քայլ ձախ քաշվիր, որ Ջո-
կոնդան հանգիստ տեղավոր-
վի: Մի՛ շփվեք իրար, գիշերը
հեռու չէ:

ԾԱՂՐԱԾՈՒ - Բա որ գիշերը չգամ...

ՊՐՈՖԵՍՈՐ - Համբերեք, մի օր
գալու է:

ԾԱՂՐԱԾՈՒ - Հազար տարի հե-
տո՞ւ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Երբ ծերանաք մեռ-

նելու չափ: Հիսուսի երկրորդ
աշակերտ...

ՀՈՒԴԱ - Այստեղ եմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Քաջ Նազար...

ՆԱԶԱՐ - Ներկա:

ՊՐՈՖԵՍՈՐ - Կենդանի դիակ:

ՆԱԶԱՐ - Ամբողջ աշխարհը ինձ
ճանաչում է իբրև գրող:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ես քեզ որպես մրող
գիտեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Մի շփվիր Ջոկոն-
դային:

ԾԱՂՐԱԾՈՒ - Նա է ինձ շփվում:

ԿԻՆ - Մի հավատա, Պրոֆեսոր,
ես բարոյական կին եմ:

ՌՌՐ - Բայց կույս չես:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ռոբ, ՌՌՐ ու էլի
Ռոբ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ձեզանից և ոչ մեկը
կույս չէ:

ՀՈՒԴԱ - Դու էլ, Պրոֆեսոր:

ՊՐՈՖԵՍՈՐ - Սկսեմ քեզնից: Արի
կանգնիր բեմի մեջտեղում...
Այստեղ... Երեք քայլ առաջ...
Մեկ քայլ էլ... Լավ է... Հիմա բո-
լորը քեզ տեսնում են, թող իմա-
նան՝ ով ես, որտեղից ես գալիս
և ուր ես գնում:

**Հուդան բեմի մեջտեղում է: Պրոֆե-
սորը պտտվում է նրա շուրջը, ուշա-
դիր գննում:**

ՊՐՈՖԵՍՈՐ - Չորս ձեռք ունես,
մի քանի ոտք, ականջներդ՝ եր-

կար, աչքերդ՝ շղիկ, բերանդ՝
գայլի, խոստովանիք, Հուդան
ես:

ՀՈՒԳԱ - Ես Հուդան չեմ, իմ
անունն է Հուդա: Ծաղրածուի
մեջ Հուդային տես:

ԾԱՂՐԱԾՈՒ - Չհամարձակվես
քեզ նույնացնել ինձ:

ՀՈՒԳԱ - Բա ո՞ւմ նույնանամ:

ԾԱՂՐԱԾՈՒ - Այս կնոջը, որի
անունը Ջոկոնդա չէ:

ԿԻՆ - Նա երբեք իմ կողքին չի
պառկել:

ԾԱՂՐԱԾՈՒ - Նույնացիր Քաջ
Նազարին:

ՀՈՒԳԱ - Այդ էր պակաս:

ՆԱԶԱՐ - Մի Հուդա՞մ էլ չարժեմ:

ՀՈՒԳԱ - Քեզ ձրի էլ տան՝ չեմ
առնի:

ԾԱՂՐԱԾՈՒ - Կարծում եմ, դու և
Ռոբը իրար շատ եք սազում:

ՀՈՒԳԱ - Ռոբ, արի անուններս
փոխենք: Ես՝ Ռոբ, դու՝ Հուդա:

ՌՈՐ - Ազնիվ չես, ես քեզ նման մի
սովորական գող չեմ, ես օրեն-
քով գող եմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Տեսնում ես, ներ-
կաներից ու բացականերից ոչ
ոք չի ցանկանում Հուդա լինել:
Դու ես Հուդա, միայն դու: Խոս-
տովանիք:

ՀՈՒԳԱ - Ես դեռ չեի ծնվել, երբ
հայրս ինձ սառույց տեսնելու
տարավ, նայեց լեռներին, նա-

յեց անտառներին, նայեց լճե-
րին, նայեց վեր ու վար և, սա-
ռույց ծամելով, անունս դրեց
Հուդա, որն իմ սրտով չէր, շատ
կուզեի ՌՈՐ կոչվել:

ՌՈՐ - Ես չեմ խաչել Հիսուսին:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու, Հուդա, դու:

ԿԻՆ - Դու, Հուդա:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու աշխարհի առա-
ջին կաշառակերն ես: Երեսուն
արծաթով մատնեցիր քո ու-
սուցչին՝ Հիսուս Նազովրե-
ցուն, որն ուզում էր խավարի
մեջ ապրող մարդկությանը լու-
սավորել, սեր ու հավատ տալ
նրան:

ՀՈՒԳԱ - Հազար ու հազար տա-
րի է անցել, Պրոֆեսոր, ներիք,
խնդրում եմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Կաշառակերություն-
նը, մատնությունը, դավաճա-
նությունը, կեղծ համբույրն ու
կեղծ երդումը վաղեմության
ժամկետ չունեն, թեկուզ կա-
տարված լինեն միլիոն տարի
առաջ, դրանք մշտապես ժա-
մանակակից են:

ԿԻՆ - Նա ինձ էլ էր կեղծ սիրում,
ես դա ուշ հասկացա, Պրոֆե-
սոր:

ՀՈՒԳԱ - Ես քո անկողինը երբեք
չեմ մտել:

ԿԻՆ - Շատ լավ էլ մտել ես ու
դուրս եկել, զգվելի Հուդա:

ԾԱՂՐԱԾՈՒ - Կաշառակեր:

ՆԱԶԱՐ - Անտաղանդ:

ՌՌՐ - Մանր կաշառակեր... Մարդ էլ քսանմեկերորդ դարում երեսուն արծաթով Հիսուս վաճառի, միլիոն ուզեիր, միլիոն ու միլիարդ:

Ծաղրածուն, Նազարն ու Ռոբը Հուդային տապալում են գետնին, ոտքերի տակ առնում: Հուդան, ծեծվելով, չորեքթաթ սողում է դեպի **Պրոֆետորը**:

ԿԻՆ - Մեղք է, կմեռնի, ես նրան սիրում եմ:

ՀՈՒԴԱ - Ներիր, **Պրոֆետոր**:

ՊՐՈՖԵՍՈՐ - Մի լիզիր ոտքերս...
(Ոտքերով վանում է նրան:)

Վերջապես տղամարդ եղիր:

ՀՈՒԴԱ - Ներիր, խնդրում եմ...

ՊՐՈՖԵՍՈՐ - (կանչում է): Դահիճ, որտե՞ղ ես, Դահիճ...

Գալիս է ռոնացող գայլի դիմակով, սևազգեստ Դահիճը:

ՊՐՈՖԵՍՈՐ - Սրան տար: Դու գիտես՝ ինչ պետք է անել:

Դահիճը Հուդային քարշ է տալիս դեպի աջակողմյան սև վարագույրի ետևը: Թմբկահարությունը տևում է բավականին երկար: Լուռություն: Կրակոց:

ԿԻՆ - (հեկեկալու): Հուդա՛... Ես քեզ կարոտելու եմ...

ՌՌՐ - Սրբիր արցունքներդ, ես եմ Հուդան:

ԿԻՆ - Այս գիշեր արի ծոցս, քեզ նից առնեմ նրա հոտը:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ռոբ, Հուդա, Ռոբ, Ռոբ...

ՊՐՈՖԵՍՈՐ - Կանգնիր բեմի մեջտեղում, Ռոբ, երեք քայլ առաջ, մեկ քայլ էլ:

ՌՌՐ - Ես Հուդան չեմ:

ԿԻՆ - Նա Հուդան է:

ՌՌՐ - Պոռնիկ:

ԿԻՆ - Ընդամենը մեկ քայլ:

ՆԱԶԱՐ - Չլսեցիր... մեկ քայլ:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ռոբ, Քաջ Նազար, Հուդա, Ռոբ...

ՆԱԶԱՐ - Ես Ռոբը չեմ:

ԾԱՂՐԱԾՈՒ - Բա ո՞վ ես:

ՆԱԶԱՐ - Դու էլ ես Ռոբ:

Ռոբը գալիս է բեմի կենտրոն: **Պրոֆետորն** ուշադիր զննում է նրան:

ՌՌՐ - Ինչո՞ւ ես ինձ կասկածանքով նայում: Ես Նազար չեմ, Հուդա չեմ, Ծաղրածու չեմ, ես **ՌՌՐ** եմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Մի օր գնդապետ Աուրելիանոն քեզ սատույց տեսնելու տարավ...

ՌՌՐ - Ես դեռ մորս փորում էի...

ՊՐՈՖԵՍՈՐ - Իմացիր, մայրդ հղիացել էր գնդապետի հետ

գաղտնի շփումից: Այդ ժամանակ երեքդ՝ գնդապետը, մայրդ ու դու, ապրում էիք Մակոնդոյում, որը փոքրիկ մի գյուղ էր ջինջ ու մաքուր ջրերով գետափին:

ՌՌՐ - Հիշեցի:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու բիճ ես:

ՆԱԶԱՐ - Ով բիճ չէ՝ մարդ չի:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ես մարդ եմ, բայց բիճ չեմ:

ԿԻՆ - Բոլորիցդ վախենում եմ, զզվում: Գիշերը չգաք ծոցս, ուզում եմ ինձ հետ լինել՝ ես ու ես:

ՌՌՐ - Քեզ այնքան եմ ցանկանում, որ չեմ կարող չգալ:

ԿԻՆ - Արի և սիրիր ինձ:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ես էլ կգամ: Նազար, դու էլ արի: Երեքով սիրենք այս կնոջը, նույն տեղում և նույն ժամին:

ՆԱԶԱՐ - Հավես չունեմ:

ԿԻՆ - Իմպոտենտ:

ՌՌՐ - Ես իմպոտենտ չեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Երբ ծնվեցիր, մայրդ ու գնդապետը փորձեցին քեզ գետում խեղդել, քեզ նետեցին գետի խոր ջրերի մեջ, քեզնից ազատվելու, որ իրենց սիրավեպը ոչ ոք չիմանա:

ՌՌՐ - Ես լողալով դուրս եկա ափ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դուք մնացիք իրար օտար ու անծանոթ:

ՌՌՐ - Այո, Պրոֆեսոր:

ՊՐՈՖԵՍՈՐ - Երբ հասուն տղամարդ դարձար, մի շոգ ամառ օր բռնաբարեցիր մի գեղեցիկ կնոջ, որը գետափին լվացք էր անում: Նա քո մայրն էր:

ՌՌՐ - Երևի:

ՊՐՈՖԵՍՈՐ - Շուտով էլ գետում խեղդեցիր գնդապետ Աուրելիանո Բունդիային, որը քո հայրն էր:

ՌՌՐ - Երևի, Պրոֆեսոր:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ի՞նչ ազգության ես:

ՌՌՐ - Չգիտեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Այո, քեզ պես հանցագործը ազգություն չունի: Հայրենիք էլ: Դու ամեն տեղ ես, Աֆրիկայում, Հայաստանում, Ամերիկայում, ամեն կողմ: Նույնիսկ թուրք չես: Ես լավ եմ ուսումնասիրել քո կյանքը: Հազարամյակների մեջ կա մի մարդ, որը նման է քեզ, դու՝ նրան:

ՌՌՐ - Ո՞վ է:

ՊՐՈՖԵՍՈՐ - Նայիր հայելուն:

ՌՌՐ - Ապուպապիս է նման: Ոնց որ Բրուտոսը լինի:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու ես Բրուտոսը: Քո երակներում ապրում է Բրուտոսի արյունը: Ազգային ժողովում դու մահացու վերջին հարվածը հասցրիր բարեկամիդ՝ Հռոմի տիրակալ Հուլիոս կեսարին, հիշում ես:

ՌՌՔ - Նա պետք է մեռներ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Որ դու գայիր իշխանության:

ՌՌՔ - Հանուն Հոռմի:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ոչ, Բրուտոս, հանուն քո անձնական շահի: Քո սիրտը երագում էր կեսար դառնալ ամեն գնով: Արյունոտ են քո ձեռքերը: Հազարավոր տարիները քեզ քիչ եղան մաքրվելու մարդասպան արյունից: Արյունով ես եկել այս աշխարհ ու արյունով էլ կգնաս: Դու պատմության էջերում հիշվելու ես որպես արյունոտ Բրուտոս: *(Կանչում է:)* Դահլճ, ի՞նչ ես անում այդտեղ, սո՛րճ ես խմում: Սուրճի ժամանակը չէ: Ես ժամանակ չունեմ: Սուրճը արագ խմիր և արի Բրուտոսին տար: Դու քո գործը լավ գիտես, ազնիվ դահլճ:

ՌՌՔ - Չէ, Պրոֆեսոր:

ՊՐՈՖԵՍՈՐ - Վախենում ես մահից: Այնքան շատ փող ունես, հյուրանոցներ, բանկեր, դղյակներ, ամառանոցներ, կղզիներ համաշխարհային ծովերում, Սևանը ո՞ւմն է, խոստովանիր, ժողովրդինը չի, քոնն է, վախենում ես մեռնել և այդ ամենը մնա պետությանը:

ՌՌՔ - Պետությունը ես եմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու կրկնում ես

Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս տասնչորսերորդին:

ՌՌՔ - Լյուդովիգն է ինձ կրկնում:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ես դադարեցնում եմ քո հավերժությունը:

Հայտնվում է սևազգեստ, գայլի դիմակով Դահլճը և Ռոբին քարշ տալիս դեպի ձախակողմյան սև վարագույրի ետև:

ԿԻՆ - *(նրանց ետևից մի քանի քայլ է հեկեկալով վազում ու ծնկի գալիս):* Բրուտոս, սիրելիս, քեզ չեմ սիրում... Այս գիշեր քեզ սպասելու եմ, ննջարանիս դուռը զգուշորեն թակիր երեք անգամ, ես կհասկանամ, որ դու Ռոբն ես...

ԾԱՂԲԱԾՈՒ - Ռոբ, Ռոբ, Ռոբ...

Թմբկահարություն: Լռություն: Կրակոց:

ԿԻՆ - Հուլիոս կեսար, սիրելիս... Այս գիշեր ես կգամ քո ննջարանը, դուռը բաց թող, որ անձայն ներս մտնեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Կանգնիր, կնոջը սազական չէ սողալ տղամարդու ոտքերի առջև:

ԿԻՆ - *(ոտքի ելնելով):* Ես Հուլիոս ու Բրուտոս չեմ, նրանց երբեք չեմ սիրել:

ԾԱՂԲԱԾՈՒ - Մի դատիր նրան:

ՆԱԶԱՐ - Դատիր նրան:

ԿԻՆ - Իմ մարմինը մաքուր է:

ՆԱԶԱՐ - Մի հավատա, Պրոֆեսոր, նա բոլորիս հետ էլ պատկել է:

ԿԻՆ - Իմպոտենտ:

ՆԱԶԱՐ - Լսեցի՞ր, Պրոֆեսոր, նա իմ տակ էլ է պատկել: Խոստովանի՞ր, պոռնիկ:

ԿԻՆ - Ես կոյս եմ:

ՆԱԶԱՐ - Բոլոր պոռնիկները կոյս են ձևանում:

ԿԻՆ - Դու էլ գիտես, Պրոֆեսոր, ոչ մի տղամարդ ինձ չի տիրացել, նույնիսկ դու, որին մեկ ժամ է՝ սիրահարված եմ:

ԾԱՂՐԱԾՈՒ - Նրան մի դատիր, Պրոֆեսոր, նա քեզ սիրահարված է:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ես որոշել եմ ճշմարիտ ու անանձնական վճիռ կայացնել, որ, վերջապես, արդարանամ իմ և պատմության առջև, հանգիստ խղճով հեռանամ այստեղից:

ՆԱԶԱՐ - Ինձ էլ տար, Պրոֆեսոր, ուր էլ գնաս՝ քեզ հետ կգամ, թեկուզ դժոխք:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ապուշ:

ԿԻՆ - Ես անմեղ եմ, Պրոֆեսոր, անմեղ ու անմեղ, ինչո՞վ երդվեմ, որ հավատաս:

ՊՐՈՖԵՍՈՐ - Լուռ երդվիր, ոչ ոք չլսի:

ԿԻՆ - Միայն մեկ, ընդամենը մեկ

անգամ եմ եղել տղամարդու տակ, երբ աղջնակ էի: Դա հագար տարի առաջ էր, գյուղաքաղաք Մակոնդոնում: Գնդապետ Աուրելիանոն ինձ տարավ ձյունոտ լեռները՝ սառույց ուտելու: Սառույցը շատ սառն էր ու քաղցր, և ես չիմացա՝ ինչպես դա պատահեց:

ԾԱՂՐԱԾՈՒ - Նա անմեղ է, Պրոֆեսոր, մի դատիր, եթե նույնիսկ քեզ սիրահարված չէ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Անկեղծ ասած, ներքին մարդս ուզում է՝ նրան չհանձնեմ դահճին, ներքին մարդս սիրում է նրան, բայց պատմությունը, որի վկաներն ու մասնակիցներն եք նաև դուք, անվերջ կրկնում է՝ ճշմարիտ դատիր ու դատապարտիր, ճշմարտությունն ասա: Ցանկանում եմ կյանքումս գոնե մեկ անգամ պատմության ազնիվ ու հարազատ ծառան լինել: Կին, դու պոռնկացրել ես բյուրավոր մարդկանց, դու Հուդայից, Բրուտոսից, Ռոբից պակաս չես, գուցե՝ ավելի մեծ հանցագործ: Պիտի մեռնես, որ աշխարհը մաքրվի, որ աշխարհը սիրի պատմություն, արվեստ, փիլիսոփայություն, ճշմարտությունը հաղթի, և ոչ՝ սուտն ու կեղծիքը: Պիտի մեռ-

նես ու վերանաս: Խղճա աշխարհին: Գնա: Մեռիր: Ես քեզ սիրում եմ, բայց դատապարտում եմ մահվան: Մեռիր: *(Կանչում է:)* Դահիճ...

ԾԱՂՐԱԾՈՒ - Նա անմեղ է, Պրոֆեսոր, ես նրան նույնիսկ մատով չեմ կպել: Ետ առ վճիռդ: Նա արժանի է ավելի երկար ապրելու, քան ես:

ՊՐՈՖԵՍՈՐ - Լորի, Ծաղրածու:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ինձ սպանիր նրա փոխարեն: Կին, ես մեռնեմ՝ դու ապրիր:

ՊՐՈՖԵՍՈՐ - *(կանչում է):* Դահիճ... Հերիք է սուրճ խմես...

Գալիս է գայլի դիմակով, սևագետտ Դահիճը՝ սուրճի գավաթը ձեռքին: Մի կողմ է նետում գավաթը: Հանում է դիմակը: Աներևակայելի գեղեցկության տեր աղջիկ է: Հանում է սև թիկնոցը և մնում կապույտ-թափանցիկ շրջագգեստով:

ԾԱՂՐԱԾՈՒ - *(շփոթված):* Ռոբ, Ռոբ, Ռոբ...

ՆԱԶԱՐ - Օ՛հ... Գժվեցի: Ափսոս, չեմ կարող բռնաբարել, հազար ափսոս:

ԿԻՆ - Իմպոտենտ:

ԾԱՂՐԱԾՈՒ - Լուսամփոփի պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով, կապույտ աղջիկ:

ԴԱՀԻՃ աղջիկ - Բանաստեղծ ես:

ԾԱՂՐԱԾՈՒ - Ոչ:

ԴԱՀԻՃ աղջիկ - Դու մեծ բանաստեղծ ես, եթե ինձ այդպես տեսար:

Դահիճ աղջիկն ու Կինը միմյանց փարված անցնում են աջակողմյան սև վարագույրի ետև: Թմբկահարություն: Շատ երկար լուռություն է տիրում: Կրակոց:

ՆԱԶԱՐ - Տեսնես նրանցից ո՞վ մեռավ: Գնամ երկուսին էլ բռնաբարեմ: *(Քայլ է անում դեպի վարագույրը:)*

ԾԱՂՐԱԾՈՒ - *(նրան կանգնեցնելով):* Դու էլ շուտով կմեռնես:

ՆԱԶԱՐ - Ես ոչ մեկին չեմ սպանել: Ընդամենը անտաղանդ իմպոտենտ եմ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ողջերի թշնամի և մեռելների սիրահար:

ԾԱՂՐԱԾՈՒ - Կինն անմեղ էր: Դու սխալվեցիր, Պրոֆեսոր, նրան մահվան դատապարտելով:

ՊՐՈՖԵՍՈՐ - *(խիստ շփոթված):* Ոչ, ի՞նչ ես խոսում, ոչ...

ԾԱՂՐԱԾՈՒ - Մի հանցագործ էլ դու ես:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ես կայացրի միակ ճշմարիտ վճիռը: Հիմա հանգիստ կարող եմ նայել պատմության աչքերին: Հեյ, Դահիճ...

Գալիս է Դահիճ աղջիկը:

ՊՐՈՖԵՍՈՐ - Քաջ Նազարին տար կորցրու, աշխարհը մաքրվի կեղծ թագավորներից: Ես առողջ աշխարհ եմ ուզում տեսնել:

ԴԱՀԻՃ աղջիկ - Նազար Ռոբի Նազարյան, ես քեզ հետ գործ չունեմ: Գնա վարագույրի ետևն ու ինքնասպան եղիր:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դե գնա:

ՆԱԶԱՐ - Ոնց կասեք: Շատ եմ հոգնել իմ անտաղանդ ու իմ պոտենտ կյանքից: *(Հեռանում է:)*

ԾԱՂՐԱԾՈՒ - Քանի դեռ դու կա քո սուտ պատմությամբ՝ աշխարհը չի առողջանա: Այժմ դու գործեցիր ևս մի աններելի հանցանք: Աստվածամոր աչքերով այս կապույտ աղջկան կարգեցիր դահիճ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Ո՛ւմ եմ սխալ դատապարտել, ասա, Բրուտոսին, Հուդային, Ռոբին... Մի լոիր, ասա, ո՞ւմ...

ԾԱՂՐԱԾՈՒ - Կնոջը:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու սիրում ես նրան:

ԾԱՂՐԱԾՈՒ - Իսկ դո՞ւ...

ՊՐՈՖԵՍՈՐ - Այո... Բայց...

ԾԱՂՐԱԾՈՒ - Պատմաբանը իրավունք չունի սխալ խոսել:

ՊՐՈՖԵՍՈՐ - Դու էլ ես մեռնելու:

ԾԱՂՐԱԾՈՒ - Դու սպանեցիր կին երևույթը, դու պակաս հանցագործ չես, քան Բրուտոսն ու Հուդան: Հիմա դ՛ր մի հանցանքդ ասեմ ու չասեմ: Դու թշնամի ժողովուրդների սուտ ու կեղծ բարեկամություն քարոզեցիր: Մարդկության սատանա հոր անունով դու չէիր երդվում: Դու, պրոֆեսոր, երբ դեռ ուսանող էիր, մատնություններ էիր թխում քո ազնիվ դասախոսների դեմ: Օ՛հ, քիչ էր մնում մոռանալի, դու հարևանիդ քչեցիր սպիտակ արջերի երկրամաս՝ անկաշկանդ շփվելու նրա կնոջ հետ, որը քեզնից զգվում էր: «Սոցիալիստական արդյունաբերության ու գյուղատնտեսության» օրինակով՝ դու ստեղծեցիր «Սոցիալիստական գրականություն ու արվեստներ» և դարձար գիտությունների դոկտոր: Դու մարդ ես, որովհետև միայն մարդը կարող է քեզ նման լինել, բայց մարդ չես, Պրոֆեսոր, դժվարանում եմ քեզ նույնացնել որևէ կենդանու հետ, նույնիսկ՝ բորենու: Սրանից հետո մի՞թե կարող ես հանգիստ ապրել: Կանցնեն շատ տարիներ, դար ու դարեր և, գնդակահարության պատի տակ կանգնած, դու

կհիշես այն օրը, երբ հայրդ քեզ սատույց տեսնելու տարավ:

ՊՐՈՖԵՍՈՐ - Մի պղտորիի հոգիս: *(Լռությոնն:)* Գուցե սատույց չեմ տեսել:

ԴԱՇԻՃ աղջիկ - Ես դուրս եմ գալիս այս ներկայացումից: Ուզում եմ մենակ լինել, ինձ հետ: Ատում եմ բոլորիդ: Խաղաղ օվկիանոսում կա մի անմարդաբնակ կղզի: Այնտեղ ապրում են աշխարհի ամենագեղեցիկ ու բուրավետ ծաղիկները: *(Դանդաղ հեռանում է:)*

ՊՐՈՖԵՍՈՐ - Սպասիր, ես էլ եմ գալիս:

ԾԱՂՐԱԾՈՒ - Դու ոչ մի տեղ չես գնա, Պրոֆեսոր: Կանգնիր մահվան պատի տակ: *(Վերցնում է որսորդական հրացանը, փողն ուղղում Պրոֆեսորի վրա:)* Վերջին խոսքդ ասա:

ՊՐՈՖԵՍՈՐ - *(բաճկոնի արտաքին գրպանից հանում է սև թիթեռ փողկապը, հազցնում է*

պարանոցին): Կրակիր, ռմ ես սպասում... Կրակիր, Կին, կրակիր, աղջիկ... Ես չգիտեմ սատույցի համը, ես ոչինչ չգիտեմ... Դե, կրակեք:

ԾԱՂՐԱԾՈՒ - *(կրակում է, Պրոֆեսորը փասպավում է գեյրնին):* Բոլորը ճիշտ ու սխալ մեռան: Ես պատահաբար ապրեցի՝ ճշմարիտ կյանքը պատմելու ձեզ: *(Խոնարհվում է:)*


Հանդիսատեսը ոտքի է ելնում ու անդադար ծափահարում: Սուլում են: Բռավճ... Բռավճ...

ԾԱՂՐԱԾՈՒ - *(բեմից ցատկում է հանդիսատեսի):* Գնամ թատրոնի սրճարանում սիգարետ ծխեմ ու մի շիշ սատը գարեջուր խմեմ, այնքան ավել-պակաս խոսեցի, որ մեջքիս շոգ քրտինք պատեց ու կոկորդս չորացավ: Չցրվեք, քիչ հետո կվերադառնամ: *(Վազելով դուրս է գալիս դահլիճից:)*

**Ավելի բուն ծափահարություններ:
Բեմական վարագույրը չի փակվում. նշանակում է՝
ներկայացումը վերջ չունի:**

2021 թ.

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



Գուրգեն
ԽԱՆԶՅԱՆ

Հայկ նահապետի արձակած նետը պատռեց Բեյի կուրծքը, սակայն Բեյին սպանելով՝ Բեյի մասին չէր նրա ընթացքը, Բեյն ընդամենը առիթ էր, նետը թափանցավ նրան՝ ետ թողեց և շարունակելով պանսալ՝ իր պացքի շվվոցով ազդարարեց ի լուր աշխարհի՝ մենք ենք, հայերս, եկել ենք՝ մեր ոտքն այս երկրագնդի հողին ամուր զարկելու-դաջելու, մեր տեղն ու ճանապարհը նշելու:

Ուզեցի մասնակից լինել չորսհազարամյա այս նշանավոր, հմայող-հրապուրող իրադարձությանը, գոտա ձևը՝ գնացի և էնտեղից բերեցի այս պիեսը... Ես հավատում եմ, որ էնտեղից է, մնում է՝ դուք էլ հավատար:

ԹՈՐԳՈՄԱ ՏՈՒՆ. ՀԱՅԿ

(պատմաստասպելյական դրամա երկու արարվածով)

Գործող անձինք

ՀԱՅԿ - դյուցազուն, գանգուր, խարտյաշ, վառվռուն
աչքերով, հաղթանդամ, վայելչակազմ

ԲԵԼ - թխամաշկ աժդահա

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Հայկի ավագ որդին

ԽՈՌ - Հայկի որդին

ՄԱՆԱՎԱՋ - Հայկի որդին

ԿԱԴՄՈՍ - Հայկի որդին

ՓԱՌՈՒԽ - տարեց, Թորգոմա տան ավագ

ՍՈՍԻ - Փառուխի թոռնիկը, ջահել գեղեցկուհի

ԴԱՏ - ավագանի, տարեց

ՍԼԱՔ - ավագանի, տարեց

ՀՌՈՒԴԵ - օձահմա, փոքրոգի, նենգ,
Թորգոմա տան զարմից

ՀՈՒԼՈՒՆ - Հռուդեի կինը

ՍԻՐԱԹ - Հռուդեի օգնականը

ԾԱՌԱ - Բելի ծառան

ՏԻՓՈՆ - Բելի պատգամախոսը

ՇԻՄԱՐ - պարուհի, որ Տիփոնի հետ է ուղարկված

ԿԱՅՊԱԿ - պատանի ըմբշամարտիկ

ԲԱՋ - պատանի ըմբշամարտիկ

Հայկի տան երկու կանայք

Բելի չորս որդիները

Թորգոմա Տան բնակիչներ՝ տղամարդիկ, կանայք

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ 1

Հայկն իր երեք որդիների՝ Արամանյակի, Խոռոի, Մանավագի հետ վերադառնում է որսից, մորթե ու կաշվե հագուստներով են, նետ-աղեղներով, տեգերով զինված: Որդիներից երկուսը ուսերին հենած ձողից կախ՝ գոմեշի մարմին են բերում: Նրանց ընդառաջ է գալիս Բելը՝ իր չորս որդիների հետ, հագուստը պաճուճավոր է, սաղավարտով է, զինված են նիզակներով:

ԲԵԼ - Բարի տեսանք աղեղնավոր Հայկին:

ՀԱՅԿ - Ողջույն Բելին:

ԲԵԼ - Այդքամը:

ՀԱՅԿ - Տիտանյան Բելին: *(Տեսնելով Բելի հարցական սպասումը:)* Իմ եղբայր Բելին:

ԲԵԼ - Ու վերջ:

ՀԱՅԿ - Վերջ: Հերիք չի:

ԲԵԼ - Տեսնում եմ՝ հաջող է եղել որսդ, արևը դեռ վերին կետից չանցած՝ գոմեշ ես որսացել:

ՀԱՅԿ - Ձահեղ, անփորձ գոմեշ էր, ընկել էր մեր փորած փոսի մեջ, պոզերով հողերն էր քանդում, որդիներս հանգստացրին:

ԲԵԼ - Փոսեր ես փորում աջ ու ձախ, որտեղ ուզես:

ՀԱՅԿ - Իմ կալվածքն է, ուզեմ՝ կփորեմ, չեմ ուզի՝ չեմ փորի:

ԲԵԼ - Սակայն մի՞թե չգիտես, որ Բաբելոնում ոչ ոք կալվածքի լիիրավ տեր չէ այլևս, ես եմ տերը ամբողջի, առանց իմ թույլատվության ոչ մի տեղ ոչինչ փորել չի կարելի, ու ոչ էլ որս անել:

ՀԱՅԿ - Կատակո՞ւմ ես:

ԲԵԼ - Արի առանձնանանք: *(Առաջ են գալիս Հայկի հետ:)* Լսի՛ր, Հայկ, ամբողջ Բաբելոնն է ինձ ենթարկվում: Բոլոր մեծ ու փոքր ցեղերը, գերդաստանները երկրպագում են ինձ որպես թագավորի և Աստծու, բացի մեկից, և այդ մեկը դու ես, իմ եղբայրը, իմ կրտսեր եղբայրը:

ՀԱՅԿ - Ես հարգում եմ ավագութունդ, Բել, բավարարվիր այդքանով:

ԲԵԼ - Չէ, Հայկ, ես թույլ չեմ տա, որ իմ երկրում լինի մեկը, ով չենթարկվի ինձ, այդպես չի լինի, մյուսները դա կտեսնեն ու իրենց մեջ կասկած կընկնի, կասեն՝ ուրեմն այնքան էլ մեծ չէ Բելը, եթե Հայկը հակառակվում է նրան: Վերջապես աստվածները պիտի ընդունեն, որ ես էլ աստված եմ իրենց պես, իրենց հավասար, ո՞նց ընդունեն, եթե մի ինչ-որ Հայկ չի ենթարկվում, չի երկրպագում. ու-

զում ես ծաղրեմ ինձ՝ Բելիս:

ՀԱՅԿ - Իմ ենթարկվելն ու երկրպագելը պարտադիր չեմ համարում, Բել, առանց ինձ լեզու գտիր աստվածների հետ, ինձ մի խառնիր ձեր գործերին:

ԲԵԼ - Ես աշխարհակալ տերություն եմ հավաքում, ես նորից շինելու եմ մեծ աշտարակը՝ ի հեճուկս աստվածների, որ քանդեցին, ավերեցին այն, ես միավորելու եմ աստվածների խառնած լեզուները, իմ երկրում բոլորն իմ լեզվով են խոսելու:

ՀԱՅԿ - Միթե ես նույն քո լեզվով չեմ խոսում:

ԲԵԼ - Քիչ է, քիչ է, Հայկ: Ինձ միասնություն է հարկավոր, միասնության մեջ է ուժը, սակայն միասնության համար ենթակայություն է անհրաժեշտ, մեկը պիտի իշխի, և այդ մեկը ես եմ: Իսկ դու քո որսած գոմեշի պես պոզերդ դեմ ես տվել, հակառակվում ես: Մեղմիր հպարտությունդ ու խանդդ, ծնկի եկ մեծն Բելի առաջ, ճանաչիր նրա գերագույնությունը... Եվ այն ժամանակ ինչքան կուզես հորեր փոքի քո կալվածքում, որս արա:

ՀԱՅԿ - Ես խանդ չունեմ, Բել, ես կոհիվ չունեմ քո դեմ, ես միայն

ուզում եմ իմ գերդաստանի, իմ հողերի տերն ու պաշտպանը լինել, ես ուզում եմ հաշտ ապրել քեզ հետ, հավասար-հավասարի, դու՝ քեզ համար, քո մեծ տանը, ես՝ ինձ համար, իմ փոքր տանը, ինձ հանգիստ թող ու գնա խաղաղությամբ:

ԲԵԼ - Չեղավ, չեղավ, Հայկ, հավասար-հավասարի չի լինի, դու հավասար չես ինձ ու պիտի հրապարակավ ընդունես դա: Բաբելոնում ինձ չենթարկվող չի լինելու, չեմ հանդուրժի:

ՀԱՅԿ - Ես իմն ասացի, Բել, դու քոնն արա՝ ոնց ճիշտ ես համարում:

ԲԵԼ - Եվ կանեմ, չկասկածես, Թևավոր Ցուլը վկա: *(Որդիներին.)* Գնացինք:

Բելը հեռանում է իր որդիների հետ:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Հայր, կուզես եղբայրներով հասնենք, ես գոմեշի օրը գցենք դրանց:

ՄԱՆԱՎԱԶ - Ճիշտ ա...

ՀԱՅԿ - Սպասեք, այ տաքգլուխներ... *(Խոռոհն.)* Ո՞ր, այ տղա, ետ արի: Ամեն բան՝ իր ժամին, դեպքերից առաջ չընկնենք:

Հեռանում են:

ՏԵՍԱՐԱՆ 2

Թորգոմա տուն: Փառուխ, Դաս,
Սլաք, Հոռուե, Սոսի:

ՓԱՌՈՒԻՍ - Հարգարժան հայրեր,
երևի կռահում եք, թե ինչու եմ
կանչել ձեզ:

ԴԱՏ - Կռահում ենք, այո:

ՍԼԱՔ - Ես չեմ կռահում, իմ տու-
նը հեռու է, ծայրամասում, շատ
տեղյակ չեմ ձեր կենտրոնի ան-
ցուդարձերին:

ՓԱՌՈՒԻՍ - Հուսով եմ, գոնե տեղ-
յակ ես, որ Թորգոմա տունը վա-
ղուց արդեն տանուտեր չունի:

ՍԼԱՔ - Մի՞թե:

ԴԱՏ - Կատակում է Սլաքը:

ՓԱՌՈՒԻՍ - Հասկանում եմ, որ
կատակում է, ինքս էլ կատակ-
ների կտրվեի հաճույքով, բայց
մեր տան վիճակը լրջություն է
պահանջում, դանակը ոսկորին
է հասել, տղերք:

ՍԼԱՔ - Լավ ասաց՝ տղերք:

ԴԱՏ - Դե, տղա ենք, էլի, հո աղ-
ջիկ չենք:

ՓԱՌՈՒԻՍ - Ես, Փառուխս, որպես
ձեր կողմից ընտրված ավագ,
կառավարում եմ, այո, բայց
տարիքս ժամ առ ժամ առա-
ջանում է, ամեն բան չէ, որ տե-
սանելի է ինձ, և խստությունս է
կակղել, և վճռականությունս է
հապաղող դարձել:

ԴԱՏ - Առաջնորդ է անհրաժեշտ,
պարզ է, հասունացել է:

ՓԱՌՈՒԻՍ - Այո, անհրաժեշտ է:
Սակայն, գիտեք, տկարացած է
Թորգոմա տան կորովը, թշնա-
միների հաճախացած ասպա-
տակումները մաշել են մեր դյու-
ցագնական զարմը, հարևան
ցեղերն առևանգում են մեր լա-
վագոյն մանչերին ու աղջիկ-
ներին, տանում՝ իրենց արյունն
են թարմացնում-ուժեղացնում:

ՍԼԱՔ - Մեզ հզոր առաջնորդ է
պետք, Թորգոմի, Գամերի,
Թիրասի նման, որ վերածնվի
տունը, որ նորից լցվի հաղթա-
կան ոգով ու խանդավառությ-
ամբ:

ՓԱՌՈՒԻՍ - Այո, սակայն ցավոք՝
ունենք այն, ինչ ունենք:

ԴԱՏ - Իսկ ի՞նչ ունենք:

ՓԱՌՈՒԻՍ - Կարելի է ասել՝ ոչինչ:
Եղածը նվազ է, ընտրության
հնարավորություն չի տալիս:
Հո Հոռուեին չէ՞նք ապավինե-
լու:

ՍԼԱՔ - Հոռուե՞ն, օճահման:

ԴԱՏ - Այն խարդախ սուտասանը:

ՍԼԱՔ - Նրա ոգին նվաստ է,
ձեռքն ու ոտքը՝ նվազ, նա իսկի
մի երինջ չի կարող տապալել,
մեր մեծ տանը ո՞նց է պաշտ-
պան կանգնելու:

ԴԱՏ - Պատկերացնում եմ՝ հզո-
րաբազուկ Հոյից հետո՝ Հոռու-
ե... Մենք մեր ձեռքով մեր
տունը հո չէ՞նք քանդելու:

ՓԱՌՈՒԽ - Մոռանանք Հոռուդին, հայրեր, անլուրջ բանի վրա չծախսենք մեզ:

Ներխուժում է Հոռուդին:

ՀՌՈՒԳԵ - Մոռանանք... Էդ ո՞նց եք մոռանում... չկա՞ Հոռուդին, մեռել է... Ահա, Հոռուդին, ձեր առջև կանգնած է, լավ նայեք, տեսա՞ք... Թուլամիտ գառամ-յախներով հավաքվել՝ տան ճակատագիր են որոշում: Ես եմ Թորգոմա տան շավիղի շարունակողը, իմ հերթն է առաջնորդության. մտեք մարդկանց մեջ, հարցուփորձ արեք, կասեն՝ Հոռուդին է մեր առաջնորդը, նրան ենք ուզում:

ԴԱՏ - Մուտ է խոսում:

ՍԼԱՔ - Մի երկու հիմարի շահագրգռել, խելքները կերել է երևի...

ՓԱՌՈՒԽ - Քեզ՝ առաջնորդ... *(Ծիծաղում է:)* Այդ ո՞վ է խելքը գցել, որ ցանկանա քեզ առաջնորդ տեսնել, երևի միայն Սիրաթն ու Հուլունը, չէ՞:

ՀՌՈՒԳԵ - Ի՞նչ ես փտած ատամների բացել՝ ծիծաղում, մի ոտդ արդեն այն կողմում է, փոխանակ լաց լինես...

ՍԼԱՔ - Փառուխ, թող ես սրա ականջները պոկեմ, որ էլ ականջ չդնի դռան ետևից:

ՀՌՈՒԳԵ - Լավ եմ անում՝ ականջ եմ դնում, բա չէ, թողնեմ ձե-

զուգլուխ որոշումներ կայացնեք, տունը կործանման տանեք:

ՓԱՌՈՒԽ - Դռան ետևում ականջ դնող առաջնորդ տեսած կա՞ք, հայրեր:

ԴԱՏ - Վայ մեզ, եթե սրա հույսին մնաց տունը:

ՍԼԱՔ - Փառուխ, ասում եմ՝ թող, մի լավ քրթակեմ սրան, ուժս լիովի կբավի:

ՀՌՈՒԳԵ - Մոտ չգաս... օձերիս կթողնեմ տանդ վրա:

ՓԱՌՈՒԽ - Դուրս արի՛, տղա՛, թե չէ իսկապես կքրթակենք:

ՀՌՈՒԳԵ - Գնում եմ, իմ կամքով և ո՛չ ձեր սպառնանքից ահաբեկված, ձեզ հետ երկար մնալը մի շատ հաճելի բան չէ: Բայց լավ մտածեք, էն մնացորդ խելքներդ ժողովեք ու մտածեք: Ու չմոռանաք, որ Թորգոմի ոգին իջել է երկնքից ու մատը դրել իմ վրա, տեսնող է եղել. կպատժի ձեզ Թորգոմը, դաժան կպատժի: *(Դուրս է գալիս:)*

ՍԼԱՔ - Սպառնում էր մեզ, տեսա՞ք, մեզ՝ ավագանուն:

ՓԱՌՈՒԽ - Մոռանանք խելկատակին, դառնանք մեր խնդրին:

ԴԱՏ - Ի՞նչ ենք անելու, Փառուխ, եթե կանչել ես՝ փայփայած միտք ունեն երևի:

ՍԼԱՔ - Ունի, աչքերի մեջ եմ տեսնում:

ՓԱՌՈՒԽ - Կա միտք, այո, չեք
 սխալվում: Սակայն կոկորդ-
 ներս չորացավ, գարու ջուր
 խմենք, այնուհետև կհայտնեն:
(Կանչում է:) Մոսի՛, թոռնիկս,
 մեզ գարու ջուր բեր:

ՍԼԱՔ - Այդ խեղկատակի պապն
 էլ իս էր, Գլակը, կհիշեք:

ԴԱՏ - Օձի կծածից մեռավ, իր
 տան պահապան օձն էր կծել:

ՓԱՌՈՒԽ - Օձն էլ էր զգվել նրա-
 նից:

ԴԱՏ - Տանուտեր Հոյը ժամանակ
 առ ժամանակ փայտով ծեծում
 էր այդ Գլակին, հիմնականում՝
 անառիթ, ասում էր՝ ժամով է,
 ժամը եկել է՝ պիտի ծեծվի, որ
 իր չափերը ճանաչի, խարդա-
 վանքներ չսփռի շուրջը:

Գալիս է Մոսին, կծով գաբեջուր է
 բերում ու երեք գավաթ:

ՍՈՍԻ - *(գավաթները լցնելով):*
 Անուշ արեք:

ՓԱՌՈՒԽ - *(Մոսիին):* Տղաներին
 ասա, որ դրան մոտ լինեն, ոչ
 ոքի մոտ չթողնեն:

ՍՈՍԻ - Կասեմ, ինքս էլ կհսկեմ:
(Դուրս է գալիս:)

Խմում են:

ՍԼԱՔ - *(Փառուխին):* Դե ասա վեր-
 ջապես:

ՓԱՌՈՒԽ - Կհիշեք գուցե, եղբորս՝
 Թակլադի ընտանիքում մի

ժիր, առյուծի ձագի պես ուժեղ
 ու համարձակ մանչ կար Հայկ
 անունով:

ԴԱՏ - Աղոտ եմ հիշում:

ՍԼԱՔ - Ես հիշում եմ, նոր ոտքի
 կանգնած՝ նետ-աղեղը ձեռքին
 էր մշտապես:

ԴԱՏ - Հիշեցի, բութ մատս կծել էր
 չարածնին, ուզեցի գայլի ճու-
 տը ձեռքից առնեմ՝ կծեց, ահա,
 սպին, մնում է:

ՓԱՌՈՒԽ - Բաբելացի ավազակ-
 ները առևանգեցին նրան,
 շատ էին հավանել, մեծ փողեր
 առաջարկեցին, մերոնք, բնա-
 կանաբար, մերժեցին, նրանք
 էլ պատեհություն որսացին ու
 առևանգեցին:

ՍԼԱՔ - Հիշում եմ այդ պատմութ-
 յունը, Գլակի մատը խառն էր
 ոնց որ, բայց ապացույց չկար:

ՓԱՌՈՒԽ - Ես գտել եմ Հայկին,
 Բաբելոնում է, երևելի դյու-
 ցազն է, Բելի կրտսեր եղբայ-
 րը, այդպես են կարգել պատ-
 մությունը, մանկուց իրար հետ
 են մեծացել, բայց իմացել եմ՝
 հիմա հակառակվում է, չի են-
 թարկվում Բելին, որ թագա-
 վորն է Բաբելոնի:

ԴԱՏ - Անունն ինչ է հիմա:

ՓԱՌՈՒԽ - Ոնց կար՝ մնացել է,
 Հայկ: Պատմում են, որ ուզել են
 փոխել, սակայն ոչ մի ուրիշ ան-
 վան համառորեն չի արձագան-

քել, թողել են: Պետք է բերել Հայկին, տղերք, նա Թորգոմա տանը արժանի առաջնորդ կլինի, իսկական տանուտեր. որդիք ունի մեկը մյուսից հզոր ու վայելչատես, մեծ գերդաստան ունի՝ երեք հարյուրի չափով: Հայկը նոր շունչ կտա Թորգոմա տանը:

ԴԱՏ - Այո, սակայն կգամ, կթողնի՞ հարուստ Բաբելոնը հանուն հեռավոր ու անհայտ ինչ-որ տան:

ՓԱՌՈՒԽ - Անհայտ չի, իր տունն է, իր հայրերի տունը:

ՍԼԱՔ - Կարծում եմ՝ իր տունը Բաբելոնն է այլևս, մանկության տունը իսկի չի էլ հիշի, որտեղի՞ց, երեք տարին նոր էր բռնրել:

ՓԱՌՈՒԽ - Հավաստի աղբյուրներից գիտեմ՝ լուրջ հակառակություն ունի Բելի հետ, չի ենթարկվում, առանձնացած է ապրում իր գերդաստանով: Սա լավ կռվան է մեզ համար:

ԴԱՏ - Սակայն հմուտ խոսք վարող է պետք, ղվ է ունակ:

ՓԱՌՈՒԽ - Մենք, երեքով, հայրեր, ուրիշը չկա:

ՍԼԱՔ - Բաբելոնը մոտիկ չէ, Փառուխ, երկար, դժվարին ճանապարհ է, իմ եռանդը չի պատի, ահա, ձախ ոտքս կադին է տալիս, փայտի օգնությամբ եմ

քայլում...

ԴԱՏ - Իմ տնից քո տուն դժվար հասա, շունչս հատում էր, հին վերքերս վերածնվել՝ տնքում են անդադար...

ՓԱՌՈՒԽ - Խնդիրն ավելի կարևոր է, քան մեր մարմինը, եղբայրք, Թորգոմա տան գոյատևության խնդիրն է, մեր տան խնդիրը: Ես կգնամ: Տվեք ձեր համաձայնությունն ու բարեմաղթանքը. միայն իմ որոշումը քիչ է, տան ավագանին պիտի կարգադրի:

ԴԱՏ - Չգիտեմ... Հանկարծ նրան համոզել չստացվի ու դու էլ պակասես մեզնից, մասնք երկուսով՝ ես ու Սլաքը, երկուսով չենք զորի մեծ տան հոգսը, Փառուխ:

ՓԱՌՈՒԽ - Երեքով էլ չենք զորի այլևս՝ եթե հզոր առաջնորդ չկարգենք, թարմ արյուն չներարկենք մեր տան սմբող անոթներին:

ՍԼԱՔ - Բարի, գնա, մեր տան նախնյաց ոգիները քեզ պահապան:

ԴԱՏ - Գնա: Եվ թող հաջող լինի ձեռնարկը:

Գավաթները միմյանց են զարկում:

ՏԵՍԱՐԱՆ 3

Հոուդեի սուներ, կողովներ ու կճուներ, որոնց մեջ՝ օձեր:

Հոուդե, այնուհետև՝ Հույուն և Սիրաթ:

ՀՌՌԻԳԵ - *(կողովից օձ հանելով):* Արի, արի, սիրունս... Մի ֆշշացրու, ես եմ... Ճանաչեցի՞ր... Ապրես, ապրես: Ինչ ասում են՝ իսկ օձահմա, օձերին հմայում, բնից հանում է, խաղում՝ մարդ զարմացնում, հետո էլ մորթում՝ կաշվից գոտի, քիսիկ պատրաստում: Ճիշտ են ասում, ես կարողանում եմ օձերին հմայել, խաբել՝ բներից հանել, գոտի էլ եմ սարքում ձերացած, անպետքացած օձերի կաշվից, երբեմն միսն էլ եմ ուտում, հա, պատրաստելու ձևն իմանաս՝ անմահական կերակուր է: Բայց իրենք չգիտեն, որ իմ հիմնական նպատակը օձերին կթելն է... Այ, այսպես... *(Գավաթ մուրեցնելով օձին:)* Օձիկիս ատամիկը դեմ եմ անում գավաթին, գլուխը երկու կողմից կամաց սեղմում եմ... ու նա տալիս է իր թույնը, հաճույքով է տալիս... կաթիլ-կաթիլ... պարզ, զուլալ թույն... *(Օձին կողով վերադարձնելով:)* Մի խնդիր կա միայն, կայուն չի օձի

թույնը, շուտ է քայքայվում՝ ուժը կորցնում: Եթե երկար պահպանելու ձևը գտնեմ՝ աշխարհի ամենահարուստ մարդը կդառնամ, աշխարհի տերը: Լավ թույն ունի պետք չի, բուրբիս էլ պետք է՝ բզեզի ու բլրճի դեմ, մկան ու առնետի դեմ, գազանի դեմ, թշնամու դեմ, մերձավորի դեմ, հա-հա, շատ մարդ կա, որ կուզի մերձավորին թունավորի կամ էլ՝ հենց մի ամբողջ գերդաստանի, ինչո՞ւ ոչ: Մնում է թույնը կայունացնելու ձևը գտնեմ: Փորձել եմ մեղրի մեջ պահել, բայց մեղրն ուժեղ է, ինքն է քայքայում, յուղի մեջ եմ փորձել, լավ է, բայց էլի իմ ուզածը չի: Պապս ասում էր՝ թույնը կարելի է չորացնել, բանի տեղ չորի, մտածեցի՝ տարիքի հետ խելքը զցել ա, մտքին եկածը դուրս ա տալի, թույնը ո՞նց կչորացվի... Հիմա մտածում եմ՝ իմաստուն մարդ էր, հենց էսպես բան չէր ասի... Ափսոս, մեռավ գնաց... Բայց ես կգտնեմ միջոցը, կգտնեմ...

Գալիս են Սիրաթն ու Հույունը:

ՀՌՌԻԳԵ - Հը՛, ի՞նչ կա:

ՄԻՐԱԹ - Ահագին բազմություն էր հավաքվել, ճանապարհում էին Փառուխին՝ բարեմաղթանքներով, նվերներով:

ՀՌՌԻԳԵ - Բա մերոնք, սուսու-
փուս նայում էին, իզուր էդքան
պղնձադրամ բաժանեցի:

ՄԻՐԱԹ - Չէ, ինչի, մերոնք էլ էին
հավաքվել, Փառուխին ասին՝
իզուր ես գնում, Փառուխ, Հոու-
դեն էստեղ, տանը, մեր կող-
քին, դու գնում ես եսիմ ում
բերես: Հա, ասեցին, գոռո-
ռացին, նույնիսկ քաշքշեցին
սրան-նրան...

ՀՌԻԼՈՒՆ - Մի քանիսը սուլեցին
սելի ետևից, ես էլ էի սուլում:
(Սուլում է:)

ՄԻՐԱԹ - Քար գցեցի ետևներից...
թարուն:

ՀՌՌԻԳԵ - Թարուն:

ՄԻՐԱԹ - Հա դե, կծեծեին...

ՀՌԻԼՈՒՆ - Այ մարդ, թող գնա,
իբր գտնելու ա էդ Հայկ կոչվա-
ծին, գցել են գլուխները՝ Հայկ,
Հայկ... Կամ էդ Հայկը, ո՞վ ա տե-
սել... Կամ եթե կա էլ՝ կուզի՞ էն
հարուստ, տաք, լենուբոլ երկի-
րը թողնի, գա էս քարուքոայի
մեջ ապրի. ձմեռը ցուրտ, սառ-
նամանիք ու ձյուն, ամառը շոգ-
կրակ...

ՄԻՐԱԹ - Թող գնա, գնա՝ փոշմա-
նած ետ գա, փոշմանած գա՝
կխեղճանա, կկակղի, ու էդ ժա-
մանակ մենք մերը կանենք:

ՀՌԻԼՈՒՆ - Կամ էլ կսատկի՞ ճամ-
փեքին կմնա, կպրծնենք:

ՀՌՌԻԳԵ - Սատկողը չի, ճերմակ

մազերին մի նայեք, պոպոքի
պես պինդ ա: Հետն ո՞ւմ վերց-
րեց:

ՄԻՐԱԹ - Երկու ջահելի՞ իր տնե-
ցիներից: Դրանց սելի տնին
պիտի սղոցելի գիշերով:

ՀՌՌԻԳԵ - Է սղոցելիր... Գնացին՝
նոր ես աքլորանո՞ւմ: Երեք տա-
րի ա մոտս աշխատում ես, բայց
իսկի օձ կթել չսովորեցիր:

ՄԻՐԱԹ - Ինչի, լավ էլ կթում եմ:

ՀՌՌԻԳԵ - Ինչն ա լավ, բռնել չես
կարում, սխալ բռնում՝ ցավաց-
նում ես, հետո ուզում ես օձը
քեզ թույն տա: Տես հա, Սիրաթ,
քեն են պահում, վաղ թե ուշ
կծելու են:

ՄԻՐԱԹ - Շատ էլ քնքուշ բռնում
եմ...

ՀՌՌԻԳԵ - Ձեռքդ դողում ա, վախ
կա մեջդ, իրենք դա զգում են:

ՀՌԻԼՈՒՆ - Էն մեր պուճուր տղեն
առավոտից խաղում էր նոր բե-
րած օձի հետ, չգիտեմ ինչ արեց՝
էն էլ կծեց, բայց հեչ պետքը չի,
հիմա ընկերացել են, տեսնես
ոնց ա վզով գցում՝ քնացնում:

ՀՌՌԻԳԵ - Իմ տղեն ա, է: Չէ, Սի-
րաթ, քեզ վայ թե էլ ուսուցչութ-
յուն չանեն, բան դուրս չի գալիս:

ՄԻՐԱԹ - Դուրս կգա, վարպետ,
ես կապացուցեմ... Ուզում եմ
պաչեմ... *(Օձին վերցնելով
համբուրում է:)* Ըհը, ըհը, ըհը...
Վախ, խփեց:

ՀՌՌՌԳԵ - Չհավատաց սիրուդ:

ՄԻՐԱԹ - Ախր ինչի՞, շատ հավետով էլ պաշում էի...

ՀՌՌՌԳԵ - Լավ, քեզ մի ճղի, կատակեցի, մնա՛ աշխատի:

ՄԻՐԱԹ - Հա էլի, վարպետս, դու գիտես, թե քեզ ինչքան եմ սիրում:

ՀՌՌՌԳԵ - *(շոյելով Միրաթի գլուխը):* Գիտեմ, գիտեմ: *(Ինքն իրեն.)* Գնաց, ուրեմն, Փառուխ պապիկը, գնաց՝ դյուցազուն բերի, փրկիչ: Թե իմ ինչը չեն հավանում, ինչս ա ծուռ...

ՀՌՌՌԳԵ - Ծուռ բան չկա, լրիվ ուղիղ ա:

ՀՌՌՌԳԵ - Անպայման պիտի բոյս բարդի լիներ, բազուկներս՝ կաղնու բուն, մեջքս՝ ապանամժ... Ուժը մենակ բոյությունաթի մեջ ամ... Բա իմ խելքը, իմ հմայքը, իմ ճարտար լեզուն...

ՄԻՐԱԹ - Ասում են՝ ուժեղ, հզոր առաջնորդ լինի, որ մեր երկիրն անստիկ պահի, մեր սահմանները՝ անխախտ:

ՀՌՌՌԳԵ - Զարմացրին իրանց երկրով, երկիր ա, էլի, մի երկու սար էս կողմ, մի երկու սար էս կողմ՝ ինչ ա փոխվում... Ամեն մի ճնտտ սարի համար հո մշտապես կենաց-մահու կոիվ չննք տալու... Թող գան, գնան, տանք, առնենք, առնուոր անենք...

ՀՌՌՌԳԵ - Փորներս կուշտ լինի...

ՄԻՐԱԹ - Ճիշտ ա, կուշտ փորն ամենակարևոր բանն ա մարդուս համար: Մինչև վարպետիս հանդիպելը ո՞վ էի, սոված գկոտում էի, մարդահաշիվ չէի, հիմա մարդ եմ զգում ինձ:

ՀՌՌՌԳԵ - Չէ, Փառուխ, ձեր ուզածով չի լինելու. ինչ էլ ասեք, ինչ էլ անեք՝ էս տան նախարարը ես եմ լինելու, էս:

ՄԻՐԱԹ - *(կիսաձայն, որ Հուրունը չլսի):* Որ ամեն ինչ քո ուզածով լինի, Սյունիին կտամ ինձ:

ՀՌՌՌԳԵ - Ինչ Սյունի:

ՄԻՐԱԹ - Փառուխի թողը:

ՀՌՌՌԳԵ - Էն մարմիր...

ՄԻՐԱԹ - Հա, կտամ:

ՀՌՌՌԳԵ - Չէ: Հուրունին կտամ քեզ:

ՄԻՐԱԹ - Հուրունին:

ՀՌՌՌԳԵ - Ինչ, վատն ամ:

ՄԻՐԱԹ - Դե... չէ... բայց... օգտագործած ա, է...

ՀՌՌՌԳԵ - Սիրամթ... Մի հատ հիշի, թե ում օգտագործածն ա...

Հիշեցիր... Այ էդպես: Սյունին իմն է լինելու, իմը: Երբ պատկերացում եմ նրան իր պարը պարելիս՝ իմ նախշուն օձերը հողանի թևերին, պարանոցին... խելքս մաղում ա, հրաշք ա, հրաշք... Մի խոսքով՝ մոռացիր:

ՄԻՐԱԹ - Մոռանամ, դու ասես՝ ես չմոռանամ:

ՀՈՒՂՈՒՆ - Ի՞նչ եք էդտեղ փսփսում:

ՀՈՒՂՈՒՆ - Մեր գործերից:

ՀՈՒՂՈՒՆ - Ու ինչ որոշեցի՞ք:

ՀՈՒՂՈՒՆ - Առայժմ սպասենք, սպասենք, թող Փառուիսը գնագա, կամ էլ գնա՛ չգա:

ՀՈՒՂՈՒՆ - Բա որ եկավ ու բերեց:

ՀՈՒՂՈՒՆ - Չի բերի: Բայց եթե բերեց՝ ես գիտեմ ինչ կանեմ:

ՄԻՐԱԹ - Ի՞նչ կանես, ուսուցիչ, չես ասի:

ՀՈՒՂՈՒՆ - Չէ: Հետո: Հիմա դեռ սպասենք, գուցե ամեն բան մեր ուզածով է լինում:

ՄԻՐԱԹ - Սպասենք:

ՀՈՒՂՈՒՆ - *(կախարդանք)*.

Անեծք ուղարկեմ՝ բռնի, շուլալի, կապի, կապկալի:

Ճամփեն քանդվի սելիդ առաջ, Փառուիս, փոշման-փոշման դառնաս ետ:

Քամին փչի, դառնա մրրիկ, ավագ բերի՝ աչքդ ԼԳՆի,

Քիթդ, բերանդ ու ականջդ, որ ոչ տեսես, որ ոչ լսես, ոչ էլ շնչես:

Միրտդ պայթի, ընկնես հողին, մնաս անթաղ՝ ճամփի կեսին:

Մարդագայլը բուկդ կրծի՝ արյունդ լակի, չորանաս իսպառ:

Օձը խայթի՝ ուռես, կապտես, քրքրվես, սատկես:

Սատկես, Փառուիս, սատկեն, սատկեն, սատկեն...

ՏԵՍԱՐԱՆ 4

Հայկի տունը: Հայկ, Արամանյակ, Մանավագ, հետո Խոռո, երկու կին՝ Հայկի տան կանայք են, ճաշի սեղանն են սպասարկում: Հայկը որդիների հետ ճաշում է:

ՀԱՅԿ - Տիտանյան Բելը գոմշի միս չի ուտում, էլ ոնց կլներ:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - *(ծաղրով)*: Չի՞գ է, ատամը չի բռնում:

ՀԱՅԿ - Փոքրուց էր էդպես, ես ուտում էի՝ ինչ տային, ջոկոդություն չէի դնում, ինքը ոտերը գետնին էր խփում, խոռվում, լացում, տնեցիներն էլ զիջում էին՝ աղավախ էին խորովում, մատղաշ գառան կամ խոճկորի միս, կրիա էին խաշում...

ՄԱՆԱՎԱԶ - *(ուրերը գեպնին խփելով Բելի փնագն է անում)*: Չեմ ուզում ես ձեր գոմեշի միսը, տավարի միս էլ չեմ ուտի, ինձ գառան միս տվեք, աղավախի, կրիա... Ես Բելն եմ, մեծանամ՝ թագավոր եմ դառնալու, աստված...

Ծիծաղում են:

ՀԱՅԿ - Մատղաշ կենդանու միսը համեղ է, հա, դյուրին է ատամի համար, բայց ոսկոր, ջիլ ու մկան ամրացնող հյութերը քիչ են: Հասուն կենդանու միսն

է բավարար ուժ տալիս: Սա է պատճառը, որ Բելն ու իր զարմը թեև խոշոր են, մսեղ, բայց նրանց մկանը կակուղ է, ջլերը շուտ են հոգնում-հանձնվում:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Մեր աղեղները ձգելուն նրանց ուժը չի պատում:

ՄԱՆԱՎԱԶ - Եթե ձգում էլ են՝ ձեռքներն այնպես են լարվում-դողում, որ թողած նետը վիրավոր թռչնի նման ծուռումուռ է թռչում, թիրախից վրիպում:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Բայց ծանր նիզակ լավ են գցում:

ՄԱՆԱՎԱԶ - Մարմնետությունից է: Բայց տեգերով՝ առավելությունը մերն է:

ՀԱՅԿ - Տղերք, ոնց որ կովի եք պատրաստվում, հմ:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Ինչ իմանանք՝ ինչ կլինի, հայր, իրավիճակը շատ է լարված:

ՄԱՆԱՎԱԶ - Բելենք ֆշֆշալով են անցնում մեր կողքով, պատահում է՝ չեն բարևում:

ՀԱՅԿ - Հանգիստ մնացեք: Կոիվ սարքեն՝ կոիվ կտանք, մենք կովին թիկունքով դարձող չենք:

Գալիս է Խոռը:

ՀԱՅԿ - Ուշանում ես, Խոռ տղա:

ԽՈՌ - Դռանը սայլ է կանգնել, խոսքի բռնվեցի:

ՀԱՅԿ - Ո՛վ են:

ԽՈՌ - Մի ավեզարդ այր է իր երկու օգնականի հետ, ասում է՝ հեռվից եմ, Հայկին տեսնել եմ ուզում, խոսելու բան ունեմ հետը:

ՀԱՅԿ - Կարգադրիր՝ օգնականներին կերակրեն, եզներին խոտ ու ջուր տան, իսկ ծերունուն տուն հրավիրի, տեսնենք ով է, ինչ է ուզում:

Խոռը դուրս է գալիս:

ՀԱՅԿ - Գինի չկա սեղանին:

Կանայք գինի են բերում սափորով, գավաթներ, դնում են սեղանին: Խոռը գալիս է Փառուխի հետ:

ԽՈՌ - Ահա:

ՀԱՅԿ - Բարի լինի մուտքդ իմ տուն, անծանոթ:

ՓԱՌՈՒԽ - Ողջություն քեզ ու քո տանը, դյուցազուն: *(Մոտենում է, գրկում Հայկին, երկար ու կարոտով հուրոտում:)*

ՀԱՅԿ - Ինչ ես այդպես փարվել-հոտոտում, ոչ հայրս ես, ոչ պապս:

ՓԱՌՈՒԽ - Հորեղբայրդ եմ, Հայկ: **ՀԱՅԿ** - Հս... *(Ծաղրով:)* Որտեղից հայտնվեցիր, հորեղբայր:

ՓԱՌՈՒԽ - Թորգոմա տնից, լսած կամ:

ՀԱՅԿ - Ոնց չէ... Թորգոմա տուն... Ո՛ր կողմում է:

ՓԱՌՈՒԽ - Էն, հյուսիսի, բարձր ու սիրուն լեռների կողմը:

ՀԱՅԿ - Նատիր: *(Կանանց.)* Ճաշ տվեք հյուրին, գինի լցրեք: *(Փառուխին.)* Դե նատիր վերջապես: *(Փառուխը նայում է:)* Ինչն է բերել քեզ մեր կողմերը:

ՓԱՌՈՒԽ - Եկել եմ իմ եղբորորդուն տեսության:

ՀԱՅԿ - Այդ կատակն արինք, անցավ, լրջանանք արդեն, հարգարժան...

ՓԱՌՈՒԽ - Փառուխ, Փառուխ է անունս:

ՀԱՅԿ - Հարգարժան Փառուխ:

ՓԱՌՈՒԽ - Ասացի արդեն՝ եկել եմ իմ եղբորորդուն տեսնելու:

ՀԱՅԿ - Բա ինչո՞ւ իր մոտ չես գնացել, ինձ մոտ ես եկել:

ՓԱՌՈՒԽ - Որովհետև դո՞ւ ես իմ եղբորորդին:

ՀԱՅԿ - Կատակասեր ես, ծեր այր, հասկացա, բայց բավական է:

ՓԱՌՈՒԽ - Չեմ կատակում, Հայկ, ես Փառուխն եմ Թորգոմա տնից, քո հորեղբայրը:

ՀԱՅԿ - Շփոթում ես, Փառուխ, ես Բաբելացի եմ, Տիտանյան Բելի եղբայրը:

ՓԱՌՈՒԽ - Բելը Քամի ճյուղն է, դու՛ Հաբեթի: Չես տեսնում՝ նա թխամաշկ է, սևահեր, դու՛ խարտյաշ, ճերմակամաշկ:

ՀԱՅԿ - Մեր մայրերը տարբեր են:

ՓԱՌՈՒԽ - Ձեր հայրերն էլ տար-

բեր են, Հայկ, դու Թորգոմի զարմից ես, Բելը՝ Ներբովթի: Քեզ առևանգել են Թորգոմա տնից:

ՀԱՅԿ - Ո՛վ:

ՓԱՌՈՒԽ - Բաբելացի ավազակները: Տեսել են աշխույժ, ուժեղ, խոշոր մանչ ես, գայթակղվել են, առևանգել՝ վաճառել Բելին:

ՀԱՅԿ - Կեր, ճամփից ես, քաղցած ես, գինի խմիր:

ՓԱՌՈՒԽ - *(գինուց մի քանի կուճ խմելով):* Ինչի՞ց եք սարքում ձեր այս գինին:

ՀԱՅԿ - Արմավից: Չհավանեցի՞ր:

ՓԱՌՈՒԽ - Վատը չի... Բայց շատ քաղցր է ու սարթ, կնոլորեցնի, իսկ ես դեռ խոսելիք ունեմ: Սայլի մեջ մեր տան գինուց եմ բերել մի տիկ, խաղողի թեթև գինի է, ասա բերեն. կզվարթացնի, բայց չի մոլորեցնի:

ՀԱՅԿ - Բերեք: *(Մանավազը դուրս է գալիս գինին բերելու:)* Ենթադրենք ասածիդ պես է...

ՓԱՌՈՒԽ - Ինչը, գինին...

ՀԱՅԿ - Չէ, Թորգոմա տուն-հորեղբայր-բան...

ՓԱՌՈՒԽ - Ենթադրենք չի, Հայկ, եղպես է: Մեջքիդ, աջ կողմում, շիկավուն նշան կա, ասես մաշկի վրա իջած փոքրիկ արև լինի. երբ մանուկ էիր՝ ճկույթիս եղունգի չափ էր:

Հայկը նայում է կանանց, նրանք գլխով հաստատում են:

ՓԱՌՈՒԽ - Արևորդիների նշանն է: Մեր զարմից բոլորը չէ, որ ունեն այդ նշանը, առանձնաշնորհյալների վրա է իջեցվում: Դու ի վերուստ ընտրյալ ես, Հայկ, մեծ առաքելություն ունես: *(Մանավազը բերում է փիկը:)* Բացեք բերանը, խմենք Թորգոմա տան գինին, զվարթանանք:

Հայկը նշան է անում, կանանցից մեկը բացում է տիկի բերանը, լցնում գավաթները:

ԿԻՆ - *(գինու թունավորված լինելու կասկածով, Հայկին):* Թույլ տուր՝ նախ ես խմեմ:

ՀԱՅԿ - *(Փառուսի աչքերին ուշադիր նայելով, կնոջը):* Դրա կարիքը չկա:

ՓԱՌՈՒԽ - *(վերցնում է գավաթը):* Ողջություն քեզ ու քո գերդաստանին, դյուցազուն Հայկ:

Խմում են:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Համեղ է:

ՓԱՌՈՒԽ - Որդիներիդ վրա Թորգոմա տան շուքը կա, Հայկ... Սակայն... Սակայն ափսոս, շատ ափսոս...

ՀԱՅԿ - Ինչո՞ւ ես ափսոսանք տալիս:

ՓԱՌՈՒԽ - Ափսոս են, որ Բելին պիտի ծառայեն:

ՀԱՅԿ - Մի անգամ ասացիր՝ կներեմ դժվարությամբ, բայց էլ չասես: Ես ու իմ որդիք երբեք ծառայելու եղել ու չենք լինի:

ՓԱՌՈՒԽ - Ո՛րխխխ... Կեցցես: Մեր նախնի Թորգոմի հպարտությունն ու զայրույթը ժայթքեց աչքերիցդ: Մեռնեմ աչքերիդ, Հայկ:

(Երգում է, գավաթը սեղանին խփելով).

«Կարոտցեր եմ սարերդ, պաղ ու անուշ ջրերդ,

Թորգոմա, Թորգոմա, իմ խորոտտուն, Թորգոմա:

Կարոտցեր եմ քաջերդ, հեզիկ նազիկ հարսներդ,

Թորգոմա, Թորգոմա, հայրերի տուն, Թորգոմա:

Հայկը հանկարծ միանում է կրկներգին:

Թորգոմա, Թորգոմա, իմ խորոտտուն, Թորգոմա,

Թորգոմա, Թորգոմա, հայրերի տուն, Թորգոմա:

ՀԱՅԿ - *(գարնացած):* Ես էս երգ գիտեմ, հորողեր...

ՓԱՌՈՒԽ - Գիտես, մանչ, գիտես, հորողեր մեռնի ջանիդ, քո

երզն է, քո տան երզն է, ղնց չի-
մանաս:

ՀԱՅԿ - Ջարմանք բան է...

ՓԱՌՈՒԽ - *(կրամ է անում գինուց,
գավաթը սեղանին դնելով):*
Էհ...

ՀԱՅԿ - Տխրեցիր:

ՓԱՌՈՒԽ - Ոնց չտխրեմ, եղբոր
տղա, տկարացել է մեր տու-
նը, կռիվները մաշել են մեզ,
նախանձող հարևան ցեղերը
շատացել են, մեր ամենատեղ
մանչերին, ամենասիրուն աղ-
ջիկներին առևանգել, տարել
են...

ՀԱՅԿ - Տարել են: Չտայիք:

ՓԱՌՈՒԽ - Է չտայինք... Բայց տա-
րան: Ու մեր զարմը հիմա թու-
լացել է, տկարացել: Հայկ, դու
պետք ես Թորգոմա տանը:

ՀԱՅԿ - Դժվար բան ես ասում,
հարգարժան Փառուխ... Իմ ամ-
բողջն այստեղ է, Բաբելոնում:

ՓԱՌՈՒԽ - Բայց ես լսել եմ, որ
հաշտ չես Բելի հետ...

ՀԱՅԿ - Գոռոզացել է Բելը, ինքն
իրեն թագավոր ու աստված է
կարգել, բայց ես չեմ երկրպա-
զի նրան:

ԽՈՌ - Մենք ծնկի իջնող չենք:

ՄԱՆԱՎԱԶ - Բելն աստված չի մեզ
համար:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Կենաց-մահու
կռիվ կտանք:

ՓԱՌՈՒԽ - Չեմ կասկածում, բայց

Բելի զորքը բյուրավոր է:

ՀԱՅԿ - Հոգ չէ, նրանք բազում են,
մենք՝ ուժեղ:

ՓԱՌՈՒԽ - Ձեր ոտի տակ չկա
կարևորը, Հայկ, ձեր հողը, ձեր
թիկունքում չկա կարևորը՝ ձեր
տունը: Դարձեք ձեր տուն, ձեր
ուտքը դրեք ձեր հողին, առեք
նրա զորությունը: Դարձիր քո
տուն, Հայկ: Եվ իմացիր՝ ինչ-
քան դու ես պետք տանը, այն-
քան էլ տունն է քեզ պետք:

ՀԱՅԿ - Փախուստի նման կլինի:

ՓԱՌՈՒԽ - Փախուստ չի, տուն-
դարձ է, դու վերադառնում ես
քո հայրական տուն, Հայկ... Այ-
նուիեռև թե կուզեն՝ թող գան,
թող գան ու էն ժամանակ մենք
ցույց կտանք մեր զորությու-
նը: *(Դադար:)* Խոսիր, ինչո՞ն ես
լռում:

ՀԱՅԿ - Չեմ լռում, ներսումս եմ
խոսում:

ՓԱՌՈՒԽ - Հա, մտածում ես... Մտա-
ծիր, մանչս, մտածիր: *(Լցնում է
գավաթները:)* Էստեղ դու ղվ ես...
Էլի որ դուրսացնես ես, հա, էլի որ՝
հզոր ես... Բայց Բելն է Բաբել-
լոնի առաջնորդը, նրան էլ թե
սպանես՝ հաջորդն էլի իր զար-
մից է լինելու, էս կարգը դու չես
կարող փոխել, Հայկ, նրանք

իրենց տանն են: Դու էլ քո տա-
նը պիտի լինես:
ՀԱՅԿ - Շտապում ես, Փառուխ,
 հեշտ բան չի:
ՓԱՌՈՒԽ - Ոչ էլ շտապում եմ: *(Գի-
 նի խմելով:)* Ես իմ եղբորորդու

հյուրն եմ, նրա տանը կմնամ
 այնքան, մինչև ինքը մտածի ու
 վճիռ կայացնի:
ՀԱՅԿ - *(կանսանց):* Սենյակ պատ-
 րաստեք հորեղբոր համար:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ 5

Բեմը բազմամարդ է, Թորգոմա
 Տան բնակիչները դիմավորում են
 Հայկին իր գերդաստանով, այստեղ
 են Սլաքը, Դատը, Սոսին, ուրիշներ,
 մի կողմում՝ Հոուդեն է, Հուլունը,
 Սիրաթը:
ՀՌՈՒԴԵ - Վերջն իր արածն արեց
 իժի ծնունդը, բերեց իր Հայկին:
(Հուլունին.) Անեծքներիդ ան-
 պտուղ էին, կիին:
ՍԻՐԱԹ - Բա ի՞նչ ենք անելու:
ՀՌՈՒԴԵ - Օձի թույն տանք ճաշի
 կամ խմիչքի հետ՝ պրծնի-գնա:
ՍԻՐԱԹ - Հա, ճիշտ ա, Հուլունը
 աննկատ կանի դա, էն հողա-
 գույն օձի թույնը համ չունի:
ՀՌՈՒԴԵ - Դա վերջում, եթե ուրիշ
 ճար չմնա:
ՁԱՅՆԵՐ - Եկան, եկան...
 Բեմ են մտնում Հայկը, Փառուխը,
 Հայկի որդիները, մնացյալը:

ՀՌՈՒԴԵ - *(զմայլված):* Ի՞նչ տղերք
 են...
ՀՌՈՒԴԵ - Բերանդ փակի, թե չէ
 ես կփակեմ:
ՓԱՌՈՒԽ - Ահա Թորգոմա տու-
 նը, Հայկ, ահա քո տունը, քո
 տան սարերը, ջրերը, դաշտերն
 ու անտառները, ահա քո տնե-
 ցիները, որ հավատացել ու
 սպասել են քեզ...
ՀՌՈՒԴԵ - *(մեկուսի):* Սպասել
 ենք, բա չէ, շունչս կտրում էր
 սպասելով:
ՀԱՅԿ - Բարի հանդիպեցինք,
 տնեցիներ, կարոտել էի ձեզ:
 Բոլորը գալիս են Հայկին ընդառաջ,
 շատերը փարվում են, գրկում, ող-
 ջունում, նաև՝ Հայկի որդիներին,
 ողջունողների մեջ են Հոուդեն, Սի-
 րաթը, Հուլունը:

ՓԱՌՈՒԽ - Բերեք, բերեք խոյը,
 գոհարերեք մեր դյուցազուն
 Հայկի ոտաց տակ:

Թմբուկի, գունայի հնչյունների տակ կատարում են գոհաբերությունը:

ՓԱՌՈՒԽ - Հնչեցրեք Թորգոմա տան պարը: Հայկ, տղերք, ձեր ոտ զարկեք ձեր տան հողին, թող հողը զգա ձեր բարևը ու ինքն էլ ձեզ ողջունի: Զարկեք:

Պարի հնչյուններն են թնդում, պարը սկսում են Թորգոմա տնեցիները, պարի մեջ քաշելով Հայկին ու նրա մարդկանց, շուրջպարն է ետում, Սուսին Խոռի կողքին է, պարողների մեջ են նաև Հոռոեն, Սիրաթը, Հուլունը:

ՏԵՍԱՐԱՆ 6

Բեղի ապարանքը: Բեղն է և իր ծառան, այնուհետև՝ Հոռոեն և Սիրաթը: Բեղը նետ-աղեղով փորձեր է անում:

ԲԵԼ - (ծառային): Հայկի հին աղեղներից է, տվեց, ասեց՝ առ, փորձի, բայց մեկ է՝ չես կարողանալու ձգես: Ըհը, ձգել եմ... Չեմ ձգել:

ԾԱՌԱ - Ձգել ես, տեր, դու Բարելունի ամենաուժեղ մարդն ես: (Բեղի խեթ հայացքին ի պատասխան:) Աշխարհի ամենաուժեղը:

ԲԵԼ - Թիրախը վերցրու... Բարձր պահիր:

Ծառան փայտի վրա ձգած կաշվով թիրախը պահում է Բեղի առաջ: Բեղը մեծ ճիգով ձգում է աղեղը, ձեռքերը դողում են նետն արձակելիս, նետը դիպչում է ծառայի ազդրին ու անցնում:

ԲԵԼ - Դիպավ:

ԾԱՌԱ - (գավից ծոված): Դիպավ, տեր:

ԲԵԼ - Հենց ազդրիդ էլ նշան էի բռնել: Գնա, թող բուժակը բալասան քսի:

ԾԱՌԱ - Կարիք չկա, տեր, թեթև պատովածք է, իրեն իրեն կանցնի:

ԲԵԼ - Հա, սպանել ուզեի՝ կրծքիդ կխփեի: (Մի կողմ է գցում աղեղը, նիզակ է վերցնում:) Նիզակից լավ զենք չկա: (Նիզակն ուժգին խփում է թիրախին: Ծառան խոցված թիրախի հետք պատկերում է գետնին:) Չես մտել, չէ... (Ծիծաղում է)

ԾԱՌԱ - (ելնելով): Ողջ եմ:

ԲԵԼ - Սառը ջուր բեր, ծարավեցի: Այն երկուսին հո ջուր չեք տվել:

ԾԱՌԱ - Չէ, երկրորդ օրն է՝ շոգի մեջ չորանում են դարպասների առաջ:

ԲԵԼ - Թող չորանան, չորանան՝ քիչ կխորանանկեն: Ասում են՝ որտեղից են:

ԾԱՌԱ - Թորգոմիա, թե Թորգո-

մա, թե Թորգոմնոն... Ասում են՝
հեռու է, աղի լճից այն կողմ:

ԲԵԼ - Ջուրը բեր: *(Ծառան գնում է:)*

Թորգոմիա... Ինչ-որ տեղ լսել
եմ: *(Խնկելով ծառայի քերած
ջուրը:)* Դրանց բեր, տեսնեմ
ինչ են ուզում: Ճամփին գլխնե-
րին մի երկու հատ բամփի,
թող վախն ավելի խորը մտնի
մեջները: *(Ծառան դուրս է գա-
լիս: Աղեղն է աչքով ընկնում:)*
Ախ, Հայկ, Հայկ... Միթե վատ
թագավոր էի քեզ ու քո աղխի
համար, ուզածիդ պես ապրում
էիր, բայց դու քեզ ինձ հավա-
սար տեսար, չերկրպագեցիր...

**Ծառան ներս է բերում Հոռուին և
Սիրաթին:**

ԾԱՌԱ - *(հրելով):* Ահա, սրանք
են, երեկվանից աղաչում են,
որ ընդունես, տեր: *(Հյուրերին.)*
Ծնկի՛:

**Հոռուն ու Սիրաթն ընկնում են Բե-
լի ոտքերի առաջ, սողեսող առաջ են
գնում:**

ԲԵԼ - Թավալվեցիք՝ հերիք է, հի-
մա կանգնեք ու խոսեք, բայց
արագ, ժամանակ չունեմ:

ՀՌՌԻԳԵ - Թորգոմա տնից ենք,
էն լեռների կողմից, ես ու իմ
օգնականը, եկել ենք ասենք,
որ Հայկն էստեղ է, Թորգոմա
տանը...

ԲԵԼ - Հայկը... Իզուր չէ, որ այսօր
առավոտից հիշել եմ նրան:
Շարունակիր:

ՀՌՌԻԳԵ - Լավ տեղավորվել է,
դաստակերտ է կառուցում իր
համար, ձեռքին ոսկի բազկա-
կալ են դրել, մատին՝ սուտա-
կով մատանի, ինքն էլ քնում-
զարթնում՝ Բելին է հայեցում,
ասում է՝ թշնամի է ինձ, գորք
հավաքեմ, գնալու եմ՝ հաղթեմ:

ԲԵԼ - Ասում ես՝ հայեցում է:

ՀՌՌԻԳԵ - Հայեցում է, գերաշ-
նորի:

ԲԵԼ - Ինչո՞ւ պիտի քեզ հավատամ:

ՀՌՌԻԳԵ - Ախր, ախր... ես ո՞նց
կհամարձակվեմ ստել աշխար-
հակալիդ, պայծառափայլիդ
առաջ...

ՄԻՐԱԹ - Իմ ուսուցիչը ստելու սո-
վոր չի...

ԲԵԼ - *(ծառային):* Սրանց գցիր կո-
կորդիլոնների առաջ:

ՀՌՌԻԳԵ - Վայ, չէ, գթա, աղաչում
եմ, մի արա, մեծ:

ԲԵԼ - *(Հոռուի աչքերին նայելով):*
Բայց դու հետաքրքիր տականք
ես... Ասում ես՝ խնայեմ:

ՀՌՌԻԳԵ - *(Սիրաթի հետ գեղնին
ընկնելով):* Խնայիր, տեր:

ԲԵԼ - Գալուդ իսկական նպա-
տակն ասա, շո՛ւտ, քո շահը ո՞րն
է:

ՀՌՌԻԳԵ - Ասեմ: Ես էի Թորգոմա
տան տանուտերի թեկնածուն,

բայց գնացին, այսինքն՝ եկան, Հայկին բերեցին. համոզեցին, որ ինքը Թորգոմա տնից է, Թորգոմա տան գարմ է: Խաբեցին:

ԲԵԼ - Չեն խաբել: Բայց դա նշանակություն չունի: Ուզիր:

ՀՌՈՒԳԵ - Ուզում եմ, որ այդ մեծաբերանի բերանը փակես, ես լինեմ իմ հասանելիքի տերը, հավերժ ծառայեմ քեզ իմ ամբողջով... ինչ ուզես՝ կտամ:

ԲԵԼ - Ի՞նչ ունես՝ որ ինչ տաս:

ՀՌՈՒԳԵ - Ունենք... Մետաղ, գինի, յուղ, գարու ջուր, հաց, թանկարժեք քարեր... ջահել տղերք, աղջիկներ... երբ պետք լինի՝ զինվոր կտամ...

ՄԻՐԱԹ - Թույն... *(Հոռուի սպանակից հայացքը տեսնելով լռում է:)*

ԲԵԼ - Ի՞նչ:

ՄԻՐԱԹ - Թթթ...

ՀՌՈՒԳԵ - Թուրմ, հատուկ բուժիչ թուրմեր ունենք, թեյեր ենք պատրաստում, բալասաններ:

ԲԵԼ - Կոխեք քամակներդ, ինձ ձեր թուրմը պետք չի, մերը ունենք: Ասում ես՝ հայհոյում է:

ՀՌՈՒԳԵ - Հայհոյում է, տեր, նույնիսկ լեզուս չի պտտվում... Ասում է՝ Բելը միայն տեսքից է ահավոր, իրականում... իրականում...

ԲԵԼ - Ասա:

ՀՌՈՒԳԵ - *(Միրաթին):* Ասա:

ՄԻՐԱԹ - Ինչի՞ ես...

ԲԵԼ - Հը՛...

ՄԻՐԱԹ - Նապաստակ է:

ՀՌՈՒԳԵ - Ասում է՝ ես ու իմ տղերքը հզոր ենք, մեր դեմ խաղ չկա, մենակ մի քիչ ժամանակ լինի՝ ուժ հավաքենք...

ԲԵԼ - Շո՛ւն, հո չես կարծում, թե ասածներդ հաված յուղի տեղ եմ ընդունում:

ՀՌՈՒԳԵ - Քո կամքն է, մեծ: Բայց ես չեմ ստում. նա քո իմացած Հայկը չի այլևս, ինչ տեղավորվել է Թորգոմա տանը՝ պարծենկոտ ու ինքնահավան է դարձել, մեր ծերերը նրան տարբեր պատմություններ են պատմել տան պատմությունից, նախնիների հերոսություններից, ոգևորվել է, ուզում է աշխարհակալ դառնալ, ասում է՝ մնացած բոլորը շուն են, շան ցեղից...

ԲԵԼ - Հերիք է: Ուրեմն այսպես, պատգամախոս կողարկեմ նրա մոտ, թող համոզեն, ետ բերեն...

ՀՌՈՒԳԵ - Չի գա:

ՄԻՐԱԹ - Չի գա, չէ:

ԲԵԼ - Ինձ պետք է, որ Հայկը վերադառնա ու ծնկի գա իմ առաջ, հնազանդվի ու երկրպագի: Եթե մերժի, չգա, այն ժամանակ կանեմ իմ անելիքը:

ՀՌՈՒԳԵ - Միանգամից արա, տեր, իզուր ջանք ու ժամանակ մի ծախսիր, նա վերադարձողը չի:

ԲԵԼ - Ձայնդ կտրի, էլ չխոսես, մինչև թույլ չտամ: Ձիակառքերի ճանապարհ կամ մինչև ձեր այդ տուն կոչվածը:

ՄԻՐԱԹ - Կա, դեռ չեն սառցակալել ճանապարհները, բայց օր-օրի է, չես իմանա՝ վաղն ինչ կլինի:

ՀՌՈՒԳԵ - Շատ քարքարոտ են ու նեղ, վախենամ ձիերը չքաշեն:

ԲԵԼ - (*Հոռուդեհն*): Դու կմնաս էստեղ:

ՀՌՈՒԳԵ - Մնամ, հրամանքդ:

ԲԵԼ - (*Միրաթին*): Իսկ դու կգնաս իմ պատգամախոսների հետ, ճանապարհը ցույց կտաս: (*Հոռուդեն փորձում է մոլորենալ Միրաթին, ինչ-որ բան փսփսալ:*) Հեռու մնա: (*Ծառային.*) Տար սրանց, չթողես խոսեն իրար հետ, փակեք առանձին-առանձին:

Ծառան տանում է Հոռուդեհն ու Միրաթին:

ԲԵԼ - Հայկ, Հայկ... Ուզում ես թագավոր լինել Բելի պես, համ... Չէ, չի ստացվի, երկինքներն ինձ են նշանակել, դու կարող ես միայն իմ ենթական լինել, ծառան, ստրուկը... (*Կայրա-*

ղած՝ ջարդում է Հայկի աղեղը ծնկին խփելով:)

ՏԵՍԱՐԱՆ 7

Հայկի տունը: Հայկ, Արամանյակ, Խոռ, Սոսի, Տիփոն, Շիմար:

ՏԻՓՈՆ - (*ներս գալով*): Ողջութուն քեզ և ուժ բազուկներիդ, դյուցազուն Հայկ:

ՀԱՅԿ - Ողջույն, Տիփոն: Նստիր, տեսնենք՝ որն է քո գալստյան նպատակը:

ՏԻՓՈՆ - Գերաշնորհ Տիտանյան Բելը պատգամ է ուղարկել քեզ: Սակայն նախ՝ ընծան: (*Ուզում է ծափ զարկել:*)

ՀԱՅԿ - (*զայելով Տիփոնի ծափը*): Այս տանը միայն ես ունեմ ծափ զարկելու իրավունք:

ՏԻՓՈՆ - Ուզում էի կարգադրել, որ ներս գա, ծափով ենք պայմանել:

ՀԱՅԿ - Ինքս:

Հայկը ծափ է զարկում: Հսչում է պարեղանակը, ներս է գալիս գեղեցկուհի Շիմարը, կիսամերկ, սկսում է պարել, պորտապար հիշեցնող պար է: Շիմարը պարելով մոտենում է Հայկին, Արամանյակին և Խոռին՝ հրապուրիչ, գայթակող շարժումներով, նույնիսկ դիպչում է Խոռին: Անսպասելիորեն ներխուժում է Սոսին՝ պարով, ասես մարտահրավեր

է նետում Շիմարին, պարում են դեմ առ դեմ, միմյանց համարյա հրելով: Պարը ձգձգվում է, Տիփոնի նշանով Շիմարը ետ է քաշվում, դադարեցնում է պարը: Սոսին նույնպես դադարում է:

ՏԻՓՈՆ - Ոչ միայն պարն է քեզ համար, Հայկ, այլև պարուհին, մեծն Բելի ընծան է:

ՀԱՅԿ - Գինի բերեք հյուրին, խորտիկներ: (*Տիփոնին.*) Ո՞նց է Տիտանյան Բելը, ամբողջն է առել իր անհագ իշխանության տակ, թե դեռ ինչ-որ բան ազատ է թողել:

Կանայք սեղան-մատուցարանով հյուրասիրություն են մատուցում:

ՏԻՓՈՆ - Ամբողջը, Հայկ, հիմա բոլոր ցեղերը նրան հնազանդ են ու երկրպագում են, և սա աշխարհակալություն է, Տիտանյան Բելը հիմա թագավորաց թագավոր է...

ՀԱՅԿ - (*հեղինակ է*): Եվ աստված:

ՏԻՓՈՆ - Այո, այդպես է, աստվածները նրան նշանել՝ իրենց շարքն են առել:

ՀԱՅԿ - Առել են՝ թող գնա, ինչո՞ւ է ոտքը կախ գցել:

ՏԻՓՈՆ - Այստեղի առաքելությունն ավարտված չէ, մեծ գործեր ունի դեռ անելու:

ՀԱՅԿ - Պարուհուն էլ գինի տվեք, ծարաված կլինի:

Սոսին կանխում է կանանց, ինքն է գինի լցնում Շիմարի համար:

ՍՈՍԻ - (*գինին փայլով Շիմարին*): Խմի:

Պարուհին վերցնում է գավաթը:

ՏԻՓՈՆ - Որդիքդ ամրացել, իսկական դյուցազուն են դարձել,

ՀԱՅԿ - Թորգոմա տան օդն ու ջուրը բարերար են ազդում նրանց վրա:

ՏԻՓՈՆ - Քեզ ջերմ ողջույններ եմ բերել քո տուն Բաբելոնից:

ՀԱՅԿ - Զգացված եմ, բայց Բաբելոնն իմ տունը չէ այլևս:

ՏԻՓՈՆ - Բայց Բաբելոնը քեզ իրենն է համարում, հիշում է ու կարոտում:

ՀԱՅԿ - Գործից խոսիր, Տիփոն:

ՏԻՓՈՆ - Գերաշնորհ Բելի խոսքն եմ քեզ բերել, Հայկ, ճիշտ և ճիշտ նույնը, ինչ նա հրամայեց փոխանցել քեզ:

ՀԱՅԿ - Սկսիր, իբրև թե Բելն ես:

ՏԻՓՈՆ - Աղեղնավոր Հայկ, դու հեռացար ու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր: Մակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը, վերադարձիր և ինձ հնազանդելով՝ խաղաղ ապրիր իմ երկրում: Ես կավելացնեմ քո կալվածքներն ու որսատեղին, նաև՝ իմ որս-

կան զինվորների ղեկավարը կդարձնեն:

ՀԱՅԿ - Այդքանը:

ՏԻՓՈՆ - Այո, այս էր Տիտանյան Բելի հորդորը քեզ: Քիչ է:

ՀԱՅԿ - Տիփոն, իմ անունից ասա Բելին, որ ես իմ տանն եմ և նրա տանը բնակվելու միտք չունեմ: Ասա նրան նաև, որ ես ինքս կարող եմ գործ առաջարկել նրան իմ տանը, եթե կարիք ունենա:

ՏԻՓՈՆ - Անխոհեմ է պատասխանող, դյուցազուն, մի՛ շտապիր, գուցե մի երկու օր մտածես, կշռադատես...

ՀԱՅԿ - (*ընդհատելով*): Դարձյալ եմ ասում, Տիփոն, ես իմ տանն եմ, ուրիշի տանն ապրելու միտք չունեմ: Նայիր, ինչ հրաշալի երկիր է իմ հայրերի երկիրը, կուզե՞ս՝ մնա որոշ ժամանակ, հյուր եղիր, բայց իմացիր, որ իմ վճիռը չի փոխվելու:

ՏԻՓՈՆ - Շնորհակալ եմ հյուրընկալության առաջարկի համար, սակայն իմ տերը սպասում է քո պատասխանին, և եթե այն իսկապես վերջնական է, չուշացնեմ, հենց այսօր էլ վերադառնամ:

ՀԱՅԿ - Վերջնական է:

ՏԻՓՈՆ - Բայց...

ՀԱՅԿ - Ինչ:

ՏԻՓՈՆ - Սա արդեն ինձնից՝ որ-

պես բարի խորհուրդ: Թույլ կտամ:

ՀԱՅԿ - Ասա:

ՏԻՓՈՆ - Փորձանք ես բերելու գլխիդ քո հակառակությամբ, Հայկ:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Սպասո՞ւմ ես, շո՞ն: (*Հայկին.*) Կներես, հայր, առաջ ընկա:

ՀԱՅԿ - (*Տիփոնին*): Քեզ հարց տվին, պատասխանիր:

ՏԻՓՈՆ - Չեմ սպասում, պարզապես կռահում եմ այն, ինչը կարող է հետևել մերժումիդ:

ՀԱՅԿ - Խնդիրը փակված է, չշարունակենք: Եվ այն պարուհուն էլ տար հետդ, մենք մեր պարերն ունենք: Բարով գնաս:

Տիփոնը խոնարհվելով հեռանում է:

ԽՈՌ - Սպասում էր իժը:

ՀԱՅԿ - Բելի գոռոզությունը սահման չունի և շատ հավանական է, որ իսկապես գա մեր վրա: Բայց մենք վախեցող չենք: Կովով կգա՝ կռիվ կստանա: Հո չենք թողնելու, որ ամեն շունուգեղ մտնի՝ մեր տունն ավերի:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Կուզե՞ս, հրամայիր, Տիփոնի վիզը կտրենք, գլուխն ուղարկենք Բելին որպես պատասխան:

ՀԱՅԿ - Տիփոնն ընդամենը պատգամավոր է, պահպանենք պատշաճությունը, թող անար-

գել գնա: *(Կանանց.)* Ուտելիք և խմելիք դրեք պատգամավորի հետ:

ՏԵՍԱՐԱՆ 8

Բելի ապարանքը: Բել, Տիփոն, Հոռուե:

ԲԵԼ - *(կարաղած երատուջ անելով):* Ուրեմն հրաժարվեց:

ՏԻՓՈՆ - Հրաժարվեց, տեր:

ԲԵԼ - Կտրականապես:

ՏԻՓՈՆ - Կտրականապես:

ԲԵԼ - Իմ նվերն էլ մերժեց:

ՏԻՓՈՆ - Մերժեց: Ասում է՝ մենք մեր պարերն ունենք:

ՀՌՈՒԴԵ - Ասում էի, չէ՛, գերապայծառ, ասում էի, չէ՛, որ վերադարձողը չի: Նա հիմա դեռ փափուկ է մերժել, ժամանակ է շահում, որ գորք բազմացնի, ամրանա, հենց ամրացավ՝ ավելի է լկտիանալու:

ԲԵԼ - *(Տիփոնին):* Սրա ընկերն ինչ եղավ:

ՏԻՓՈՆ - Մեռավ հետդարձի ճամփին: Նստել էինք քարերին հաց ուտելու, մի օձ տեսավ, ասաց՝ էս ինչ անձանոթ օձ ա, մեր կողմերում էս տեսակ օձ չկա ու վազեց ետևից, վազեց ու կորավ, գնացինք տեսանք՝ օձը խայթել է, վերջին շնչում է, այն

մեջքն ուղցնող օձերից էր, դրա խայթածը հավաստի մահ է:

ՀՌՈՒԴԵ - Սև էր:

ՏԻՓՈՆ - Ինչը:

ՀՌՈՒԴԵ - Օձը:

ԲԵԼ - Մեջ մի ընկիր: *(Տիփոնին.)*

Էլ ինչ ասաց Հայկը:

ՏԻՓՈՆ - Ասաց՝ էս իմ տունն ունեմ, ուրիշի տանն ապրելու ցանկություն ու կարիք չունեմ:

ԲԵԼ - Դա ասել էս, ուրիշ...

ՏԻՓՈՆ - Լեզուս չի պտտվում, տեր:

ԲԵԼ - Պտտիր, թե չես ուզում պրկեմ:

ՏԻՓՈՆ - Ասում է՝ եթե... եթե Բելը կարիք ունենա, ինքս կարող եմ նրան գործ տալ իմ տանը:

ԲԵԼ - *(ձեռքն ընկածը ջարդելով):* Շոն, շոն...

ՀՌՈՒԴԵ - Ասում էի, չէ՛:

Բելը Տիփոնին ու Հոռուեին ձեռքի շարժումով ցույց է տալիս, որ հեռանան, նրանք խոնարհվելով դուրս են գալիս:

ԲԵԼ - *(նազմի սաղավարտը դնելով գլխին):* Ես կավերեմ քո տունը, Հայկ, քեզ ու քո որդիներին շղթայակապ կանեմ, կրերեմ Բաբելոն: Հնազանդվելու էս ինձ, ծնկի իջած՝ ներում էս աղերսելու, Հայկ...

ՏԵՍԱՐԱՆ 9

Սարալանջ: Հայկ, Փառուխ, Արամանյակ, Խոռ, ապա՝ Մանավազ:

ՀԱՅԿ - Ինչ զարմանահրաշ վարում են հաստատել իրենց տունը մեր նախնիները:

ՓԱՌՈՒԽ - Հա, էդպես է, եղբոր տղա, արձակ դաշտեր, բարձր սարեր, սառնորակ ջրեր...

ՀԱՅԿ - Ներքևում շոգ է, սարն ի վեր ելնես՝ զով, քիչ էլ վերև՝ ցուրտ, ու երեքն էլ նույն օրվա մեջ կվայելես, թե ուզես, այստեղ մարմինդ միշտ առույզ է, աչքդ ու միտքդ՝ սուր:

ՓԱՌՈՒԽ - Էս լանջերին վազվզել ես, երբ փոքր էիր, Հայկ, ընկնում էիր, գլորվում, կանգնում՝ նորից վազում:

ՀԱՅԿ - Դե, ասպարեզը բացեք, ո՞ր են մեր ջահել ըմբիշները, թող սկսեն մենամարտը:

Ասպարեզ են գալիս պատանի ըմբիշները՝ Կայպակն ու Բազը:

ՀԱՅԿ - Ձեր անուններն ասեք, լսենք:

ԿԱՅՊԱԿ - Կայպակ:

ՀԱՅԿ - Ո՛ւմ ճյուղն ես:

ԿԱՅՊԱԿ - Հոյի:

ՀԱՅԿ - (Բազին): Դու:

ԲԱԶ - Բա՛զ, Հորոյի զարմից:

Հայկը նշան է անում, զարկում է

թմբուկը, ըմբիշները սկսում են մենամարտը: Կայպակը հնարք է կատարում ու տապալում ախոյանին:

ԲԱԶ - Մեկ էլ կպնենք, ոտքս քարին դիպավ, սայթաքեց:

ՓԱՌՈՒԽ - Էստեղ քար չկա, տղա, մաքրել են:

ԲԱԶ - Ուրեմն դողոշ էր, ոտքիս տակ ընկավ:

ՀԱՅԿ - (ծիծաղելով): Հարգենք տղայի համատույնությունը, թող մեկ էլ կպնեն:

ՄԱՆԱՎԱԶ - (հևասպառ գալով): Հայր, հայր...

ՀԱՅԿ - Ինչ է եղել:

ՄԱՆԱՎԱԶ - Հենց նոր Կադմոսից սուրհանդակ եկավ, ասում է՝ Բելը անհամար զորքով եկել՝ նստել է Ադի լճի այն ափին, լիճը շրջանցելու է՝ գա մեր վրա:

ՀԱՅԿ - Ինքը՝ Կադմոսն ո՞ր է:

ՄԱՆԱՎԱԶ - Իր ամբողջ աղյուր հավաքել՝ փախած գալիս է:

ՀԱՅԿ - Ոխակալ Բել... Սպասում էի, որ գալու ես, բայց՝ ոչ այսքան շուտ, երևում է՝ ատելությունը խիստ է սեղմել կոկորդո:

ՓԱՌՈՒԽ - Ինչ ենք անելու, Հայկ, հրամայիր:

ՀԱՅԿ - Հավաքելու ենք մեր բոլոր կարող ուժերն ու կանգնենք արհավիրքի դեմ, կռիվ ենք տալու Տիտանյան Բելին ու իր զորքին, Փառուխ, ուրիշ

ի՛նչ: Եվ արագ պիտի հավաքվենք, չենք թողնելու, որ հասնեն մեր դռանը, Բելին Ադի լճի այս ափին կդիմավորենք: Դե, ի զեն, Թորգոմա Տան քաջագուններ:

ՏԵՍԱՐԱՆ 10

Բարձունքի դիտակետ. Հայկ և Արամանյակ: Ենթադրելի է, որ դիմացը Բելի դիտակետն է, իսկ երկու դիտակետ-բարձունքների միջև պատերազմ է, բնականաբար, նույնպես ենթադրելի:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Բելը հաստատ դիմացի բարձունքին է, դիտակետի իր զորապետերի մեջ... Բայց չի առանձնանում, բոլորը հաղթանդամ են, բոլորը՝ սաղավարտներով...

ՀԱՅԿ - Բելի սաղավարտն ուրիշ է, ծոպերով է, թագավորական նշաններ ունի վրան... բայց այստեղից տարբերել չեմ կարողանում, հեռու է:

Գալիս և Խոռը, Մանավազն ու Կադմոսը:

ԽՈՌ - Հայր, կոտորում ենք, բայց նորերն են հայտնվում, գալիս են ու գալիս, անվերջ ու անդադար:

ԿԱԴՄՈՍ - Իմ թևի վիճակն էլ

նույնն է, զինվորները հոգնում են արդեն, հազիվ ենք դիմանում:

ՄԱՆԱՎԱԶ - Կենտրոնի վրա էլ ճնշումն ուժգին է, ասես անսպառ լինեն շները:

ԱՐԱՄԱՆՅԱԿ - Ի՛նչ ենք անելու, Հայր:

ՀԱՅԿ - Բելը պիտի ընկնի, սա է ելքը: Ինձ պետք է, որ նա առաջ գա, գոնե մի քիչ: Խոռ, Մանավազ, Կադմոս, իջեք ուղիղ դաշտ, աստիճանաբար ետ քաշեք զորքը, իբր պարտվում՝ նահանջում եք, թող թշնամին ոգևորվի, առաջ գա: Դու էլ իջիր, Արամանյակ, դեկավարի կեղծ նահանջը: Ես քարերի ետևը կանցնեմ, չեմ երևա, թող կարծեն, թե դիտակետն էլ ենք լքել: Գնացեք:

Եղբայրները իջնում են դիտակետից, Հայկը մնում է:

ՀԱՅԿ - Քո անսպառ զորքին հաղթելու մեկ տարբերակ է մնում, Բե՛լ, դա քեզ սպանելն է: *(Աղեղը պատրաստ պահած:)* Չլինի Բելը, չի լինի նրա զորքը, նրանք կարծում են, թե Բելն աստված է, անմահ է, եթե սպանված տեսնեն՝ կվերածվեն հավատը կորցրած, սարսափած խառնամբոխի, ամեն մեկն իրեն փրկելու մասին է

մտածելու: Իջիր բարձունքից, Բել, առաջ արի, չն՞ տեսնում՝ նահանջում ենք, արի, քո հաղթական առաջխաղի ժամն է... Ահա, իջնում են... Եկեք, եկեք, մի վարանեք, պարտվում ենք, չն՞ք հավատում... Հավատում են, գալիս են... Մի քիչ էլ, էլի մի քիչ... Ճանաչեցի ծոպավոր սաղավարտդ, Բել, գոռոզ շարժումն էլ ճանաչեցի... Դո՛ւ ես, կասկած չկա: *(Կապարճից ներս հանելով:)* Թորգոմա տան պահապան ոգիներ, զորություն ավելացրեք բազուկներին, ուժ տվեք աչքիս լույսին, օգնեք, Թորգոմա տունն ինձ է վստահել իր ապահովությունը, երդում եմ տվել, չթողնեք երդմանազանց լինեմ: *(Քաշում է ներքը, ճկում աղեղը, նշան բռնում բաց թողնում: Լավում է պլացոդ ներսի շվվոցը:)* Դիպավ, պատուեց կուրծքը՝ թիկունքից դուրս եկավ... Վերջ, տապավեց գոռոզ Բելը: Խառնվել են իրար, շփոթի մեջ են, չգիտեն իրենց անելիքը... Ձեր թագավորն ու աստվածը սպանվեց, մեռած է, դուք էլ ո՞ւմ համար եք կռիվ տալու, ետ դարձեք ձեր երկիրը, փախեք... *(Կանչում է բարձրաձայն:)* Հո-հո-հո-հո՛, իմ քաջեր, չկա այլևս Բելը, թշնամին սարսափած է, հարձակվեք ձեր

ամբողջ թափով, հալածենք փախչող շներին, վոնդենք մեր աշխարհից:

ՏԵՍԱՐԱՆ 11

Թորգոմա տան բնակիչները դիմավորում են Հայկին ու նրա որդիներին: Փառուխը ընդառաջ է գալիս:

ՀԱՅԿ - Հաղթեցիք, հորողեր:

ՓԱՌՈՒԽ - *(արցունքն աչքերին):*

Հորողեր մեռնի բազուկներիդ, Հայկ: *(Երգում է, Հայկը միանում է նրան.)*

«Թորգոմա, Թորգոմա, իմ խորոտ տուն, Թորգոմա, Թորգոմա, Թորգոմա, քաջերի տուն, Թորգոմա»

ՀԱՅԿ - *(դեպի ժողովուրդը):* Տնեցի՛ք, հաղթանակ եմ բերել ձեզ:

Բացականչություններ՝ Հայկ, Հայկ, Հայկ...

ԽՈՌ - *(Մոսիի հետ, քարշ փայլով բերում է Հոռոդեին):* Դավաճանին ի՞նչ անենք, հայր:

ՀԱՅԿ - Գցեք իր տունը, տունն այրեք, թող դավաճանությունը կրակով մաքրվի մեր հողից:

ՀՌՌԻԳԵ - Մի արա, Հայկ, ներիք, մե՛ծ, գերապայծառ, մի արա, գթա... Ես մեղավոր չեմ, է՛ն կախարդ կինն ինձ մոլորեցրեց... *(Ծղրփացող Հոռոդեին փանում*

են:) Ես քեզ պետք կգամ, Հայկ, մի արա... ես մեղք չունեմ, Հունյունը կախարդեց...

ՀՈՒԼՈՒՆ - *(գալով ու ընկնելով Հայկի առաջ):* Մոտ է ասում օձի ծնունդը, չհավատաս... Խնայիր, Հայկ, խնայիր ինձ ու իմ ճժերին...

ՀԱՅԿ - *(Փառոսիին):* Սրան մի սայլ տվեք իր եզնով, ուտելիք ու ջուր, թող հեռանա մեր տնից, մեր հողի վրա դավաճանությունը թող ծիլեր չտա: *(Հուլունին հեռացնում են: Հավաքվածներին.)* Տեսցինե՛ր, քանի ես ու իմ որդիք կանք, ոչ մի թշնամի Թորգոմա տանը մոտ չի գա, չենք թողնի. սա ես եմ ձեզ ասում, Հայկը: *(Բացականչություններ՝ Հայկ, Հայկ,*

Հայկ...) Եկել է մեր տունը շենացնելու ու ընդարձակելու ժամանակը: Կարգադրություն եմ անում որդիներին. Արամանյակ, դու կգնաս վեր, դեպի քառագագաթ լեռը ու նրանից էլ անդին: Կաղմոն, վերադարձիր Աղի լճի երկիրը: Մանավա՛զ, դու գնա Արարադ լեռան աշխարհը: Խոռին ուղարկում եմ Անապական լճի կողմը: Գնացե՛ք ու տեր եղե՛ք: Ես մնում եմ էստեղ, Թորգոմա տանը, էստեղից կհետևեմ ձեր գործերին ու պատասխան կուզեմ ձեզնից: *(Բացականչություններ՝ Հայկ, Հայկ, Հայկ...)* Դե, զարկե՛ք թմբուկը, թող թնդա Թորգոմա Տան պարը:

Թմբուկն ու գոռնան խրոխտ պարեղանակ են հնչեցնում, բոլորը, կողք-կողքի, շուրջպար են բռնում:



Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ

«Անանուն» ավարտեցի: Դրված է վերջին նախադասության վերջակետը, բայց, թատրոնի լեզվով ասած, դերից դեռ չեմ կարողանում դուրս գալ: Դա նրանից չէ, որ ինքս իմ նոր գրվածքով հիացած եմ ու ստեղծագործողիս վայելքն եմ ուզում երկարացնել: Ես տխրում եմ:

Մոլորակի բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ էլ են ունեցել ողբերգական անցքեր, բայց անհամեմատ տևական են եղել նրանց

հպարտության, հաղթանակների, բարեկեցության ժամանակաշրջանները, որոնք իրենց արտացոլումն են գտել իրենց ստեղծած գեղարվեստում: Մենք ենք, որ մեր ուրախությունները, հպարտությունները, հերոսությունները մեծ մասամբ պարփակում ենք ապառնի ըղձակամում:

Դար ու դարերով հայ գրողը դատապարտված է իր ժողովրդին պատուհասած ողբերգություններն արտահայտելուն: Եվ աշխարհի ժողովուրդներից հասկացված լինելու հույսը մնում է այն, որ նրանք էլ այս կամ այն չափով ունեցել են այդպիսի պատուհասներ:

Խոսքը հենց այս կամ այն չափի մասին է, որը մեզանում գոյություն չի ունեցել և խորապես ներագրել է ոչ միայն մեր հոգևոր մշակույթի, այլև մեր իսկ ազգային ժառանգական որակի վրա:

Ֆրանսիացի նշանավոր գեղագետ Հիպոլիտ Տենը դեռևս նախանցած դարում է նկատել, որ մարդկային մտքի արտադրությունները բացատրվում են միայն իրենց միջավայրով, և որ յուրաքանչյուր ստեղծագործող իր ժամանակի բարքերի ու հասարակական մտքի արտահայտողն է:

Այդպես եղել է, այդպես կա և վկայագրերից մեկն էլ, սիս, «Անանուն» է:

ԱՆԱՆՈՒՆԸ

(դրամա մեկ գործողությամբ, չորս պատկերով)

Գործող անձինք

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

ԹԱԳՈՒՅԻ (ձայնը)

ԳԼԱԴԻԱՏՈՐ (ԱՆԱՆՈՒՆ)

ՄԻՈՏԱՆԻ

ԿԻՆ

ԳՆԴԱՊԵՏ

ՍԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (ձայնը)

Առաջին ՍՏՎԵՐ (ձայնը)

Երկրորդ ՍՏՎԵՐ (ձայնը)

Երրորդ ՍՏՎԵՐ (ձայնը)

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Գերեզմանոց: Թաց, ցուրտ երեկո:

Սովերներ են անցնում:

ԱՌԱՋԻՆ ՍՏՎԵՐ - (մանկան ձայնով): Մեր հայրերն այստեղ են:

ԵՐԿՐՈՐԴ ՍՏՎԵՐ - (մանկան ձայնով): Նրանք չհասցրեցին հայրանալ:

ԵՐՐՈՐԴ ՍՏՎԵՐ - (մանկան ձայնով): Մենք չծնվեցինք:

Կնգուղով թիկնոց հագած Գերեզմանափորը բորբոքում է օջախի կրակը, որի վրա թեյնիկ է հարմարեցրած: Նրա դեմքը չի երևում:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ցրտերն սկսվեցին: Հողն ամրանալու է, փորելը կդժվարանա: (Փչում է կրակի վրա:) Մեռածին ինչ կա, նա իր փոսի տերն է: Պատերազմն ավարտվեց, բայց դեռ բերում են ու բերում... Տեսնենք, տեսնենք... (Ականջ է դնում: Հեղուկներն են լսվում, բազմաթյան ձայներ՝ պաղատագին, բողբոջ, պահանջող:) Չախակողմյան լանջն սկսեց իր ելույթը: Ոչ ոք չի ուզում դավաճանի խարանոփ մեռնել: Թե՛ ինչ տարբերություն, բոլորդ էլ անանուն թաղված եք:

(Ուսասպարկից ալյումինե ջրաման է հանում, պարբերաբար վում թեյելու:) Աջակողմում էլ հերոսներն են, մահաբաններով, ծաղկեպսակներով... Ինչ տարբերություն... (Անհասկանալի շնչոցներից առանձնանում է մեկը՝ աստիճանաբար մտրենում. «Ես ինքնասպան չեմ եղել... Ես դավաճան չեմ եղել...»:)

Ուրվագծվում է մոտեցող Գլադիատորը:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ես ինքնասպան չեմ եղել... Ես դավաճան չեմ եղել... *(Մտրենում, կքանսարում, ասիերը մեկնում է կրակին: Գերեզմանասիրին:)* Ես ինքնասպան չեմ եղել: *(Մրափում է:)* Ես դավաճան չեմ եղել...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինչ տարբերություն:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ինձ սպանեցին: Դավաճանաբար, դեմ առ դեմ: Իմ հրամանատարն ինձ սպանեց:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինչ տարբերություն:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Նրանք ինձ որպես ինքնասպանի թաղեցին՝ առանց պատիվների, որպես մի վախկոտի...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - *(ջրամանում թեյ լցնելով):* Երեկ էլ մեկն էր եկել՝ հաղթանդամ, մորուքով: Ասաց՝ կամավոր է մեկնել ու հենց առաջին մարտում սրտից խոցվել է... Ինչ տարբերություն:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Սրտից:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Այդպես էր ասում: Թեյ խմիր՝ կտաքանաս: *(Մեկնում է ջրամանը:)*

ԳԼԱԴԻԱՏՈՐ - *(վերցնում է):* Շանտ կան այդպիսիները:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Կամավորներ:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Սրտից խոցվածներ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինձ ես հարցնում: Չախակողմյան լանջը պատերազմի ժամանակ նրանցով լցվեց: Բոլորը սրտից են խոցված, ինչպես դու:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Նրանք բոլորը դավաճան են համարվել:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Բոլորը, քանի որ վախկոտությունից ինքնասպան են եղել:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ես ինքնասպան չեմ եղել, ես չեմ դավաճանել: Ես չեմ պարտվել: Ինձ սպանել են... դեմ առ դեմ, հրամանատարը՝ դեմ առ դեմ...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Իսկական հերոսները՝ խեղված են, ան-

ճանաչելի խեղված... անգլուխ, անձեռք, անոտք, պատահում է՝ աղիները դուրս թափված... Այնքան խեղված, որ մայրը որդուն չի ճանաչում: Նրանք մարտնչել են մինչև վերջին շունչը:

ԳԼԱԳԻԱՏՈՐ - Ես էլ էի մարտնչում, խիզախաբար էի մարտնչում: Ես չեմ պարտվել: Բայց հրամանատարը ձայն տվեց, ետ կանչեց ու հարցրեց՝ արդյոք չեմ վիրավորվել, արյուն չեմ կորցրել: Ես պարծանքով ասացի, որ քերծվածք անգամ չունեմ և նա... Նա մերկացրեց դաշույնն ու խրեց սրտիս մեջ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Չեմ ուզում քեզ վշտացնել, բայց բոլորը նույնն են ասում: Կարելի է կարծել, թե մեր քաջարի հրամանատարն ավելի շատ է յուրային սպանել, քան՝ թշնամին:

ԳԼԱԳԻԱՏՈՐ - Թքած բոլոր տեսակի կարծիքների վրա: Այսօր ես թաղված եմ դավաճանների գերեզմանոցում, պարտվածների գերեզմանոցում՝ առանց մի հուշաքարի, անպատիվ, նզովված... Բայց ես չեմ պարտվել: Եթե հրամանատարը ինձ ձայն չտար, ետ չկանչեր, ես մխրճված կլինեի թշնամու ջո-

կատի մեջ ու բոլորին սրախողխող կանեի, ինչպես երեք տարի առաջ արենայում սրատեցի հովազների ոհմակի: Դու ինձ չեմ ճանաչում: Ես Անպարտ Գլադիատորն եմ: Ես չեմ ընկրկել և ոչ մի այսոյանի առջև...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ես ճանաչում էի այդպիսի մեկին: Նրանով հիացած էր Թագուհին:

ԳԼԱԳԻԱՏՈՐ - Ես եմ: Համոզված եմ, որ Թագուհին, լսելով իմ սպանվելու լուրը, շատ վշտացած կլինի:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Չեմ կարծում: Նրան կգեկուցեն, որ վախկոտաբար ինքնասպան ես եղել:

ԳԼԱԳԻԱՏՈՐ - Ես... Ես՝ վախկոտաբար... Թագուհին ինձ անձամբ ճանապարհեց ռազմաճակատ, ես նրա կամքով գնացի, նրա հանձնարարությամբ՝ հերոսի դասինի բերելու պատվիրանով:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Խմիր թեյդ, տիրակալները զինվորներին միշտ ռազմաճակատ են ճանապարհում՝ նրանց հերոսության կոչելով:

ԳԼԱԳԻԱՏՈՐ - Մի՞թե հերոսություն չէ հանուն հայրենիքի թշնամու դեմ կռվելը, հանուն հայրենիքի զոհվելը:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Հերոսություն է... ապրողների համար:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Իսկ նահատակվածներին, զոհվածներին...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Նրանք իրենց հուշարձաններով ոգեշնչում են նոր սերնդին՝ զոհվելու համար:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Իսկ ես նույնիսկ շիրմաքար չունեմ...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Իսմիր թեյդ, բարեկամ: Դուք բոլորդ, ի վերջո, հերոս լինեք, թե դավաճան, անանուն եք, անհայտ զինվոր: Ինչ տարբերություն: Փոխվում է սերունդը՝ հիշողությունը խամրում է, մինչև որ նոր հերոսների և դավաճանների շիրիմներ են ավելանում: Միայն այդքանը: Գերեզմանն անվան համար չէ: Դամբարանն է անուն ունենում:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ինձ դամբարան պետք չէ, բայց ես չեմ էլ ուզում դավաճանների հետ պառկել՝ թեկուզ մեկ սերնդի հիշողության համար... Ես չեմ պարտվել: Ես դավաճան չեմ, ես ինքնասպան չեմ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինչ տարբերություն:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Կատարվել է ահավոր հանցագործություն:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Պատերազմն

ինքնին հանցագործություն է ու հազարավոր, միլիոնավոր հանցագործությունների վայր:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ես հանուն հայրենիքի էի գնացել:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Բոլորն են հանուն հայրենիքի գնացել, բայց պարտվեցինք:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ես չեմ պարտվել:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Մի պահ լռիր ու ականջ դիր:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ասա, ես քեզ լսում եմ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինձ չէ, ականջ դիր ձախակողմյան լանջից լավող ձայներին:

Լռում են: Հեռվից լսվում է բողոքող, պահանջող բազմաձայն շնչոցը, որն արդեն ընկալելի է. «Ես ինքնասպան չեմ եղել... Ես չեմ պարտվել... Ես դավաճան չեմ...»:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Լսեցիր: Բոլորդ նույն բանն եք ասում:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - *(ջրամանը դնելով գեյրնին՝ ուրբի է ելնում)*: Թագավորը, Թագուհին պետք է իմանան, որ հրամանատարն է մեզ սպանել: Նա դավաճան է: *(Գնում է:)*

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Հեյ, բարեկամ, դու ճիշտ ճանապարհով չես գնում, քո գերեզմանն այս թևի վրա է:

Գերեզմանափորը դատարկում է ջրամանը, ճյուղեր է ավելացնում օջախին:

Ցածր, հետզհետե բարձրաձայն շնչոցներ են լսվում, բազմության ձայներ՝ խրոխտ երանգներով:

Ուրվագծվում է մոտեցող Միոտասին՝ հենակով, դեմքին՝ փակ սաղավարտ:

ՄԻՈՏԱՆԻ - Ես հերոսաբար զոհվեցի... Ես հերոսաբար զոհվեցի... *(Մոտենում, կրանստում, ասիերը մեկնում է կրակին: Գերեզմանափորին:)* Ես հանուն հայրենիքի զոհվեցի, հերոսաբար: *(Մրափում է:)* Ինձ զինվորական պատիվներով թաղեցին... Դու տեսար, չէ՞, թե ինչքան ճոխ էր իմ թաղումը:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինչ տարբերություն:

ՄԻՈՏԱՆԻ - Պատվո պահակախումբը յոթ համազարկ տվեց...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինչ տարբերություն:

ՄԻՈՏԱՆԻ - Հրամանատարները, գնդերալները, բոլորն այստեղ էին:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - *(ջրամանում թեյ լցնելով):* Երեկ էլ մեկն էր եկել՝ աղիները դուրս թափված: Ասաց, որ իրեն հետմահու հերոսի կոչում է շնորհվել... Ինչ տարբերություն:

ՄԻՈՏԱՆԻ - Հերոսի՞...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Այդպես էր ասում: Թեյ խմիր՝ կտաքանաս: *(Մեկնում է ջրամանը:)*

ՄԻՈՏԱՆԻ - *(վերցնում է):* Շանկան այդպիսիները:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Հերոսներ:

ՄԻՈՏԱՆԻ - Չէ, աղիները դուրս թափված:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինձ ես հարցնում: Աջակողմյան լանջը պատերազմի ժամանակ հերոսներով լցվեց:

ՄԻՈՏԱՆԻ - Նրանք բոլորը հերոս են համարվել:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Բոլորը, քանի որ հերոսաբար են զոհվել:

ՄԻՈՏԱՆԻ - Ես էլ հերոսաբար զոհվեցի: Ուոքս կորցրի և գլխիս մի մասը: Այլանդակ տեսք ունեմ: Դրա համար էլ սաղավարտ եմ դնում: Կողքիս թաղվածները դժգոհում էին իմ այլանդակ տեսքից, ես էլ սաղավարտ դրեցի: Բայց ինչո՞ւ ինձ հերոսի կոչում չշնորհեցին, հետո՞ ինչ, որ իմ աղիները դուրս թափված չեն:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Իսկական հերոսները խեղված են, անճանաչելի խեղված... Այնքան խեղված, որ մայրը որդուն չի ճանաչում: Նրանք մարտնչել են մինչև վերջին շունչը:

ՄԻՈՏԱՆԻ - Ես էլ եմ մարտնչել, խիզախաբար եմ մարտնչել՝ մինչև վերջին շունչս:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ես չեմ ուզում քեզ վշտացնել, բայց բոլորը նույնն են ասում:

ՄԻՈՏԱՆԻ - Մի՞թե հերոսություն չէ հանուն հայրենիքի թշնամու դեմ կռվելը, հանուն հայրենիքի զոհվելը:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Հերոսություն է... ապրողների համար:

ՄԻՈՏԱՆԻ - Իսկ նահատակվածների, զոհվածների...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Նրանք իրենց հուշարձաններով ոգեշնչում են նոր սերնդին՝ զոհվելու համար:

ՄԻՈՏԱՆԻ - Իմ շիրմի վրա շքեղ հուշարձան է դրված:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Խմիր թեյդ, բարեկամ: Դուք բոլորդ, ի վերջո, հերոս լինեք, թե դավաճան, անանուն եք, անհայտ զինվոր: Ինչ տարբերություն: Փոխվում է սերունդը՝ հիշողությունը խամրում է, մինչև որ նոր հերոսների ու դավաճանների շրիմներ են ավելանում: Միայն այդքանը: Գերեզմանոցը անունների համար չէ: Դամբարաններն են անուններ ունենում:

ՄԻՈՏԱՆԻ - Ինչու մեր վրա դամբարան չկառուցվեց, ինչո՞ւ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Դամբարանը տիրակալների համար է:

ՄԻՈՏԱՆԻ - Դա արդարացի չէ, տիրակալները իրենց մահով են մեռնում՝ ճոխ ու երանավետ կյանք ապրելուց հետո:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինչ տարբերություն:

ՄԻՈՏԱՆԻ - Մենք հերոսաբար էինք մարտնչում, բայց դավադրաբար պարտվեցինք: Կատարվել է անհավոր հանցագործություն:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Պատերազմն ինքը հանցագործություն է ու հազարավոր, միլիոնավոր հանցագործությունների վայր:

ՄԻՈՏԱՆԻ - Ես հանուն հայրենիքի էի գնացել:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Բոլորն են հանուն հայրենիքի գնացել, բայց պարտվեցինք:

ՄԻՈՏԱՆԻ - Երկիրը դավադրաբար պարտվեց: Բայց զինվորը չի պարտվել, նա խիզախորեն, մինչև վերջին շունչը մարտնչել է: Ես չեմ պարտվել, չեմ պարտվել:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Մի պահ լռիր և ականջ դիր:

ՄԻՈՏԱՆԻ - Ասա, ես քեզ լսում եմ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինձ չէ, ականջ դիր աջակողմյան լանջից լսվող ձայներին:

Լոռում են: Հեռվից լսվում է բազմա-
ձայն շնչոցը, որն արդեն ընկալելի
է. «Ես հերոսաբար գոհվեցի, հա-
նուն հայրենիքի... Ես հերոսաբար
գոհվեցի...»:

ՄԻՈՏԱՆԻ - (ջրամանը դնելով
գեղընին՝ ուրբի է ելնում): Ես
մեր տուն եմ ուզում գնալ: Մորս
կարոտել եմ, գոնե երագով
կտեսնվենք: (Գնում է:)

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Հեյ, բարե-
կամ, դու ճիշտ ճանապարհով
չես գնում, քո տունն այլևս չկա,
ավերված է:

Գերեզմանափորը դատարկում է
ջրամանը, ճյուղեր է ավելացնում
օջախին:

Ստվերներ են անցնում:

ԱՌԱԶԻՆ ՍՏՎԵՐ - (մանկան ձայ-
նով): Հիմա մենք ո՞ր գնանք:

ԵՐԿՐՈՐԴ ՍՏՎԵՐ - (մանկան ձայ-
նով): Այնտեղ, ուր մեր հայրերն
են:

ԵՐՐՈՐԴ ՍՏՎԵՐ - (մանկան ձայ-
նով): Հերոսներ, թե՛ դավաճան-
ներ...

Լսվում է անհասկանալի շնչոց, մո-
տեցող սևազգեստ կնոջ առաջանա-
լու հետ ընկալելի է դառնում նրա
խոսքը:

ԿԻՆ - Որտե՞ղ ես, որդիս... զա-

վակս, որտե՞ղ ես... (Մորենում,
կքանսարում, ասիերը մեկնում է
կրակին: Գերեզմանափորին:)

Ես իմ որդուն եմ փնտրում:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Հիմա բոլորն
են իրենց որդիներին փնտրում:

ԿԻՆ - Նա գեղեցիկ էր, հաղթան-
դամ...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Բոլորն էին
գեղեցիկ ու հաղթանդամ:

ԿԻՆ - Նա խիզախ էր, հայրենա-
սեր...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ի՞նչ տար-
բերություն: (Ջրամանում թեյ
լցնելով:) Այս լանջերին բոլորն
են խիզախ, հայրենասեր... Դու
հաղթանդամ ասացիր... (Մեկ-
նում է ջրամանը:) Թեյ խմիր՝
կտաքանաս:

ԿԻՆ - (վերցնում է): Այո, նա հաղ-
թանդամ էր:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Դու քո որ-
դուն չես գտնի: Եթե հաղթան-
դամ էր՝ ձախակողմյան լանջին
է թաղված, առանց դագաղի,
առանց հուշաքարի:

ԿԻՆ - Բայց ինչո՞ւ առանց դագա-
ղի, փայտ չկա՞ր... Ինչո՞ւ առանց
հուշաքարի, քար չկա՞ր...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Մինչև պա-
տերազմը ձախ սարավանջին
մայրիների պուրակն էր: Ծա-
ռերը հատեցին՝ խիզախ ու հե-

րոսաբար զոհվածների համար դագաղներ պատրաստեցին, իսկ ինքնասպան դավաճաններին թաղեցին առանց դագաղի:

ԿԻՆ - Իմ որդին խիզախ էր:

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Բայց հաղթանդամ էր, ասում ես:

ԿԻՆ - Հաղթանդամ էր:

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Զուր մի փնտրիր: Բոլոր հաղթանդամները ձախակողմում են՝ առանց դագաղի, առանց հուշաքարի: Նրանք պարտվածներն են, դավաճանները: Թեև ինչ տարբերություն:

ԿԻՆ - Պարտվածները... դավաճանները... Բայց այդ մեղադրանքն ապրողներիս են ասում, մե՛զ, որ ռազմաճակատում մարտնչող զինվորների համար գիշեր-ցերեկ գուլպաներ էինք գործում, պարեն ու միջոցներ էինք հայթայթում...

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Ի՞նչ տարբերություն:

ԿԻՆ - Մի՞թե այստեղ միայն հերոսները չեն, նրանք, ովքեր զոհվեցին հանուն հայրենիքի:

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Ի՞նչ տարբերություն:

ԿԻՆ - Մի՞թե հերոսություն չէ հանուն հայրենիքի թշնամու դեմ

կռվելը, հանուն հայրենիքի զոհվելը:

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Հերոսություն է... ապրողների համար:

ԿԻՆ - Իսկ նահատակվածների, զոհվածների...

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Նրանք իրենց հուշարձաններով ոգեշնչում են նոր սերնդին՝ զոհվելու համար:

ԿԻՆ - Ուրեմն... ուրեմն զոհվելու համար ենք որդիներ ծնում և իմ դուստրն էլ է որդեկորույս մայր լինելու:

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Քո դուստրն էլ: Խմիր թեյդ, որդիներն ի վերջո անանուն զինվորներ դառնալու համար են: Հերոս լինեն, թե դավաճան, ինչ տարբերություն: Փոխվում է սերունդը՝ հիշողությունը խամրում է, մինչև որ նոր հերոսների և դավաճանների շիրիմներ են ավելանում:

ԿԻՆ - Իմ որդին հանուն հայրենիքի է զոհվել:

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Բոլորն են հանուն հայրենիքի զոհվել, բայց պարտվեցինք:

ԿԻՆ - Կատարվել է ահավոր հանցագործություն:

ԳԵՐԵՋՄԱՆԱՓՈՐ - Պատերազմն ինքը հանցագործություն է ու հազարավոր, միլիոնավոր

հանցագործությունների վայր:
ԿԻՆ - Իմ որդին դավաճան չէ, նա չի պարտվել:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Մի պահ լռիր և ականջ դիր:

ԿԻՆ - Ասա, ես քեզ լսում եմ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ինձ չէ, ականջ դիր լանջերից լսվող ձայներին:

Լռում են: Աջ ու ձախ կողմերից՝ միաժամանակ, լսվում են բազմաձայն շնչոցներ.

- Հանուն հայրենիքի ես հերոսաբար զոհվեցի... ես հերոսաբար զոհվեցի...

- Ես ինքնասպան չեմ... ես դավաճան չեմ... Ես չեմ պարտվել...

ԿԻՆ - (ջրամանը դնելով գեպրին՝ ուրբի է ելնում): Ես գնամ... Որդիս երևի տուն է գնացել: Գոնե երազում կտեսնվենք:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ո՛ր պիտի գնաս, դու քո տունն այրեցիր, որ թշնամուն չթողնես:

ԿԻՆ - Իմ տան հիմքերը կան...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Քո տան հիմքերի վրա թշնամին է նստած:

ԿԻՆ - Ես այդ հիմքերի վրա գավակ կծնեմ, անմահ գավակ: (Գնում է:)

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Հե՛յ, բարեկամ, դու ճիշտ ճանապարհով չես գնում, քո երկիրն արդեն

այդտեղ չէ: (Դատարկում է ջրամանը, ձյուղեր է ավելացնում օջախին:)

Ստվերներ են անցնում:

ԱՌԱՋԻՆ ՍՏՎԵՐ - (մանկան ձայնով): Վերադառնա՛նք Երկիրք:

ԵՐԿՐՈՐԴ ՍՏՎԵՐ - (մանկան ձայնով): Բայց նա մեզ ուղարկեց ծնվելու...

ԵՐՐՈՐԴ ՍՏՎԵՐ - (մանկան ձայնով): Մենք կեսճամփին մնացինք:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Մեծադիր էկրան, որի վրա եկեղեցու խորան է պատկերված և Աստվածամայրը՝ շրջապատված բազմաթիվ մանուկներով, մանուկ Հիսուսին գրկած:

Բեմի վրա՝ խորանի առջևում, մկրտության ավազան կա, որի մեջ լույս է մլմլում:

Կինը, հառված սրբապատկերին, աղոթում է:

Խմբային աղոթք է արձագանքվում, որի բառերը պարզ չեն ընկալվում:

Մանուկների պատկերները մեկ առ մեկ ճառագայթում, էկրանից անէանալով՝ լույսի շիթով ծորում են ավազանի մեջ: Երբ մնում է միայն Հիսուսին գրկած Աստվածածինը՝ աղոթքը մարում է:

ԿԻՆ - *(խաչակնքվելով՝ սրբապատկերին):* Մուրք Մարիամ Աստվածածին, օգնիր ինձ կրկին զավակ ունենամ:

ՄԱՐԻԱՄ - *(ձայնը):* Դու ունեիր զավակ և նա զոհվեց:

ԿԻՆ - Ինձ անմահ զավակ տուր:

Գմբեթից ավագանի վրա լույսի շեղբ է ծորում:

ՄԱՐԻԱՄ - *(ձայնը):* Քո աղոթքն ընդունելի եղավ: Վերցրու: *(Նույն պահին մանուկ Հիսուսն անէսնում է նրա գրկից:)*

Կինը շքվում, դուրս գնում: Նրա գրկում նորածնի բարուր կա:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Էկրանի վրա՝ թագավորական պալատի սրահ:

Մեծադիր հայելու առջև կանգնած Գնդապետը հիանում է կրծքի շքանշանով:

Մտնում է Գլադիատորը:

ԳՆԴԱՊԵՏ - Օ՛, բարեկամ, առաջ արի: Քեզ հրավիրել են հետմահու պարգևատրելո՞ւ համար:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ոչ: Ինքս եկա:

ԳՆԴԱՊԵՏ - Իսկ ինձ հրավիրել էին: Անձամբ թագավորն էր հրավիրել: Քո շնորհիվ բարձ-

րագույն պարգևի արժանացա: **ԳԼԱԴԻԱՏՈՐ** - Իմ շնորհիվ...

ԳՆԴԱՊԵՏ - Այո: Ահա՛ «Հայրենիքի փառք» 2-րդ աստիճանի շքանշանս:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Իմ շնորհիվ...

ԳՆԴԱՊԵՏ - Ճիշտ այդպես: Չէ՞ որ դու ամենահայտնի, ամենանշանավոր գլադիատորն էիր: Ես քո հրամանատարը լինելու պատիվն եմ ունեցել:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Իսկ ինչո՞ւ 1-ին աստիճանի շքանշան չսովեցին:

ԳՆԴԱՊԵՏ - Դու վատ մի զգա, մեղքը իմն է:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Իսկ ի՞նչ մեղքը որն էր, երբ դու, դեմ առ դեմ...

ԳՆԴԱՊԵՏ - Սպասիր, սպասիր: Դու կարծես չես հաշտվել այն մտքի հետ, որ զոհվել ես հանուն թագուհու:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ես հանուն հայրենիքի եմ ռազմաճակատ գնացել:

ԳՆԴԱՊԵՏ - Ճիշտ է, դու հանուն հայրենիքի ես ռազմաճակատ գնացել, բայց զոհվել ես հանուն թագուհու:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Թագուհուն վտանգ էր սպառնում:

ԳՆԴԱՊԵՏ - Մեծ վտանգ: Նա կորցնում էր իր գեղեցկությունը, թարմությունը, կիրքը...

Ինքդ դատիր, ղմ է պետք խոր-
շունած, կնճիռների մեջ թաղ-
ված, կուզը դուրս գցած թագու-
հին, որը նույնիսկ արտաքնոց
գնալիս նաժիշտների օգնութ-
յան կարիքն ունի:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Բայց ինչ կապ ու-
նեմ դրա հետ, մի՞թե իմ ապրե-
լը ծերացնում էր նրան:

ԳՆԴԱՊԵՏ - Քո ապրելը նրան
չէր ծերացնում, բայց մեռնելը
նրան երիտասարդ ու թարմ
կյանք ապահովեց:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Անհասկանալի
բաներ ես խոսում, հրամանա-
տար, փորձում ես քո հանցա-
գործությունը կոծկել հնարովի
պատմություններով:

ԳՆԴԱՊԵՏ - Ամենևին: Հիմա, երբ
արդեն դու մեռած ես, ես կա-
րող եմ քեզ ասել գաղտնիքը:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Ասա, լսում եմ:

ԳՆԴԱՊԵՏ - Վաղուց ի վեր հայտ-
նի է, որ առողջ, հաղթանդամ,
խիզալիս գլադիատորների ար-
յունը երիտասարդացնում է
մարդուն: Տիրակալները դա
խիստ գաղտնի են պահում:
Թագուհին արդեն խորշումելու
վտանգի մեջ էր, իսկ թագավո-
րի գանձարանում այնքան գու-
մար չկար, որ հարևան երկրնե-
րից հաղթանդամ առողջների

արյուն գներ, այն էլ՝ մեծ քա-
նակով, միշտ թարմ... Եվ մեր
տիրակալը հանճարեղ միտք
հղացավ՝ գանձարանը լցնե-
լու համար պատերազմի հրա-
վիրել դարավոր թշնամուն ու
ռազմաճակատ գորակոչել նաև
երկրի հաղթանդամ գլադիա-
տորներին:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Բայց մենք պարտ-
վեցինք...

ԳՆԴԱՊԵՏ - Հենց դա է թագա-
վորի մտքի հանճարեղությու-
նը: Պարտվեցինք թշնամուց
մեծ գումար կորզելու պայմա-
նով: Թագավորը միանգամից
հարստացավ, իսկ թագուհին
ապահովվեց գլադիատորնե-
րից արյան մեծ պաշար վերց-
նելով:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Բայց ինչո՞ւ մեզ՝
գլադիատորներիս դավաճան
անվանեցին, վախկոտ, ինք-
նասպան:

ԳՆԴԱՊԵՏ - Եթե այդպես չլինե՞ր՝
գաղտնիքը կբացահայտվեր, չէ՞
որ հազարավոր գլադիատոր-
ների պետք է խոցվեին միմիայն
սրտից, քանի որ սրտից հոր-
դող արյունն ամենամաքուրն է:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Դու ուզում ես
ասել, որ իմ արյունը...

ԳՆԴԱՊԵՏ - Այո, այո, քո արյունը

ես հասցրեցի թագուհուն՝ մի մեծ անոթով: Յավոք, մի քանի կաթիլ ծորաց վերնաշապիկիդ վրա ու դրա համար էլ ինձ տվեցին 2-րդ աստիճանի շքանշան և ոչ թե առաջին աստիճանի:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Հանցագործություն է կատարվել...

ԳՆԴԱՊԵՏ - Ինչո՞ւ այդքան խիստ, բարեկամ, ինչո՞ւ այդքան խիստ... Ընդամենը իմ անփութության արդյունքն էր, որ ամբողջ արյունդ չկարողացա վերցնել:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Հանցագործ...
(Մրարձակ հարձակվում է Գնդապետի վրա:)

ԳՆԴԱՊԵՏ - (սուրը մերկացնելով պաշտպանվում է): Ինքդ ես հանցագործը... Քո ահեղ հայացքը գամվեց աչքերիս մեջ ու ահից ձեռքս դողաց...

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Սրիկան... (Մահացու հարված է հասցնում:)

ԳՆԴԱՊԵՏ - (օրորվում է): Զգուշացիր զոհվածների վրեժից... (Անշնչացած փախալվում է:)

Մթնեցում:

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Գերեզմանոց: Օջախի մոտ նստած Գերեզմանափորը շարունակում է բորբոքել կրակը:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Հերթով գալիս են ու գնում... Ապրում են հավերժանալու հույսով, մեռնում են հավերժանալու հավատով: Ու ոչ մեկը չի գիտակցում, որ կյանքում հավերժականը, միակն ու վերջինը գերեզմանափորն է: Այն միակ վերջինը, որն ինքը՝ գերեզմանափոր չի ունենալու...

ԱՆԱՆՈՒՆ - (ձայնը): Վերջինը դու չես, գերեզմանափոր, զուր հույսեր մի փայփայիր:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ո՞վ է խոսողը... հե՛յ, ո՞վ կա այդտեղ:

ԱՆԱՆՈՒՆ - Ես եմ՝ Անանունը: (Թիկնոցով փաթաթված մոտենում է:)

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Այս գերեզմանոցում բոլորն են անանուն:

ԱՆԱՆՈՒՆ - Ես նրանց չապրած կյանքն եմ ու ապրողների ոգին:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - (նորքի ելնելով, զգուշավոր ետ է քաշվում): Ոգին աներևույթ է լինում:

ԱՆԱՆՈՒՆ - Ու երևութանում է մեկի կերպի մեջ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Եվ ո՞ւմ կերպի մեջ ես դու հիմա:

ԱՆԱՆՈՒՆ - Գլադիատորի: Նա քիչ առաջ սրախողխող արեց դավաճան հրամանատարին:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Մեծ կորուստ չէ, մանավանդ պատերազմն ավարտվել է:

ԱՆԱՆՈՒՆ - Պարտությամբ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Այս պատերազմում պարտվողներ չեն եղել: Բանակն ու ժողովուրդն անպարտ էին, իսկ տիրակալները հաղթանակ տոնեցին յուրովի:

ԱՆԱՆՈՒՆ - Բայց ժողովուրդը սգավոր է:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Կորուստների ցավն է նրանց պատել, ժամանակը կբուժի:

ԱՆԱՆՈՒՆ - Կբուժի, բայց չի ների:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Ո՞ւմ...

ԱՆԱՆՈՒՆ - Դավաճաններին:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Դավաճան հրամանատարն արդեն սպանված է:

ԱՆԱՆՈՒՆ - Օձի պոչն է կտրված, գլուխը կենդանի է:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - *(անսպասելի՝ թորթորված)*: Անմիտ բաներ ես ասում: Քեզ չի հաջողվի ըմբռնություն սերմանել:

ԱՆԱՆՈՒՆ - Մարդիկ արդարության ծարավ ունեն:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - *(գիհրական)*:

Վերջ տուր կեղծ բարոյականություն քարոզելուն: Արդարության ծարավ... Մարդկության պատմությունը լի է այդ աղբով ու ոչ մի անգամ և ոչ մեկին չի հաջողվել դրանով հաղթանակ տոնել:

ԱՆԱՆՈՒՆ - Հանուն արդարության մարդկության պայքարը չի ավարտվել, գերեզմանափոր, դա սերունդների պայքար է:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Մոլորվածներ: Ունակ չեղաք հասկանալու, որ արդարությունը, հավատարմությունը, հայրենասիրությունը ամբոխի համար ստեղծված աղանդներ են, թույլերի, անճարների համար հորինված կտակարաններ: Չգիտակցեցիք բնության իրական էությունը:

ԱՆԱՆՈՒՆ - Եվ ճորն է այդ իրական էությունը, գերեզմանափոր:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Տիեզերքին նայիր: Կործանումների անդադար ու մոլագար ընթացք է, անողոք պայքար: Եվ չկա մեկը, որ ողբա կամ *գոնե* ափսոսա միլիոնավոր աստղախմբերի խավարումը: Չկա մեկը, որ *դասրասպարտի* ահեղակործան այդ հավերժական ընթացքը: Ուրեմն ինչո՞ւ պիտի նույն

Տիեզերքի ստեղծած մարդուկներս հնարովի գաղափարներով սնվենք:

ԱՆԱՆՈՒՆ - Դու շիրմափոսից վեր ոչինչ չես գիտակցում, *գերեզմաննափոր*, այնպես, ինչպես գերեզմանի որդը, որ երկնքում *սափառնող* արծվին նայելով զարմանում է, թե ինչո՞ւ է վերևում սողացող այդ կենդանու գետինը կապույտ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Վերջ տուր, ասացի, խոովարա՛ր: Անհեթեթ մտքեր, որ սոսկ համեմունք են դառն պատահող կուտալու համար: Արծվին ճախրելու ուժ է տալիս մոկը, որին իր ճիրաններով որսում և խժռում է գիշատիչ թռչունը: Կյանքը պայքար է, գոյամարտ, և այդ գոյապայքարում մարդու ճիրանները նենգությունն են, խաբեությունը, նախանձն ու ռիսակալությունը, փառասիրությունն ու դավադրությունը, դավաճանությունն ու բռնությունը, ավազակությունն ու թալանը, մարդասպանությունն ու անարդարությունը: Չկա պայքար՝ չի լինի ոչինչ:

ԱՆԱՆՈՒՆ - Դու տիրակալի պես ես դատում, գերեզմանափոր...

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Տիրակալ-

ներն են առաջնորդում փառավոր այդ գոյամարտը, Անանուն, տիրակալները... Նրանց և միայն նրանց է հասու կյանքի ճիշտ ընթացքի գաղտնիքը: Ահա թե ինչու չի եղել մի տիրակալ, որ դեղի հետ թույն չունենա, հրուշակի հետ՝ լեղի:

ԱՆԱՆՈՒՆ - Ուրեմն, չկա՞ մի տիրակալ, որ գերեզմանափոր չլինի:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Կյանքը մեծ գոհասեղան է, Անանուն, որի ճարտարապետը տիրակալներն են:

ԱՆԱՆՈՒՆ - Կյանքի ընթացքը չի կարող մահ տարածելով լինել, գերեզմանափոր:

ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ - Մահը վերջնակետն է: Նրան հասնելու ճանապարհը սարսափներով պետք է պատել, որ ամբոխը հնազանդ լինի: Այլ ելք չկա: Ճարտասանի լեզուն կտրելով, ճախրողի թևերը կտրելով, սիրո փոխարեն ատելություն, վշտացողի վրա՝ ծիծաղ, բարոյականին՝ հեզանաք, գիտունին՝ ծաղր, լույսի դեմ խավար, խավարի մեջ ահ, ահի մեջ սարսափ տարածելով է պահպանվում պատմության ընթացքը:

ԱՆԱՆՈՒՆ - Հանիր քաթանե թիկ-

նոցդ, արքա, առանց դրա էլ
դու գերեզմանավոր ես:

Երկուսն էլ մի կողմ են նետում թիկ-
նոցները: Սրամարտ:

Գլադիատորը կտրուկ հարվածով
կտրում է ախոյանի գլուխը:

Լսվում է Թագուհու դիվային քրքիջը:

ԳԼԱԴԻԱՏՈՐ - Թագուհի... (Չորս
կողմն է նայում:) Որտեղ ես,
վիուկ, դուրս արի թաքստոցից:

Անգլուխ թագավորի մարմինը,
կտրուկ շրջվելով, փախչում է:

ԹԱԳՈՒՀԻ - (հեռվից): Ես անմահ
եմ, Գլադիատոր, քանի դեռ քո
արյունն է իմ մեջ...

Ժխոր: Ետնավարագույրի վրա պատկերվում են ոտքի ելնող
բազմաթիվ նահատակների ուրվապատկերները:

Նրանք դանդաղ առաջանում են:

Գլադիատորը, դիմավորելով նրանց,
տարածում է ձեռքերը՝ խաչվածի տեսքով:
Օջախի կրակը բարձրանում, ծավալվում,
բոլորին ձուլում է իր մեջ:

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



Սամվել
ԿՈՍՅԱՆ

Շատերին թվում է՝ տեղանի, հազուադեպ կամ հեռուստացույցի վրայից մաքրելով, փոշու ինդիքը լուծում են: Իրականում այն մի տեղից այլ տեղ են տեղափոխում, չկասկածելով, թե պոտենցիալ ինչ հիվանդություններ են տեղաշարժում: Երկրագնդի անսպասուսացման ֆոնին էլ ավելի ընդարձակվելու են փոշու տարածքները՝ վերածվելով բնապահպանական աղետի: Սակայն մեր գիտակցության մեջ այն շարունակում է մնալ անվտանգ, որը կարելի է ամեն պահի վերացնել: Սուրմայրուի պայթյունից հետո մասնագետներն արձանագրեցին, որ Երևանի օդում նորմայից մի քանի անգամ գերազանցված է փոշու քանակը: Աշխարհը լիքն է բազում պայթյուններով, որոնք ամելու միտում ունեն: Հետևանքները դժվար է թերագնահատել: Այդուհանդերձ, կյանքը շարունակվում է, ինչպես և պիտում:

ՓՈՇՈՒՑ ՔՇՎԱԾՆԵՐԸ

(դրամա մեկ գործողությամբ)

Գործող անձինք

ՎԱՐԴԱՆ

ԱՐՈՒՍ

ԲԵՄԱԴՐԻՉ

ԼՐԱԳՐՈՂ

ԲԺՇԿՈՒՅԻ

ՊԱՐՈՒՅԻ

ՓՈՇԵԿՈՒԼՈՎ ՅԱՎԱՔԱՐԱՐՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Բենը կահավորված է ըստ հայեցողության, հաշվի առնելով, որ ամբողջական ներկայացման մասին չէ խոսքը, այլ ընդամենը նոր պիեսի առաջին փորձերի: Սակայն գահի ու սեղանի առկայությունը պարտադիր է: Արուսը ձեռքի լաթով չկամորեն սեղանի փոշին է մաքրում: Քիչ հեռվում Վարդանը զբաղված է գահի նորոգմամբ:

ԱՐՈՒՍ - Էս փոշին չի վերջանա, չես հասցնում մաքրել՝ էլի նստում է:

ՎԱՐԴԱՆ - Ես էլ էս աթոռը լրիվ կջարդեի: Դերասաններին նստում ես, 70 կիլո չկան, հերիք է թագավորի կամ նախագահի դեր ստանան, միանգամից երեք հարյուր կիլոգրամանոց բեզեմոտների են վերածվում: Չգիտես՝ դրանց տակ ինչ աթոռ դնես, որ դիմանա:

ԱՐՈՒՍ - Չէի՞ր ուզի եղպիսի մի աթոռի էլ դու նստեիր:

ՎԱՐԴԱՆ - Իմը ունդան, մուրճն ու սղոցն ա, էդ իմ բանը չի: Թագավոր պիտի ծնվել, թե չէ քաջ նազարների երեսից են դժբախտությունները:

ԱՐՈՒՍ - Կոտրատվում ես, թե... Լուրջ՝ չէի՞ր երազի:

ՎԱՐԴԱՆ - Իմ ուզելը նման կլիներ, ոնց որ փորձեի երեք լիտրանոց բանկան երկուսի մեջ տեղավորել:

ԱՐՈՒՄ - Ում պետք է՝ տեղավորում է:

ՎԱՐԳԱՆ - Կոտրելով են տեղավորում, արդյունքն էն չի:

ԱՐՈՒՄ - (*բարկացած՝ ձեռքի լաթը մի կողմ է գցում*): Էսքան փոշին որտեղից... Ոնց որ բոլորը փոշի արտաշնչեն:

ՎԱՐԳԱՆ - Ասում են՝ աշխարհն էլ է փոշուց առաջացել:

ԱՐՈՒՄ - Չտեսանք՝ մի բան էլ էս փոշուց առաջանա:

ՎԱՐԳԱՆ - Ասում են՝ ոնց առաջացել է, հետո էլի փոշու է վերածվելու:

ԱՐՈՒՄ - Հող էիր՝ հող դարձիր... Փոշի էիր՝ փոշի դարձիր: Ո՞վ է ասել:

ՎԱՐԳԱՆ - Գիտնականներն են ասում:

ԱՐՈՒՄ - Որ ասում են՝ հետո՞, լսող չկա: Ինչ ումը ու հրթիռ ասես հորի՞նում են, որ աշխարհը փոշիացնեն:

ՎԱՐԳԱՆ - Մտածում եմ... (*Յույց է փալիս գահր:*) Աշխարհի կոիվը սրա համար է: Ամեն մեկն ուզում է ուրիշի աթոռը կոտրելով իրենը փրկի...

ԱՐՈՒՄ - Դրանց դարդն ինձ չեն տվել, թող զգույշ նստեն, որ չկոտրեն: Իմ խնդիրը փոշին է, որ քիչ լինի:

ՎԱՐԳԱՆ - Փոշու հետ կովելով ինչի՞ ես ուզում հասնել:

ԱՐՈՒՄ - Առաջ էր, որ ուզում էի դերասանուհի դառնալ:

ՎԱՐԳԱՆ - Փոշի մաքրելով:

ԱՐՈՒՄ - Մտածում էի՝ կարևորը թատրոնում լինեմ:

ՎԱՐԳԱՆ - Հավաքարարն ո՞ր, դերասանությունն ո՞ր...

ԱՐՈՒՄ - Ջահել էի, ռոմանտիկ ու ամենակարևորը՝ հավատում էի... Կանացի դեր չկար, որ չիմանայի: Նայում էի ներկայացումները, լսում էի երկխոսություններն ու անզիր էի անում:

ՎԱՐԳԱՆ - Որ ի՞նչ...

ԱՐՈՒՄ - Ինձ համար պատմություն էի հորի՞նել, իբր՝ դերասանուհիներից մեկը հիվանդանում է: Հանդիսատեսն արդեն դահլիճում է, ներկայացումը պետք է սկսվի, իսկ դերասանուհին չկա: Բոլորը խառնվել են, չգիտեն ինչ անեն ու վերջին պահին բեմադրիչն ու տնօրենը հուսահատված ինձ են դիմում:

ՎԱՐԳԱՆ - Քե՞զ...

ԱՐՈՒՄ - Խնդրում են օգնել:

ՎԱՐԳԱՆ - Ուրիշ դերասանուհի չկամր, որ քո հույսին էին մսացել:

ԱՐՈՒՄ - Ներկայացման տեքստը չգիտեմ:

ՎԱՐԳԱՆ - Ո՛նց էին իմացել՝ դու գիտես, որ քեզ էին մոտեցել:

ԱՐՈՒՄ - Մի անգամ, երբ մենակ էի, իբր՝ քո աթոռը Ռոմեոն էր, ես էլ Ջուլիետի տեքստն էի ասում: Ռեժիսորը պատահմամբ տեսել ու լսել էր, բայց չէր ընդհատել, սպասել էր, մինչև վերջացնեմ: Երբ ավարտեցի, ծափահարեց: Հարցուփորձից իմացավ, որ շատ դերեր անգիր գիտեմ:

ՎԱՐԳԱՆ - Վերջը՞...

ԱՐՈՒՄ - Ծիծաղեց ու հեռացավ:

ՎԱՐԳԱՆ - Պատմությանդ վերջն ասա:

ԱՐՈՒՄ - Սկզբում հրաժարվեցի, ուզում էի ինձ թանկ վաճառել: Ասացի՝ ո՛նց է, մնացած օրերին արհամարհել եք, հավաքաբարն ո՛վ է, որ մոտ թողնեք, հիմա հանկարծ հիշեցիք: Վաղն էլի մոռանալու եք, որ տաղանդը կորչում է փոշու մեջ:

ՎԱՐԳԱՆ - Էդպես էլ ասացիր...

ԱՐՈՒՄ - Էս պատմությունը օրը մի քանի անգամ պատմում եմ ինքս ինձ: Ուրեմն նազուտուզ եմ անում, երևակայում եմ, մինչ դերասաններն էլ են միջամտում: Ամենահետաքրքիրը ներկայացումից հետո է: Դահլիճը հոտընկայս ծափահարում

է, մեկը մյուսին հարցնում է՝ ո՞վ է այս դերասանուհին, որտե՞ղ էր մինչև հիմա...

ՎԱՐԳԱՆ - Էդ երբ է եղել, որ չեմ իմացել:

ԱՐՈՒՄ - Չի եղել ու չի էլ լինի: Չասացի՞ իմ հորինածն է: Սկզբում հավատում էի, որ հորինածս իրականություն կդառնա, բայց օրերն անցնում էին ու միայն փոշին էր մաշկիս ավելանում: Առաջ եթե փոշին լուռ էր, հիմա ինչ էլ անեմ՝ խշշում է: Փոշու մեջ էլ հորինածս խամրեց:

ՎԱՐԳԱՆ - Ամուսնուդ պատմե՛լ ես...

ԱՐՈՒՄ - Չհասցրի:

ՎԱՐԳԱՆ - Ինչո՞վ էիր զբաղված, որ չես հասցրել:

ԱՐՈՒՄ - Մոտենաս՝ կասեմ:

ՎԱՐԳԱՆ - Ո՛ւմ մոտենամ:

ԱՐՈՒՄ - Ինձնից բացի ո՞վ կա... Արի, արի, մոտեցիր...

ՎԱՐԳԱՆ - *(ըստականասած մոլորենում է):* Մտքովդ ի՛նչ անցավ:

ԱՐՈՒՄ - Հիմա հետս կպարես... *(Դադար:)* Ինչո՞ւ գունատվեցիր, առաջին անգամն ես պարելու:

ՎԱՐԳԱՆ - Մի տեսակ անսովոր է:

ԱՐՈՒՄ - Զարմանքդ հետո... *(Գրկում է Վարդանին, երաժշտություն: Պարում են:)* Զգո՞ւմ ես...

ՎԱՐԳԱՆ - Ի՛նչ եմ զգալու:

ԱՐՈՒՄ - Մարմնիս խշռոցը չեմ
 զգում:

ՎԱՐԳԱՆ - Ոնց որ զգում եմ:

ԱՐՈՒՄ - Այդ խշռոցի պատճառով
 ամուսինս հեռացավ: Ասում էր՝
 չի լինում ինձ դիպչել, ասում էր՝
 խշռոցից մարմինը փշաքաղ-
 վում է...

ՎԱՐԳԱՆ - Հետո՞...

ԱՐՈՒՄ - Երևի հեռացավ՝ չխշա-
 ցող մարմին գտնի:

ՎԱՐԳԱՆ - Հիմարի մեկն է եղել:

ԱՐՈՒՄ - Մի շտապիր մեղադրել:
 Էդ խշռոցից ես էլ չեմ կարողա-
 նում քնել: Մեռնելիս էլ երևի
 չկարողանամ դրանից ազատ-
 վել: *(Երաժշտությունը դադա-
 րում է, պարն էլ՝ հետը:)*

ՎԱՐԳԱՆ - Շուտ-շուտ լողացիր:

ԱՐՈՒՄ - Լողանալուց հետո էլ է
 խշռում:

ՎԱՐԳԱՆ - Անհավատալի է:

ԱՐՈՒՄ - Կարծես ձեր տանը փո-
 շի չկա: Տիեզերքը փոշու մեջ է:
 Քո այդ գիտնականների ասե-
 լով, ամեն տարի մոտ 40 կիլո-
 տոննա տիեզերական փոշի է
 նստում մոլորակի վրա: Բոլո-
 րը երևակայում են, որ փոշին
 մաքրում են, ինչ մաքրել, իրա-
 կանում այստեղից այնտեղ են
 տեղափոխում: Աչքերիդ առաջ
 սեղանը մաքրեցի... *(Մաքրե-*

*րը սահեցնում է սեղանի վրա-
 յով:)* Էլի փոշի է ու էս փոշին չի
 հանգստանա, մինչև ամեն ինչ
 չծածկի:

ՎԱՐԳԱՆ - Միևնույն է, հիմարի
 մեկն է եղել ամուսինդ: Միայն
 հիմարը փոշու պատճառով
 կնոջից կրածանվի:

ԱՐՈՒՄ - Փոշու չէ, խշռոցի...

ԲԵՄԱԴՐԻՉ - *(Թե՛մ բարձրանա-
 լով):* Հերիք է, դադար... Չանձ-
 րույթ է, կեղծ ու անհետաքր-
 քիր: Կամ պիեսը մի բան չի,
 կամ դուք դեռ դերի մեջ չեք խո-
 րացել: *(Վարդանիս:)* Որ ուզում
 ես աթոռը ջարդել, էդ ո՞նց... Տե-
 սե՛ն էս, որ որևէ մեկը խաղաղ ու
 հանգիստ ուզենա ինչ-որ բան
 ջարդել: Բարկությունդ չկա, չի
 երևում... Դեմքդ դիմակից չի
 տարբերվում՝ չեզոք, անտար-
 բեր... միմիկադ ինչ է եղել: Ոնց
 որ ուրիշի տեղն ապրես, ուրիշի
 տեղը զարմանաս, ուրիշի փո-
 խարեն հարցնես:

ՎԱՐԳԱՆ - Դերասանները միշտ
 էլ ուրիշի են ներկայացնում:

ԲԵՄԱԴՐԻՉ - Ուրիշի չէ, այլ ուրիշի
 միջոցով իրենց: *(Արուսիս:)* Քեզ
 ինչ է եղել, ՄԱԿ-ի ամբիոնի՞ց
 ես ճառում, որ դժգոհություն
 չկա դեմքիդ:

ԱՐՈՒՄ - Փոշու թեմային չեմ հա-
 վատում:

ԲԵՄԱԳԻԻՉ - Կհասցնես հավատալ, նույնիսկ վախենալ, երբ իմանաս փոշու իրական վտանգները:

ԱՐՈՒՄ - Մենակության փոշին ավելի վտանգավոր է:

ՎԱՐԳԱՆ - Մոայլ պիես է, չտրամադրող, բեմադրելու բան չի:

ԲԵՄԱԳԻԻՉ - Վտանգը լուսավոր չի լինում:

ՎԱՐԳԱՆ - Հիսուն տարի առաջ փոշու մասին չէին էլ մտածի: Փոշի է, էլի...

ԲԵՄԱԳԻԻՉ - Էդպես չի... Մոլորակի վրա ավելանալու են ջրհեղեղներն ու ցունամիները: Ջրհեղեղների բերած միլիոնավոր տոննա տիղմը չորանալու և վերածվելու է փոշու, երկրի ընդերքը եռալու է ու բազմաթիվ հրաբուխներ անսահման քանակի փոշի են տարածելու:

ԱՐՈՒՄ - Ո՞նց է՝ Նոստրադամուսն ու Վանգան էդ մասին չեն գուշակել:

ԲԵՄԱԳԻԻՉ - Իբր՝ ամեն ինչ գուշակել են: Անկանխատեսելին ավելի շատ է: Ո՞նց էին գուշակելու, որ երկրները երեկ եղբայր էին, հիմա իրար են կոտորում... Ոնց էլ մտածես, չես հասկանա՝ ինչու...

ՎԱՐԳԱՆ - Մի ընկեր ունեի, նեղն

ընկնելիս ասում էր. «Է, աշխարհ, աշխարհ, թե ինչո՞ն ես կլոր»:

ԱՐՈՒՄ - Իբր ի՞նչ...

ՎԱՐԳԱՆ - Էն, որ անիմատությունը մի կետից սկսվում, պտտվում ու նույն կետին էլ վերադառնում է:

ԱՐՈՒՄ - Փոշին քեզ օրինակ...

Անսպասելի հայտնվում է պարուհին, մի քանի պարային պտույտներ է կատարում:

ՊԱՐՈՒՀԻ - Ես երբ եմ փորձելու:

ԲԵՄԱԳԻԻՉ - Երբ ժամանակը գա:

ՊԱՐՈՒՀԻ - Կարո՞ղ է՝ չգա:

ԲԵՄԱԳԻԻՉ - Ոչ մեկը այք չունի ուրիշի ժամանակի վրա:

ՊԱՐՈՒՀԻ - Ի՞նչ եմ պարելու:

ԲԵՄԱԳԻԻՉ - Փոշու պարը:

ՊԱՐՈՒՀԻ - (*դժգոհ*): Ամեն ինչ պարել էինք, մնացել էր փոշու պարը:

Փոշեկույները ձեռքներին հայտնվում են իրական հավաքարարները:

ԲԵՄԱԳԻԻՉ - Սրանք որտեղի՞ց հայտնվեցին: Մաքրելու փոխարեն փոշին օդ են հանելու:

ՀԱՎԱՔԱՐԱՐ - Բա երբ գանք:

ԲԵՄԱԳԻԻՉ - Կասեմ... (*Վարդասին ու Արուսին*.) Էլ անելիք չունեք: Որ դերը դերասանին

չտրամադրի... Ներշնչանք չեղավ, ինչքան ուզում ես գոռա, հավատացողն ճվ է... Այսօրվա հանդիսատեսը ինքն էլ չգիտի՝ ինչին հավատա, սպասում է, ինչ-որ մեկը հուշի... Մի մոռացեք, այդ ինչ-որ մեկը նաև թատրոնն է...

Բեմադրիչը հավաքարարների ու պարուհու հետ հեռանում է:

ԱՐՈՒՄ - Տուն չեմ ուզում գնալ:

ՎԱՐԴԱՆ - Մենակությունից ես նեղվում:

ԱՐՈՒՄ - Իմանաս՝ գիշերը մենակությունը ոնց է կահույքը ճոռացնում, պատուհանի ապակիները զրնգացնում, հատակն էլ ոտնաձայներից ոնց որ ոռչի... Մեկն էլ չկա՝ օգնության կանչես: Կնոջ կողքին միշտ մեկը պետք է լինի: Մենակ կնոջը տան իրերն էլ են դիմադրում:

ՎԱՐԴԱՆ - Կարող եմ ուղեկցել:

ԱՐՈՒՄ - Պետք չէ:

ՎԱՐԴԱՆ - Միասին սուրճ կխմենք, մենակությունն էլ կիմանա՝ տանը մենակ չես, համը չի հանի:

ԱՐՈՒՄ - Պատահական մեկը մենակությամբ չի կարող վախեցնել:

ՎԱՐԴԱՆ - Այսքան տարի միասին ենք աշխատում:

ԱՐՈՒՄ - Չնեղանաս, բայց վախենանա՝ քեզ հետ մենակությունն ավելի կատաղի:

ՎԱՐԴԱՆ - Ընդամենը ուզում էի օգնել:

ԱՐՈՒՄ - Մի ուրիշ անգամ երևի համաձայնվեմ, եթե ամուսինս չհայտնվի... *(Հեռանում է:)*

ՎԱՐԴԱՆ - Աշխատիր քնել, որ գոնե երազիդ գա... *(Հեղրնում է նրան:)*

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Նույն տեսարանը: Երաժշտություն: Հավաքարարները պարելով ու երգելով փոշեկույներով հատակն են մաքրում: (Ավլեմ-թափեմ փոշին...)

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - *(անսպասելի կանգ է առնում):* Փոշեկույի մասին անեկդոտը լսել ես:

2-ՐԴ ՀԱՎԱՔԱՐԱՐ - *(ինքն էլ է կանգնում):* Երաժշտությունը դադարում է: Նոր անեկդոտ է:

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Մեկը փոշեկույ է վաճառում, ու շատ թանկ: Գնորդը հարցնում է. «Իննեքորդ հարկում զուգարանս խցանված է, կարո՞ղ է մաքրել»: «Մեկից՝ մեկ», - գլուխ է գովում վաճառողը: Հինգ բոպե հետո զուգարանը կարգի է ընկնում: Գնորդը փոշեկույը քանդում

է՛ իմանալու դրա հզորութեան պատճառը: Փոշեկույլի մեջ նստած մարդուն տեսնելով, զարմացած բղավում է. «Էս լրիվ դո՛ւ էիր»: «Ես ի՛նչ,- բողոքում է մարդը,- ես առաջին հարկի զուգարանում էի»:

2-ՐԳՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Էդ փոշեկույլը իմը լինե՞ր:

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Ծիծաղելու չէ՛ր, որ չծիծաղեցիր:

2-ՐԳՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Զուգարանի հոտը քիթս ընկավ:

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Ուշքդ ու միտքդ փոշին է:

2-ՐԳՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Տունդ էս փոշու հաշվին ես պահում: Փոշին չեղավ, ի՛նչ ես մաքրելու:

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Ոնց որ աշխարհի կեղտը պակասել է:

2-ՐԳՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Փոշին չպակասի, թե չէ... Գործ անելիս դու էլ մի ծիծաղիր, փոշու մեջ ծիծաղելը վտանգավոր է, մեկ էլ տեսար, թոքերդ լցվեց:

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Բերանդ փակ ծիծաղիր:

2-ՐԳՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Գործը պրծնեմ՝ կծիծաղեմ: Շարժվիր, քանի դերասանները չեն եկել:

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Չգիտեմ, դրանք ինչո՞ւ են մեզանից դիվոտում:

2-ՐԳՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Փոշեկույլներից են վախենում, մեկ էլ տեսար՝ փոշեկույլները փոշու հետ իրենց էլ քաշեցին:

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Ծիծաղեմ, թե՛ թողնեմ գործից հետո:

2-ՐԳՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Ասում են՝ նոր ներկայացումը փոշու մասին է:

1-ԻՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Դրանք վերջը մեզ հացից կտրելու են:

2-ՐԳՆ ՀԱՎԱՔԱՐԱՐ - Էդ հարցով հանգիստ եմ... Փոշին եղել է, կա ու կլինի...

Հայտնվում է Վարդանը:

ՎԱՐԴԱՆ - Վերջացրի՞ք:

1-ԻՆ ՄԱՔՐՈՂ - Գնում ենք, գնում ենք...

Հավաքարարները հեռանում են:

ՎԱՐԴԱՆ - *(մոտենալով գահին):* Չիմացանք՝ էս գահին ով է նստելու: Ոչ թագավորի անուն կա, ոչ էլ որևէ երկրի նախագահի:

ԲԵՄԱԴՐԻՉ - *(ներս մտնելով և Վարդանի խոսքերը լսելով):* Կիմանաս, երբ բնապահպանը հայտնվի:

ՎԱՐԴԱՆ - Բնապահպանը թագավոր է:

ԲԵՄԱԴՐԻՉ - Չգիտեմ, հիմա

ամենափոքր պաշտոնյան էլ իրեն թագավոր է զգում: Գուցե մեր դեպքում գահն այնքան էլ պատշաճ չէ, բայց առայժմ ավելի հարմար աթոռ չգտնվեց: Աստված գործներս հաջողի, հետագայում կարող ենք փոխել:

ՎԱՐԳԱՆ - (*գնում, տեղավորվում է գահի մեջ*): Թագավորի նման չեմ:

ԱՐՈՒՍ - (*որ երկուսի համար անտեսանելի է հայտնվել*): Հնարավոր է՝ հետմահու նմանվես:

ԲԵՄԱԳԻԻՉ - Ինչո՞ւ հետմահու:

ԱՐՈՒՍ - Ասում էիր՝ թագավոր պետք է ծնվել, հիմա նստել-երևակայում ես:

ՎԱՐԳԱՆ - Էլ ի՞նչ թագավոր, որ մի բան չսպի ու դրա հակառակը անի:

ԱՐՈՒՍ - Մուրճ ու սղոցով ես երկիրդ պահելու:

ՎԱՐԳԱՆ - Ո՞ր թագավորն է երկիր պահել, որ ես պահեմ:

ԱՐՈՒՍ - Բա ի՞նչ են արել:

ՎԱՐԳԱՆ - Համոզել են ժողովրդին, որ ժողովուրդը թագավորին լավ պահի, որովհետև առանց թագավորի երկիրը երկիր չի:

ԱՐՈՒՍ - Հիմար թագավորներ չեն եղել: Քանի երկիր է հիմարների ձեռքով անհետացել:

ՎԱՐԳԱՆ - Իմ թագավորությունը չի կործանվի:

ԱՐՈՒՍ - Որովհետև թագավոր չես... Թագավոր լինելիք, ոնց որ միշտ ես ասում, տակիդ աթոռը պիտի կտրվեր: Ծանրություն չկա մեջդ, ծանրություն...

ՎԱՐԳԱՆ - Հե՛յ, պահակազոր:

ԱՐՈՒՍ - Դրանց ինչո՞ւ ես կանչում:

ՎԱՐԳԱՆ - Որ լեզուդ կտրեն: (*Ծիծաղելով բարձրանում է աթոռից*): Իմացա՞ր՝ գահն ում համար է... Մեծն արքա ինչ-որ բնապահպանի:

ԱՐՈՒՍ - Փոշու դեմ միտինգ է անելու:

ԲԵՄԱԳԻԻՉ - Մոլորակի անապատացման մասին է խոսելու:

ԱՐՈՒՍ - Մեր հարցերը լուծել ենք, հերթը մոլորակին է հասել:

ԲԵՄԱԳԻԻՉ - Վտանգը Հայաստանին էլ է սպառնում:

ՎԱՐԳԱՆ - Պարզվում է՝ Հայաստանն էլ է մոլորակի վրա: (*Ծիծաղում է*):

ԱՐՈՒՍ - Թեկուզ օր ու գիշեր միտինգ արա, փոշին քչանալու է:

ԲԵՄԱԳԻԻՉ - Քչանալը չգիտեմ, լռելու դեպքում հաստատ կավելանա:

ԱՐՈՒՍ - Էդ բանախոսների խոսքի քամին ավելի վտանգավոր է: Իրականում թոզ փչելով են զբաղված:

Հնայով ու շուրջը նայելով, արագա-
քայլ հայտնվում է լրագրողը: Դե-
րասաններին տեսնելով մոտենում
է, փորձելով շունչը տեղը բերել:

ԲԵՄԱԴԻԻՉ - Ո՞վ եք, ումի՞ց եք
փախչում:

ԼՐԱԳՐՈՂ - Ինչո՞ւ փախչել: Երբ-
վանի՞ց է պաշտպանվելը փախ-
չել կոչվում:

ԲԵՄԱԴԻԻՉ - Ինչի՞ց եք պաշտ-
պանվում, թատրոնը խրամատ
չէ:

ԼՐԱԳՐՈՂ - Լրագրող եմ: Ձեզ
մոտ էի գալիս: Լավ է, շենքից
հեռու չէի: Միանգամից այն-
պիսի փոթորիկ սկսվեց: Փողո-
ցում փոշին ջրհեղեղի պես վրա
տվեց: Մի կերպ ինձ դռնից
ներս գցեցի: Երկար տարիներ
բնապահպանական հարցեր
եմ լուսաբանում, նման բան չէի
տեսել: Մի բաժակ ջուր կարե-
լի՞ն է: Ոնց որ չհաջողեցի փոշուց
պաշտպանվել:

ԱՐՈՒՄ - Հիմա կբերեմ: *(Դուրս է
գալիս:)*

ԼՐԱԳՐՈՂ - Ասում են, ձեր նոր
ներկայացումն էլ է փոշու մա-
սին: *(Գրպանից հանում է ձայ-
նագրիչը:)*

ԲԵՄԱԴԻԻՉ - Մոտավորապես:

ԼՐԱԳՐՈՂ - Երևի փոխաբերա-
կան իմաստով:

ԲԵՄԱԴԻԻՉ - Այսինքն:

ԼՐԱԳՐՈՂ - Դե, ասենք, պետա-
կան միջոցները փոշիացնելու
առումով:

ԲԵՄԱԴԻԻՉ - Տարբերակ է, բայց
մերը չէ, մեր պիեսն ավելի
բնապահպանական ու առող-
ջապահական է:

ԼՐԱԳՐՈՂ - Մի քանի խոսքով
կներկայացնե՞ք:

ԲԵՄԱԴԻԻՉ - Դեռ վաղ է ինչ-
որ բան ներկայացնել, մենք էլ
վերջը չենք պատկերացնում:

**Արուսը ներս է մտնում, ջրով բաժա-
կը մեկնում լրագրողին:**

ԼՐԱԳՐՈՂ - *(վերցնելով բաժակն
ու մի քանի կում անելով):* Այս-
պիսի կնոջ բերած ջուրը ծանր
հիվանդին էլ կօգնի:

ՎԱՐԴԱՆ - Հիմա կինը բնապահ-
պանական աղևտ է, թե՛ հակա-
ռակը:

ԼՐԱԳՐՈՂ - Խնդրում եմ ասածս
չգոռեցնե՞ք:

ՎԱՐԴԱՆ - Պարզապես հետաքր-
քիր էր:

ԼՐԱԳՐՈՂ - Ավելի հետաքրքիր
երևույթներ կան, որոնց մասին
լուսն են: *(Բեմադրիչին.)* Պիեսի
վերնագիրը կասե՞ք:

ԲԵՄԱԴԻԻՉ - Փոշուց քշվածները:

ԼՐԱԳՐՈՂ - Հեղինակն ո՞վ է:

ՎԱՐԳԱՆ - Չենք ասի:

ԼՐԱԳՐՈՂ - Ինչո՞ւ:

ՎԱՐԳԱՆ - Որովհետև մենք էլ
չգիտենք:

ԼՐԱԳՐՈՂ - Հետաքրքիր է, հե-
տաքրքիր է... *(Շրջվում է Արուսի կողմը, լուռ ու երկար նրան է նայում:)*

ԱՐՈՒՍ - Փռնո՞ւ եմ:

ԼՐԱԳՐՈՂ - Չէ:

ԱՐՈՒՍ - Բա դեմքիս ինչ եք
փնտրում:

ԼՐԱԳՐՈՂ - Ձեր կարծիքը պիտի
մասին:

ԱՐՈՒՍ - Փռնու ձայնը լսել եք:
Լսած չեք լինի, որովհետև ձայն
չունի... Մինչև ձայնը չլսեմ,
կարծիք չեմ ունենա:

ԼՐԱԳՐՈՂ - Ես էլ շուտափույթ եզ-
րակացությունների կողմնա-
կից չեմ:

ՎԱՐԳԱՆ - Իմ կարծիքը չեք ու-
զում իմանալ: Կարծիքս այն է,
որ դեռ կարծիք չունեմ:

ԼՐԱԳՐՈՂ - Ձեր գաղտնապա-
հությունից կարելի է ենթադ-
րել, որ արտառոց բան եք նա-
խաձեռնել: Բոլոր դեպքերում
հետաքրքիր է: Չեմ հիշում,
երբևիցե որևէ թատրոն փռնու
մասին բեմադրություն արած
լինի: Համենայնդեպս, թեման
ինքնատիպ է: Դժվարություն-
ները հաղթահարո՞ւ եք:

ԲԵՄԱԴՐԻՉ - Առայժմ միայն

դժվարություններն ենք հաղ-
թահարում:

ԼՐԱԳՐՈՂ - Այդպես է, նոր խոս-
քի համար դժվարությունների
միջով պիտի անցնես: Կարևո-
րը խորքն է, մակերեսի վրա
առանց ուրիշի օգնության էլ
ամեն ինչ երևում է: *(Նորից է
շրջվում Արուսի կողմը:)* Ավելի
ուշ կարո՞ղ եմ ձեզ հանդիպել:

ԱՐՈՒՍ - Դրա համար վիզա պետք
չէ:

ԼՐԱԳՐՈՂ - Հեղինակի անունն
իմանալու համար:

ՎԱՐԳԱՆ - Ընդամեն՞ը...

ԼՐԱԳՐՈՂ - Այլ մանրամասներ
ճշտելու կարիք էլ կլինի:

ՎԱՐԳԱՆ - Նրա անունը չե՞ք ու-
զում իմանալ:

ԼՐԱԳՐՈՂ - Անորոշ ակնարկներ
չեմ սիրում: Երևի փոթորիկն
արդեն մեղմացած կլինի:

ՎԱՐԳԱՆ - Հավերժականը միայն
փռնին է:

ԼՐԱԳՐՈՂ - Երևի, երևի... Հիմա
գնամ, որ նյութը չուշացնեմ:
*(Բաժակը փայխս է Արուսին՝
չմոռանալով շնորհակալությո-
նն հայտնել:)*

ԲԵՄԱԴՐԻՉ - Սմ պիտի մասին
որտեղից է իմացել:

ՎԱՐԳԱՆ - Բոլորի բերանը չես
փակի, մեկը տարածած կլինի:

ԲԵՄԱԴՐԻՉ - Հիմա լրագրողների հոսքը կտրել չի լինի, փորձերի փոխարեն լրագրողներով ենք զբաղվելու: Պիտի զգուշանանք, որ էս ամենը չքաղաքականացնեն: Դրանք սիրում են ճանճն ուղտ ներկայացնել:

ԱՐՈՒՍ - Լավ կլինի էսօրվա փորձը հետաձգենք: Ինձ թույլ եմ զգում, կոկորդիս վիճակն էլ այն չի:

ԲԵՄԱԴՐԻՉ - Եթե տրամադրվածություն չունես, ստիպելն անիմաստ է: Տրամադրվածություն չեղավ, օդը մեռած բառերով եք լցնելու: *(Վարդանին.)* Դու էլ գնա: Հուսով եմ, մինչև վաղը տրամադրություններդ կփոխվի: Կփորձեմ ինչ-որ բաներ խմբագրել: Բեմը բացթողուները անմիջապես է ջրի երես հանում: Մինչ վաղը: *(Հեռանում է:)*

ՎԱՐԴԱՆ - Էդ լրագրողը հաստատ էլի կերևա: Պիեսի համար չէ, քեզ տեսնելու: Նայելն ու հրապուրվելը մեկ եղավ:

ԱՐՈՒՍ - Շուտ հրապուրվողը շուտ էլ սառում է, գնացի՞նք:

ՎԱՐԴԱՆ - Տեսնենք, տեսնենք...

Հեռանում են:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Նույն տեսարանը: Բեմի կենտրոնում բուժսենյակ հիշեցնող պաստառ է հայտնվել: Աթոռին նստած Արուսը անհանգիստ շուրջն է նայում: Հայտնվում է բժշկուհին՝ բժշկական լապտերիկը ճակատին: Մոտենում է Արուսին:

ԲԺՇԿՈՒՀԻ - Բնչ բողոքներ ունեք:

ԱՐՈՒՍ - Կոկորդս, բժշկուհի...
Շատ է ցավում

ԲԺՇԿՈՒՀԻ - Բերանը լայն բացեք: *(Ջննում է կոկորդը: Դեմքից պիպի կուսիել, որ ինչ-որ բանից դժգոհ է:)* Բնչ եք աշխատում:

ԱՐՈՒՍ - Կարևոր է:

ԲԺՇԿՈՒՀԻ - Ճիշտ ախտորոշման համար ամեն ինչն է կարևոր:

ԱՐՈՒՍ - Դերասանուհի եմ:

ԲԺՇԿՈՒՀԻ - Տարօրինակ է:

ԱՐՈՒՍ - Տարօրինակ ինչ կա, դերասանը պոզով-պոչո՞վ է լինում:

ԲԺՇԿՈՒՀԻ - Ոնց որ թունավոր արտադրամասից եկած լինեք:

ԱՐՈՒՍ - Վիճակս լավ չի:

ԲԺՇԿՈՒՀԻ - Կարո՞ղ է, թատրոնում վերանորոգում է:

ԱՐՈՒՍ - Չէ:

ԲԺՇԿՈՒՀԻ - Որտե՞ղ եք այդքան փոշի շնչել ու կոկորդի լորձաթաղանթը բորբոքել:

ԱՐՈՒՄ - Ամբողջ քաղաքը փոշի է, առավոտից ուրիշ ինչ ենք շնչում:

ԲԺՇԿՈՒՇԻ - Անհասկանալին փոշու քաղաքությունն է: Թունավոր արտադրամասի մասին հենց այնպես չհարցրեցի:

ԱՐՈՒՄ - Շատ լուրջ է... Երևի հասկանում եք, դերասանի համար ինչքան կարևոր է առողջ կոկորդը:

ԲԺՇԿՈՒՇԻ - Առայժմ պատճառն եմ ուզում հասկանալ: Փորձեմ մի անգամ էլ ստուգել: Բերանն ավելի լայն բացեք: *(Նորից է հեղազոտում:)*

ԱՐՈՒՄ - Հնարավոր է, մրսած լինեմ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ուրիշ ինչ բողոքներ ունեք:

ԱՐՈՒՄ - Սկսել եմ վատ քնել, գիշերվա կեսից արթնանում ու էլ չեմ քնում:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ալկոհոլ շատ եք օգտագործում:

ԱՐՈՒՄ - Առիթից առիթ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Թմրանյութ:

ԱՐՈՒՄ - Չեմ փորձել:

ԲԺՇԿՈՒՇԻ - Մղձավանջները շատ են հետապնդում:

ԱՐՈՒՄ - Հաճախ չէ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ընտանիքում մարդաշատ եք, կարո՞ղ է, աղմուկից եք նեղվում:

ԱՐՈՒՄ - Ինձանից բացի ուրիշը

չկա:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ուրեմն հնարավոր է, անքնության պատճառը միայնության զգացումը լինի: Հաճախ եք ընկճման ու վիատման ապրումներ ունենում:

ԱՐՈՒՄ - Ամուսնուս հեռանալուց հետո՝ ավելի հաճախակի:

ԲԺՇԿՈՒՇԻ - Լինո՞ւմ է, ինքնապանության մասին մտածեք:

ԱՐՈՒՄ - Ինչո՞ւ եք հարցնում:

ԲԺՇԿՈՒՇԻ - Մոռացե՞ք հարցս: Աշխատեք ավելի շատ լինել մարդաշատ միջավայրում, առավել շատ շփվել մարդկանց հետ:

ԱՐՈՒՄ - Կոկորդիս մասին մոռացաք:

ԲԺՇԿՈՒՇԻ - Չեմ մոռացել, կողմնակի հարցումներն օգնում են ճիշտ գնահատել վիճակը: Լավ կլինե՞ր մի քանի օր աշխատանքի չգնայիք: Փոխարենը այգում, պուրակում շատ եղեք...

ԱՐՈՒՄ - Բա թատրոնը:

ԲԺՇԿՈՒՇԻ - Կարծում եմ, հենց թատրոնում ինչ-որ բան այնպես չէ:

ԱՐՈՒՄ - Բժշկուհի, հնարավոր է փոշին ակտիվանա, երբ, ասենք, իր մասին կամ իր դեմ են խոսում: Ոչ միայն ակտիվանա, այլև գազազի:

ԲԺՇԿՈՒՇԻ - Տարօրինակ հարց է:

ԱՐՈՒՄ - Հարցնում եմ, որովհետև նոր պիեսը փոշու մասին է: Այդ պիեսի փորձերից հետո է կոկորդիս ցավը սկսվել:

ԲԺՇԿՈՒՇԻ - Մեր օրերում ամեն ինչ հնարավոր է... Բոլորն էլ հասկանում են, որ լայնամասշտաբ ծառահատումները, երկրի ընդերքի գազանաբարո շահագործումը լավ հետևանքների չեն բերի: Փոշին չի բեղմնավորվում ու չի վերարտադրվում: Փոշի ստեղծողը մենք ենք: Նշանակաձու դեղերը կօգնեն, սակայն հետագայում էլ պիտի զգույշ լինեք: Հա, չմոռանաք կոկորդիլ տաք պահել:

ԱՐՈՒՄ - Չեմ մոռանա, ինքնապանության մասին ձեր հարցն էլ չեմ մոռացել:

ԲԺՇԿՈՒՇԻ - Իզուր էլ հիշեցրիք:

ԱՐՈՒՄ - Ինքնապանության մասին մտածել եմ, բայց...

ԲԺՇԿՈՒՇԻ - Եվ...

ԱՐՈՒՄ - Հասկացել եմ, որ եթե ես չլինեմ՝ սերս էլ չի ապրի:

ԲԺՇԿՈՒՇԻ - Եվ ոչ միայն:

ԱՐՈՒՄ - Չէի ուզի, որ սերս մեռնի:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ինչն ամենակարևորն է:

Բեմը մթնում է:

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Նույն տեսարանը: Պարուհին պարային մի քանի շարժումներից հետո պտույտներ է կատարում: Հայտնվում է Արուսը՝ պարանոցը թաշկինակով կապած: Տեսնելով պարուհու պարը, ինքն էլ է մի երկու պտույտ կատարում:

ՊԱՐՈՒՇԻ - Օհն...

ԱՐՈՒՄ - Վատ պտտվեցի:

ՊԱՐՈՒՇԻ - Կարևորը՝ ոտքի վրա մնացիք:

ԱՐՈՒՄ - Հո գլխի վրա չէի շրջվելու:

ՊԱՐՈՒՇԻ - Սովորաբար փորձ չունեցողն ընկնում է:

ԱՐՈՒՄ - Պարի դասընթացներում ինչ-որ բաներ յուրացրել եմ: Բեմադրիչը չի երևացել:

ՊԱՐՈՒՇԻ - (պտտվելով): Դեռ չէ:

ԱՐՈՒՄ - Ինչքան ես պտտվելու:

ՊԱՐՈՒՇԻ - Փոշու պարն եմ փորձում: Պիտի պատկերացնեմ, թե պտտահողմը ոնց է փոշին երկինք հանում:

ԱՐՈՒՄ - Հետո...

ՊԱՐՈՒՇԻ - Պտտվելը պտտվում եմ, միայն չգիտեմ, ոնց եմ օդ բարձրանալու: Կարճ է բեմադրիչը չգա:

ԱՐՈՒՄ - Փորձ էր նշանակել:

ՊԱՐՈՒՇԻ - Երանի չգար...

ԱՐՈՒՍ - Դեպքերից առաջ մի ընկնի... Առաջ ընկնելը ոնց որ ձեր սերնդի գաղտնաբառը լինի:

ՊԱՐՈՒՇԻ - Լավը չէ՞ք:

ԱՐՈՒՍ - Ձեր ժամանակն ինչ է, որ դուք ինչ լինեք: Ուշանալը բեմադրիչից չի: Առանց լուրջ պատճառի չէր ուշանա... Ինչ եղած կլինի: Երևի ընկել, մի տեղը կոտորել է: Շատ զգուշավոր է, ընկած չի լինի: Տաք սուրճը լցվել է ձեռքերին: Դրա պատճառով տանը չէր նստի... Մնաց ճշումը... Ասա՛ ինչնո՞ չես զանգում, իմանաս, որ սար ու ձոր ես ընկել: Կոկորդիս ցավը ոնց որ խելքս էլ է ախտահարել: *(Պայտասկից հանում է հեռախոսը)* Ո՛վ է... կլինը... Արուսն է՝ թատրոնից: Բեմադրիչին եմ խնդրում: Տանը չի... Թատրոնում էլ չի, բա որտեղ է: Պոլիկլինիկան... Պոլիկլինիկայում ինչ է կորցրել: Ա՛չքը... Երեկ նորմալ էր: Արյան զեղում... Ուռել է... Ինչի՞ց է... Մուգ թեյով պիտի լվանայիք: Չի՞ օգնել: Ցավում եմ: Եթե չեք նեղվի, մի քանի ժամից նորից կզանգեմ: *(Անջատում է հեռախոսը:)*

ՊԱՐՈՒՇԻ - Գալու է, թե՛ չէ:

ԱՐՈՒՍ - Երևի չէ:

ՊԱՐՈՒՇԻ - Ուռն... Կարո՞ղ եմ չքվել:

ԱՐՈՒՍ - Ժամադրված ես:

ՊԱՐՈՒՇԻ - Ինչ իմացաք:

ԱՐՈՒՍ - Աչքերդ փայլում են:

ՊԱՐՈՒՇԻ - Նա էլ է ասում, որ աչքերիցս ջերմություն է փչում:

ԱՐՈՒՍ - Վաղուց եք հանդիպում:

ՊԱՐՈՒՇԻ - Շուտով ամուսնանալու ենք: Ժամանակին երևի ձեր աչքերն էլ են փայլել: Քանի՞ տարի եք ամուսնացած:

ԱՐՈՒՍ - Քիչ տևեց:

ՊԱՐՈՒՇԻ - *(վախվորած)*: Հո՛...

ԱՐՈՒՍ - Մի հուզվիր, սարսափելի ոչինչ չի եղել, անսպասելի անհետացավ, հետո զանգեց ու ասաց, որ չի վերադառնալու...

ՊԱՐՈՒՇԻ - Ու չվերադարձավ...

ԱՐՈՒՍ - Չէ, թեև երբեմն թվում է, չի հեռացել, ընդամենը դուրս է եկել աղբը թափելու և ուր որ է՝ ներս կմտնի ու նախկինի պես կմրթմոթա, որ սուրճը սառել է: Տարիների հետ միայն լավս է հիշվում:

ՊԱՐՈՒՇԻ - Իմ ամուսնուն չեմ թողնի՝ աղբը դուրս հանի:

ԱՐՈՒՍ - Փորձիր, գուցե ստացվի:

ՊԱՐՈՒՇԻ - Կփորձեմ, բա ո՞նց... Մեր սերունդը վաղուց առանց փորձի քայլ չի անում: Կարո՞ղ եմ գնալ...

ԱՐՈՒՍ - Ինչ էլ անելու լինես, ճանաչույթի փոշուց զգուշացիր:

ՊԱՐՈՒՇԻ - Էդ ի՞նչ փոշի է:

ԱՐՈՒՄ - Ատելության փոշուց չի տարբերվում:

ՊԱՐՈՒՇԻ - Էդ փոշիներից գլուխ չեմ հանում:

ԱՐՈՒՄ - Մի քիչ էլ ապրի, գլուխ կհանես... Նայիր՝ չուշանաս...

ՊԱՐՈՒՇԻ - Ճիշտ որ ուշ է... *(Պարային շարժումներով հեռանում է:)*

ԱՐՈՒՄ - Բեմադրիչի չգալու պատճառն իմացանք, Վարդանի՞ն ինչ է եղել, նա ինչո՞ւ չկա: Պիտի զգուշացնել, որ փորձ չի լինելու: *(Զանգում է:)* Ալո... Վարդանը չի... տղան է: Տղա ջան, կարո՞ղ ես հեռախոսը Վարդանին փոխանցել: Քնած է... Այս ժամին թատրոնում պիտի լիներ: Ամբողջ գիշեր տանջվել է... ավերգիայից: Ալերգիան որտեղից: Ինչ փոշի, ասում ես՝ բժիշկն է ասել: Էլ ի՞նչ է ասել: Դեղեր է նշանակել... Հսն... հսն... Լավ, տղա ջան, կներես, որ անհանգստացրի, որ զարթնի, հայտնիր, որ փորձ չի լինելու: Կասեն... Տես, չնոռանաս... *(Անջարում է հեռախոսը:)* Տարօրինակ է, շատ տարօրինակ է: Պատահականություն չի կարող լինել... Փորձերին առայժմ երեքով ենք եղել ու երեքիս վրա էլ

փոշին ազդել է: Չլինի՞ բառերն էլ փոշի ունեն... Ինչ փոշի է, այսքան արագ իրեն զգացնել է տալիս: Էլ ինչե՞ր կարող են լինել... Աճյունափոշի... Աճյունափոշին որտեղից գլուխս մտավ: Երևի մեռնելիս էլ չզգամ, որ մեռել եմ: Պարուհին մնաց էր պտտվում... Պտտվեմ, երևի աճյունափոշին գլխիցս թռնի:

Սկսում է պտտվել՝ ինչ-որ երգ դնողով: Հայտնվում է լրագրողը, հմայված հետևում, քիչ անց ծափահարում է:

ԼՐԱԳՐՈՂ - Բրավո, բրավո:

ԱՐՈՒՄ - *(կանգ է առնում):* Երկնքից ընկա՞ք:

ԼՐԱԳՐՈՂ - Խոստացել էի վերադառնալ ու վերադարձել եմ:

ԱՐՈՒՄ - Փոշին է հետաքրքրել, թե՛ ես:

ԼՐԱԳՐՈՂ - Փոշին միջնորդ էր, որ հանդիպեիս: Մնացյալը ճակատագրի գործն է: Այստեղից գնալիս ճանապարհին նույնիսկ ձեզ նվիրված քառասող հորինեցի.

*Ճակատագրիս էլ աչքեր ունի,
Այս անգամ նայեց իմ ու քո կողմը,
Չեմ՝ նահանջելու՝ ինչ էլ որ լինի,
Ինչքան էլ փչեն քամին ու հողմը...*

ԱՐՈՒՄ - Վատ չէր, բայց ձեր ոգ-

ևորությունը մաշկիցս ներս
 չմտավ: Ձեզ նայելով դժվար է
 հավատալ, որ այդպես, առանց
 երկմտելու կարող եք այդքան
 անբռնազբոս ու հախտուն լի-
 նել: Ձեր զգացմունքների կրա-
 կահերթից գլուխս պտտվեց:
 Ոնց որ աշխարհում միայն ես
 եմ ու դուք՝ ոչ ամուսին, ոչ երե-
 խաներ, չգիտեմ՝ էլ ինչեր...

ԼՐԱԳՐՈՂ - Հետևել եմ ձեզ, հե-
 տաքրքրվել եմ:

ԱՐՈՒՄ - Հետևե՛լ, հետաքրքրվե՛լ
 եք:

ԼՐԱԳՐՈՂ - Այլապես չէի մոտե-
 նա:

ԱՐՈՒՄ - Եվ ի՞նչ եք պարզել:

ԼՐԱԳՐՈՂ - Որ միայնակ եք, ինք-
 նամիտի, խուսափում եք մար-
 դաշատ ու աղմկոտ տեղերից:

ԱՐՈՒՄ - Եվ համոզվել եք, որ հենց
 ես եմ ձեր ընտրյալը:

ԼՐԱԳՐՈՂ - Այդպես է ստացվում:

ԱՐՈՒՄ - Այ թե ինչ... Եթե կինը
 միայնակ է, ապա կարելի է
 առանց ծանր ու մեծ անելու սի-
 րահետել, չգիտեմ՝ էլի ինչեր
 ծրագրել... Աշխարհն է փոխ-
 վե՛լ, թե՛ն էս աշխարհից չեք: *(Հա-
 յացքը երկինք բարձրացնելով:)*

Քեզ դուր գալի՞ս է, ասա, դուրդ
 գալի՞ս է, որ հետախույզ լրագ-
 րողն է ուզում տեղդ գրավել:

Ձայն հանիր... Մաշկի խշշո-
 ցից էիր բողոքում... Չգիտե՞իր,
 որ կնոջ մաշկը չի կարող լուռ
 լինել, մանավանդ զգվանքի
 սպասելիս...

ԼՐԱԳՐՈՂ - Ո՞ւմ եք ասում:

ԱՐՈՒՄ - Ամուսնուս... Ձեր տեղե-
 կություններին կարող եք ավե-
 լացնել, որ նաև ցնդած եմ...

ԼՐԱԳՐՈՂ - Ինչ ցնդած, սեփա-
 կան ցավին հավատարիմ լինե-
 լը հարգելի է:

ԱՐՈՒՄ - Ուրիշ արժանիքներ չու-
 նեմ:

ԼՐԱԳՐՈՂ - Փնտրողը կգտնի:

ԱՐՈՒՄ - Դրա համար արշա-
 վախումը է պետք, միայնակ
 դժվար կլինի:

ԼՐԱԳՐՈՂ - Եթե ճիշտ հասկա-
 ցա...

ԱՐՈՒՄ - Միանգամայն... Մերը
 երկկողմանի երթևեկություն
 է... Ձեր դեպքում երթևեկույթ-
 յունը միակողմանի է ստացվել:
 Ցավում եմ, բայց ցանկության
 դեպքում էլ չեմ կարող ընդա-
 ռաջել: Այնպես որ, դուք ձեր
 ճանապարհը շարունակեք, ես
 էլ իմ ճանապարհով գնամ:

ԼՐԱԳՐՈՂ - Այլընտրանք միշտ էլ
 կգտնվի:

ԱՐՈՒՄ - Այլընտրանք՝ գուցե, բայց
 ներսս զբաղված է, այնտեղ ձեզ

համար տեղ չկա ու հետագայում էլ, չեմ կարծում, որ լինի: Այնպես որ...

Արուսն արագաքայլ հեռանում է:
Լրագրողը շփոթված հետևում է նրան: Հայտնվում են հավաքարարները: **Պարային շարժումներով փոշեկույներով մաքրում են հատակը:** **Նրանց պարին համընթաց բեմն աստիճանաբար մթնում է:**

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նոյն տեսարանը: Փոշտալով ու հազալով հայտնվում է **Վարդանը:** **Զարմացած շուրջն է նայում, մոտենում, ոտքով հարվածում է գահին:**

ՎԱՐԴԱՆ - Ոնց որ թագավորներն ու նախագահները չեն կարող սովորական աթոռին նստել: Նրանց հետույքներն էլ են մեծապատիվ: *(Մկսում է հազալ ու փոշտալ:)* Հիմա էլ բնապահպանն է ուզում նստել: Ալերգիան վերացրեք, ալերգիան, որ մարդիկ չտանջվեն... Մենք ինչ դերասան, դերասանը դուք եք... Ձեր բեմն ամբողջ մոլորակն է, մերը՝ էս փոշոտ ու կիսախավար տարածքը: Իբր մենք էլ ենք ապրում՝ ամեն ապրողի երանի տալով: Չենք ապ-

րում, պարզապես օգնում ենք, որ դուք ու ձեր հետույքներն ապրեն: *(Փոշտում է:)* Էնքան եմ փոշտալու, մինչև ներսիս եղած-չեղածը քիթ ու բերանիցս թափվի: Կարծես ուրիշ պիես չկար, բերել, փոշոտ պատմությունը կապել է ջաններիս: Ուրիշները աշխարհի հարստություններն են փոշիացնում, մենք՝ մեր առողջությունը: *(Երկարապրև հազից, թվում է, ուր որ է կիսեղդվի:)*

ԱՐՈՒՍ - *(ներս է գալիս, արագ մոտենում Վարդանին):* Վարդան, Վարդան...

ՎԱՐԴԱՆ - *(հանդարտվելով):* Նոպա էր, կանցնի...

ԱՐՈՒՍ - Էդ վիճակով ինչո՞ւ ես եկել:

ՎԱՐԴԱՆ - Հայտարարելու, որ հրաժարվում եմ դերից:

ԱՐՈՒՍ - Հեռախոսով չէիր կարող հրաժարվել:

ՎԱՐԴԱՆ - Հեռախոսը չի վերցնում:

ԱՐՈՒՍ - Ինձ զանգեիր: Քիթդ տեսնել ես, ծաղրածուն քեզ օրինակ:

ՎԱՐԴԱՆ - Որ միայն քթով պրծնենք, գոհ պիտի լինենք: Կարծես աշխարհում ուրիշ պիես չկար:

ԱՐՈՒՄ - Ես էլ եմ հրաժարվել:
ՎԱՐԳԱՆ - Բեմադրիչը գիտի:
ԱՐՈՒՄ - Ասել եմ... Կոկորդիս պատմությունը ոնց որ վերջ չունի:
ՎԱՐԳԱՆ - Փոշու հետևանք է:
ԱՐՈՒՄ - Ինչպես քո պերգիան:
 Գիշերն էլ մղձավանջներն էին մլակների պես վրա տվել:
ՎԱՐԳԱՆ - Փոշու հետ էիր կռվում:
ԱՐՈՒՄ - Փոշու և ամուսնուս:
ՎԱՐԳԱՆ - Ամուսնուդ ինչի էիր հիշել:
ԱՐՈՒՄ - Էն լրագրողի այցը հուշերս դուրս թափեց:
ՎԱՐԳԱՆ - Եկել էր... Ջգում էի, որ կգա: Ասացի, չէ՛, քեզ ուրիշ հայացքով էր նայում:
ԱՐՈՒՄ - Նորմալ մեկը չհանդիպեց:
ՎԱՐԳԱՆ - Ամուսնուդ մեղքը ո՞րն էր:
ԱՐՈՒՄ - Մեղադրում էի, որ հեռացել է, որովհետև կողքիս որ լինեք, պատահական մեկը չէր համարձակվի մոտենալ:
ՎԱՐԳԱՆ - Ինչ գիտեք, որ կողքիդ չէ:
ԱՐՈՒՄ - Հետևել է, հետաքրքրվել ինձանով:
ՎԱՐԳԱՆ - Ուրեմն լուրջ է տրամադրվել:
ԱՐՈՒՄ - Բանաստեղծություն էր

հորինել: Իբր՝ ճակատագիրը երկուսիս միասին է տեսնում: Իսկը ցնդած: Էդ շուտ ոգևորվողների սերն էլ, հրապուրանքն էլ կայծակի պես փայլատակում, կայծակի պես արագ էլ մարում են:
ՎԱՐԳԱՆ - Սրտիդ մոտ չընդունես: Պիեսն էլ լուրջ ընդունեցինք, տեսանք արդյունքը...
ԱՐՈՒՄ - Դրա համար էլ հրաժարվեցի:
ՎԱՐԳԱՆ - Հեղինակի անձն է հետաքրքիր: Եվ գրել է, և վախից թաքցրել է անունը:
ԱՐՈՒՄ - Անունն ասեղ չի, որ պարկում թաքցնես:
ՎԱՐԳԱՆ - Պարզվում է, լավ էլ թաքնվում է:
ԱՐՈՒՄ - Դեռ ոչ մեկին չի հաջողվել մինչև վերջ թաքնված մնալ:
ՎԱՐԳԱՆ - Բան գիտես՝ ասա:
ԱՐՈՒՄ - Գիտեմ, իմացել եմ:
ՎԱՐԳԱՆ - Գիտե՞ս... Իմացել ու լռում ես:
ԱՐՈՒՄ - Երեկ գնացել էի բեմադրիչին տեսնելու: Խեղճի վիճակն էլ մի բան չի: Աչքն է վնասել, ծովահենի պես աչքակապով է:
ՎԱՐԳԱՆ - Ասեիր, ես էլ գայի:
ԱՐՈՒՄ - Մեկը լինեք, քեզ այցելեք...

ՎԱՐԳԱՆ - Կարևորը՝ չնեղանա:

ԱՐՈՒՄ - Մի աչքով ինչքան պիտի նեղանա... Ասացի՛ր, որ գնացել էի բեմադրիչին տեսնելու:

ՎԱՐԳԱՆ - Էդ իմացանք...

ԱՐՈՒՄ - Սովորականի պես սուրճն ինքը եփեց: Երբ սուրճը եփելու գնաց, աչքս աշխատասենյակի բաց դռանն ընկավ: Ներս մտա: Համակարգիչը չէր անջատել: Ու ի՞նչ...

ՎԱՐԳԱՆ - Ի՞նչ...

ԱՐՈՒՄ - Էկրանին էս պիեսն էր: Արագ տեքստը բարձրացրեցի, որ հեղինակի անունը կարդամ, վերևում անունը չկար: Տեքստը մինչ վերջ իջեցրի... Աչքերիս չէի հավատում:

ՎԱՐԳԱՆ - Արագ ասա, քանի նոր նոպա չի սկսվել:

ԱՐՈՒՄ - Ասեմ՝ հին նոպաներդ էլ կկրկնվեն:

ՎԱՐԳԱՆ - Ո՛վ էր:

ԱՐՈՒՄ - Գուշակիր:

ՎԱՐԳԱՆ - Մենդելենը:

ԱՐՈՒՄ - Չէ:

ՎԱՐԳԱՆ - Ցիցերոնը:

ԱՐՈՒՄ - Կարո՞ղ է պապուդ անունն էլ տաս:

ՎԱՐԳԱՆ - Ինչ-որ մեկը:

ԱՐՈՒՄ - Բեմադրիչը:

ՎԱՐԳԱՆ - Ի՞նչ... *(Սկսում է փոշտալ, հանդարտվելուց հե-*

տր): Իմացա՞մ, որ իմացել ես:

ԱՐՈՒՄ - Երևի չէ:

ԲԵՄԱԳՐԻՉ - *(հայտնվում է՝ մի աչքը թանգիֆով փակած):* Իմացա, իմացա, միանգամից իմացա:

ԱՐՈՒՄ - Խոհանոցում չէի՞ք:

ԲԵՄԱԳՐԻՉ - Էի:

ԱՐՈՒՄ - Էլ ո՞նց իմացաք:

ԲԵՄԱԳՐԻՉ - Էկրանին էջը փոխված էր:

ԱՐՈՒՄ - Ճիշտ որ. մազը երկար, խելքը կարճ:

ՎԱՐԳԱՆ - Ինչո՞ւ էիք թաքցնում:

ԲԵՄԱԳՐԻՉ - Կասե՛ի, եթե չկասկածե՛ի հաջողությանը: Անունս թաքցնում էի, մտածելով, որ փոշու վրա գրված անունը ի վերջո փոշին էլ կծածկի: Խնդրանքս է, որ մոռանաք պիեսն էլ, հեղինակին էլ:

ՎԱՐԳԱՆ - Ինչ էլ վերնագիր էր՝ փոշուց քշվածները... Անհամատեղելի եզրեր՝ փոշին ու դուք:

ԲԵՄԱԳՐԻՉ - Սիրում եմ ինքս ինձ հակառակվել, թեև գրելիս այլ խնդիր էր պտտվում գլխումս: Համացանցում փոշու բաղադրության մասին գրառումը կարդալով՝ բորբոս, մանրէներ, սնկեր, մետաղներ, վսասակար այլ նյութեր, ինչն էլ պատճառ էր պերգիայի, ասթմայի, շնչուղի-

ների տարբեր հիվանդությունների՝ տագնապեցի: Հիշեցի Երկրի անապատացման մասին բնապահպանների ահագանգը, ինչը նշանակում է, որ փոշու քանակը ավելանալու է: Մտքովս անցավ կանխավ զգուշացնել հավանական աղետի մասին: Հետևանքն ինձ համար էլ էր անսպասելի:

ՎԱՐԳԱՆ - Աշխարհում ինչքան ասես կազմակերպություն ու մասնագետ կա, որ զբաղվում են բնապահպանական խնդիրներով: Պիեսն ինչ էր փոխելու:

ԱՐՈՒՄ - Փոխարենը երեքիս հախից եկավ: Չգիտենք էլ՝ ինչ օյիններ կբերի գլխներիս:

ՎԱՐԳԱՆ - Ուրիշ պիես գրել էիք:

ԲԵՄԱԳՐԻՉ - Առաջին փորձս էր:

ՎԱՐԳԱՆ - Վաղն էլ միջուկային պատերազմի վտանգը կարող է մեջտեղ գալ...

ԲԵՄԱԳՐԻՉ - Զգում եմ, որ գերագնահատել եմ ուժերս... Միայն իմանաք, հոգիս ոնց խաղաղվեց, երբ ջնջեցի գրածս: Նույնիսկ այժմ ցավը մոռացա: Նորից եմ խնդրում, որ մոռանաք պիեսն էլ, հեղինակին էլ: Լրագրողներ երևացին՝ ձևացրեք, իբր ոչնչից տեղյակ չեք: Ապաքինվելու համար մի քա-

նի օր տանը մնացեք: Հիշաչար մի եղեք ու ներեք մեղավորիս: Իմիջիայլոց, միջուկային պատերազմի վտանգը միշտ էլ կա: Ուրիշ հարցեր կան... Եթե չկան, հիմա լքեմ ձեզ: Պոլիկլինիկա պիտի գնամ, ոնց որ այժմ այժիս վիճակն էլ լավ չի: Կհանդիպենք առավել լավատեսական առիթով: Մինչ հանդիպում և համենայնդեպս զգուշացեք փոշուց: *(Դանդաղաքայլ հեռանում է:)*

ՎԱՐԳԱՆ - Ստացվում է, փոշու դեմ խաղ չկա:

ԱՐՈՒՄ - Ոնց որ բնության՝ խաղալու հավեսն էլ է կորել:

ՎԱՐԳԱՆ - Մերն էլ... *(Սկսում է փոշիքալ:)*

ԱՐՈՒՄ - *(հեռախոսագանգ):* Ալո... Լսում եմ: Ես եմ... Ինչ... Ավտովթարից... Երբ, որտեղ... Արդեն հուղարկավորել են... Ինչո՞ւ շուտ չէիք հայտնում: Ինչ խառը վիճակ, հիմա խառը չեք... Այդքան անսիրտ, անտարբեր ու անպատասխանատու չի կարելի լինել, չի կարելի, չի կարելի... *(Արդասավում է:)* Ինչո՞ւ հենց ինքը, ինչո՞ւ, ինչո՞ւ...

ՎԱՐԳԱՆ - Ո՞ւմ էին հուղարկավորելու կամ հուղարկավորել:

ԱՐՈՒՄ - Ամուսնուս... ավտովթարից...

ՎԱՐԳԱՆ - Հանգստացիր, որ
ասածներդ հասկանամ:

ԱՐՈՒՄ - Գիտեի, զգում էի...
Միրոս վկայում էր, որ ինձնից
հեռու վտանգը հետապնդելու
է... Առանց ինձ չի կարողանա-
լու պաշտպանվել...

ՎԱՐԳԱՆ - Ամուսնալուծված չեմք:

ԱՐՈՒՄ - Հետո՛ ինչ:

ՎԱՐԳԱՆ - Հետո այն, որ քեզ հա-
մար էդ ավտովթարն ավելի
շուտ է եղել:

ԱՐՈՒՄ - Մի՛ ասա, այդպես մի՛
ասա:

ՎԱՐԳԱՆ - Իմ ասելով հո չի...
Ասեմ-չասեմ, փաստն այն է, որ
քեզ համար նա վաղուց չի եղել:

ԱՐՈՒՄ - Ո՞նց չի եղել, որ չի եղել,
ո՞նց եմ սպասել, ո՞ւմ եմ սպասել,
սպասել եմ, չէ՞, միշտ էլ սպասել
եմ, չլինե՞ր՝ ո՞ւմ էի սպասելու,
ինչո՞ւ էի սպասելու:

ՎԱՐԳԱՆ - Իզուր էլ սպասել ես,
հիմա էլ իզուր արտասվում ես:

ԱՐՈՒՄ - Ո՞նց՝ իզուր, ինչո՞ւ՝ իզուր...
Շարունակելու եմ սպասել:
Միշտ եմ սպասելու, ինչպես

չեմ հավատացել նրա հեռանա-
լուն, հիմա էլ չեմ հավատալու,
որ այլևս չկա: Չսպասեմ՝ ներ-
սիս դատարկությունն ինչո՞վ եմ
լցնելու...

ՎԱՐԳԱՆ - Էլ ինչո՞ւ ես արտաս-
վում:

ԱՐՈՒՄ - Որովհետև երբ հեռա-
ցավ, չարտասվեցի:

ՊԱՐՈՒՇԻ - *(թուլուարով հայտն-
վում է, նկատելով արտասվող
Արուսին՝ մտրեկում է):* Լալի՛ն
եք...

ԱՐՈՒՄ - *(թաշկինակով մաքրելով
աչքերը):* Չէ, աչքս փոշի ըն-
կավ:

ՊԱՐՈՒՇԻ - Ես էլ անհանգստա-
ցա... Չե՞ք ուզում փոշու պարը
տեսնել: *(Երաժշտություն: Պա-
րուհին պարում է, քիչ անց:)*
Հիմա պտտահողմը փոշին
պտտելով կբարձրացնի եր-
կինք: *(Պարզվելով՝ դանդաղ
վեր է բարձրանում:)*

ՎԱՐԳԱՆ - Ամբողջ պիեսից էս
պարը մնաց:

**Երաժշտությունը շարունակվում է: Փոշեկուլներով հայտնվում
են հավաքարարները և պարային շարժումներով սկսում են
մաքրել հատակը: Դանդաղ մթնում է:**

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



Դավիթ
ԽԱԶԻՅԱՆ

...Բայց գուցե պետք չէ, որ մարդու բոլոր երազանքներն իրականանան: Ինչ-որ բան էլ պիտի անհասանելի մնա, որ մարդը ճախրելու տեղ ունենա, սիրելու տեղ, երազանքների ու հույսերի տեղ... Երազանքներ չունեցող մարդը սպառնում է... Եկեք միասին երազենք «կյանք» կոչվող այս անվերջ երկնաքերի վերջին հարկի ու տանիքի մասին, ուր աստղերն են մեզ սպասում:

ՏԱՐ ԻՆՁ ԴԵՊԻ ԱՍՏՂԵՐԸ

(տրիսուր կատարակերգություն 1 արարով, 3 դրվագով)

Գործող անձինք

ՏՂԱՄԱՐԴ

ԿԻՆ

Բենի կենտրոնում սպիտակ վանդակ է գծված՝ մոտ 1,5x1,5 մետր:
Վանդակի չորս անկյուններում թեթև, ուղղահայաց լույսեր են: Որևէ
դեկոր չկա: Գործողության ընթացքում լսվում է վերելակի ձայնը: Տղա-
մարդը և Կինը միջին տարիքի են, թեև դա բնավ էական չէ: Ոչ մի վուլ-
գար տեսարան կամ անգամ դա ենթադրող ձայնային կամ այլ էֆեկտ
չպետք է լինի: Երաժշտությունը՝ ըստ բեմադրիչի հայեցողության:
Տեղ-տեղ կարելի է օգտագործել Pink Floyd-ի “Dark Side of the Moon”
ալբոմի վերելակի հատվածի երաժշտությունը:
Կարելի է նաև բնավ առանց երաժշտության:

ԴՐՎԱԿ 1

Կինը մտնում է վերելակի լուսավոր-
ված վանդակի մեջ, երևակայական
կոճակ սեղմում: Ուսից փոքրիկ պա-
յուսակ է կախված: Կանգնում է ձախ
կողմում՝ դեմքով դեպի հանդիսատե-
սը, սպասում վերելակի շարժվելուն:

ՏՂԱՄԱՐԴ - *(հևիհև իրեն վերելակ
գցելով և հակառակ անկյունում
կանգնելով):* Հասցրեցի: Բարի օր:

Կինը զարմացած նայում է Տղամար-
դուն, ոտքից գլուխ չափում, չի պա-

տասխանում: Հարդարում է մազերը:
Վերելակը շարժվում է:

ՏՂԱՄԱՐԴ - *(շար սիրալիիր ժպի-
տով):* Իմ բարևին չե՞ք ցանկա-
նում պատասխանել:

ԿԻՆ - *(Տղամարդու կողմը չնայելով):*
Անձանոթ տղամարդկանց չեմ
բարևում և անպատեհ խոսակ-
ցությունների մեջ չեմ մտնում:

ՏՂԱՄԱՐԴ - *(ոտրախացած):* Ուրեմն
առաջարկում եմ ծանոթանալ:
Ճանապարհը երկար է...

ԿԻՆ - Ես անձանոթ տղամարդ-
կանց հետ չեմ ծանոթանում:

ՏՂԱՄԱՐԳ - Ուրեմն եկեք, այսպես ասած, նախնական ծանոթանանք, քանի որ ճանապարհը երկար է:

ԿԻՆ - *(գարնացած հայացք է ներդնում Տղամարդուն)*: Երկամր:

ՏՂԱՄԱՐԳ - Երկար:

ԿԻՆ - Նախնական:

ՏՂԱՄԱՐԳ - Նախնական:

ԿԻՆ - Ինչպե՛ս:

ՏՂԱՄԱՐԳ - Դե՛... կարող եք ինձ պարզապես Տղամարդ անվանել:

ԿԻՆ - *(շրջում է գլուխը, թեթև արհամարհանքով)*: Ախր, դուք ի՛նչ Տղամարդ:

ՏՂԱՄԱՐԳ - Պայմանական անուն է:

ԿԻՆ - *(հպանցիկ նայում է)*: Լավ, պայմանական Տղամարդ...

ՏՂԱՄԱՐԳ - Թույլ կտամք իմանալ ձեր նախնական անունը:

ԿԻՆ - Կին... ձեզ համար՝ պարզապես Կին:

ՏՂԱՄԱՐԳ - Անչափ ուրախ եմ:

ԿԻՆ - Մի հարցնող լինի՛ ինչո՞ւ եք այդքան ուրախ:

ՏՂԱՄԱՐԳ - Ամեն օր ձեզ պես հմայիչ կնոջ չես հանդիպի վերելակում: Չեք հավատա, բայց նախորդ կյանքում վերելակում մի... Մի կնոջ հետ էի: Ուֆֆ, ափսոս այդ տարիներս... Կյանքս կերավ... Պատկերացնում եք, վերելակում անցկացրած երկար ու ձիգ տարիներ

ներ մեկի հետ, որը շարունակ կրծում է միտքդ ու սիրտդ:

ԿԻՆ - *(հառաչելով)*: Ես հասկացա:

ՏՂԱՄԱՐԳ - Ի՛նչ հասկացաք:

ԿԻՆ - *(հեզնական ժպիտով)*: Ես ամեն՛ ինչ հասկացա...

ՏՂԱՄԱՐԳ - Դե ասե՛ք, անհամբերությունից մեռնում եմ:

ԿԻՆ - *(ինքնազոհ ժպիտով)*: Ամեն՛ ինչ հասկացա...

ՏՂԱՄԱՐԳ - Խնդրում եմ՝ ասեք, թե ինչ հասկացաք:

ԿԻՆ - Դուք նրանցից եք, ով միշտ ուշանում է համերգից ու մոռանում է անջատել հեռախոսը:

ՏՂԱՄԱՐԳ - Հըմ...

ԿԻՆ - Անգամ վերելակից քիչ էր մնում՝ ուշանայիք: Երանի՛ թե ուշանայիք...

ՏՂԱՄԱՐԳ - Բայց հասցրեցի:

ԿԻՆ - Ձեր նմաններն են, որ ուշացումով ներս են խուժում համերգասրահ՝ դուռը ճոռացնելով: Մի կերպ գտնում են իրենց տեղն ու, հերթով բոլորի ոտքերը տրորելով, վերջապես տեղավորվում ինքնազոհ ժպիտով...

ՏՂԱՄԱՐԳ - Բայց ես...

ԿԻՆ - Մի թոուցիկ հայացքն էլ հերիք էր, որ ճանաչելի ձեզ...

ՏՂԱՄԱՐԳ - Ախր ես...

ԿԻՆ - *(ժպտալով)*: Տեսա՞ք, ինչպես մերկացրի ձեզ:

ՏՂԱՄԱՐԳ - Մերկացրի՛ք:

ԿԻՆ - Մի՛ ոգևորվեք: Փոխաբերական իմաստով: Այսինքն՝ ճանաչեցի:

ՏՂԱՄԱՐԴ - Բայց...

ԿԻՆ - Եվ մի՛ փորձեք արդարանալ: Այդպես խցկվում եք ամեն տեղ, անգամ համերգասրահ ու վերելակ: Եվ այն պահին, երբ թվում է, թե վերջապես կարելի է վայելել երաժշտությունը... Ես գիտեմ, թե ինչ է լինում...

ՏՂԱՄԱՐԴ - Ի՞նչ է լինում:

ԿԻՆ - Հնչում է ձեր հեռախոսի զանգը... Այդ պատկերն աչքիս առջև է: Ուֆֆ, հոգնել եմ այս ամենից...

ՏՂԱՄԱՐԴ - Ես էլ եմ հոգնել... Պատկերացնում եք, մի վերելակի մեջ երկար ու ձիգ տարիներ մի... մի կնոջ հետ... Հակառակի պես հեռախոսի լիցքն էլ վերջացել էր: Ոչ խաղալ էր լինում, ոչ էլ մի ուրիշ բան անել... Ստիպված այդքան տարի նրան եմ լսել...

ԿԻՆ - Դուք չէիք խոսում:

ՏՂԱՄԱՐԴ - Ես նրան էի լսում: Այսպես ասած՝ հասարակական մենության պայմաններում...

ԿԻՆ - Անհետաքրքիր էր...

ՏՂԱՄԱՐԴ - Ահավոր...

ԿԻՆ - Եվ ինչ էիք անում:

ՏՂԱՄԱՐԴ - Իսկ ինչ կարող էի անել... Վերելակում շատ բան չկա անելու:

ԿԻՆ - Չկա...

Կարճատև դադար:

ՏՂԱՄԱՐԴ - Իսկ դուք ինչ եք անում:

ԿԻՆ - Չեք հավատա, եթե անգամ ասեմ:

ՏՂԱՄԱՐԴ - Խնդրում եմ...

ԿԻՆ - Եթե ուշադիր լինեիք՝ կնկատեիք:

ՏՂԱՄԱՐԴ - Ուշադիր եմ: Չեմ նկատում...

ԿԻՆ - Բարձրանում եմ վերելակով:

ՏՂԱՄԱՐԴ - (*ծայրում է*): Դա նկատեցի: Իսկ ընդհանրապես՝ ինչ եք անում: Կյանքում:

ԿԻՆ - Նույնը:

ՏՂԱՄԱՐԴ - Այսինքն:

ԿԻՆ - Բարձրանում եմ վերելակով:

ՏՂԱՄԱՐԴ - Շուտվանից:

ԿԻՆ - Երբ ծավեցի, մի քիչ հասակ առա, սկսեցի խոսել ու ինձ մանկապարտեզ տարան: Հենց այդ օրվանից...

ՏՂԱՄԱՐԴ - Այդքան:

ԿԻՆ - Քիչ է: Թե՛ն ձեզ թվում է՝ դուք ուրիշ բան եք անում:

ՏՂԱՄԱՐԴ - Հըմ... Չէի մտածել: Ճիշտ եք՝ ես էլ նույնն եմ անում:

ԿԻՆ - Այ տեսնում եք...

ՏՂԱՄԱՐԴ - Տխուր է...

ԿԻՆ - Տխուր է, բայց սա է կյանքը...

C'est la vie, mon chere amie...

ՏՂԱՄԱՐԳ - Իսկ էլ ինչ եք անում...
ԿԻՆ - Դե, վերելակով բարձրանալուց բացի:
ԿԻՆ - Ես...
ՏՂԱՄԱՐԳ - Ըհր...
ԿԻՆ - Չանձրանում եմ:
ՏՂԱՄԱՐԳ - Դարձյալ չհասկացաք: Նկատի ունեմ՝ կյանքում... Ընդհանրապես...
ԿԻՆ - Արդեն ասացի՝ ձանձրանում եմ:
ՏՂԱՄԱՐԳ - Ամուսին...
ԿԻՆ - Չանձրանում եմ:
ՏՂԱՄԱՐԳ - Երեխաներ...
ԿԻՆ - Ասացի՝ ձանձրանում եմ:
ՏՂԱՄԱՐԳ - Ինչպես եմ ձեզ հասկանում...
ԿԻՆ - *(թեթև հեզմանքով)*: Միթե տղամարդը կարող է հասկանալ կնոջը...
ՏՂԱՄԱՐԳ - *(վայրահ)*: Կարող է...
ԿԻՆ - *(ասես չլսելով Տղամարդուն)*: ...և ցրել նրա ձանձրույթը:
ՏՂԱՄԱՐԳ - *(ավելի անվայրահ)*: Կարող է:
ԿԻՆ - *(թեթևակի շրջվելով դեպի Տղամարդը)*: Ասացիք՝ ինչ է ձեր անունը:
ՏՂԱՄԱՐԳ - Տղամարդ:
ԿԻՆ - *(եղ շրջվելով)*: Ինչ ձանձրալի է:
ՏՂԱՄԱՐԳ - Բայց ես...
ԿԻՆ - «Ես, ես, ես...»: Հենց դրանից եմ ձանձրանում: Ձեզ համար աշխարհի կենտրոնը դուք եք: Մի աշխարհ ու մի վերել-

լակ, որի տերն ու տնօրենը դուք եք ուզում լինել: Եվ աշխարհն էլ հատուկ ձեզ համար է պատվում:
ՏՂԱՄԱՐԳ - Բայց ես...
ԿԻՆ - Խնդրում եմ՝ լռեք: Թողեք լսեմ վերելակի ձայնը... *(Կարճ դադար, ականջ է դնում)*: Հետաքրքիր է, որ հարկին հասանք:
ՏՂԱՄԱՐԳ - Հինգերորդ կամ վեցերորդ:
ԿԻՆ - Բայց դա ինչ էական է... Որքան եք սիրում ճշգրտություն ամեն ինչում...
ՏՂԱՄԱՐԳ - *(մեղալուր ձայնով)*: Դուք հարցրեցիք...
ԿԻՆ - Կարող էիք ավելի ումանտիկ պատասխան գտնել: Հենց դրանից եմ ձանձրանում: Ի դեպ, ինչ կա վերևում...
ՏՂԱՄԱՐԳ - Ամենավերևում:
ԿԻՆ - Ըհր:
ՏՂԱՄԱՐԳ - Ասում են՝ երկինքն է...
ԿԻՆ - Ինչ հետաքրքիր է... Ա՛խ, ինչպես կուզեի գոնե մի անգամ այնտեղ հայտնվել... Իսկ ինչ կա այնտեղ՝ երկնքում:
ՏՂԱՄԱՐԳ - Ասում են, թեև ես չեմ տեսել, այնտեղ աստղեր կան ու մի լուսին... Ու թեթև մի քամի:
ԿԻՆ - *(երազանքով)*: Թեթև քամի, որը խաղում է մազերիդ մեջ ու ալիքում շորիկդ... *(Տեղում պարզվում է, որ շորիկը խաղա,*

իսկ ձեռքով ալիքում է մնազերը:)

Ասում եք, այնտեղ չէ՞ք եղել:

ՏՂԱՄԱՐԳ - Ավանդ...

ԿԻՆ - Ավաղ այո՛, թե՛ ավաղ ոչ:

ՏՂԱՄԱՐԳ - Չգիտեմ: Կուզեի լինել, բայց ասում են՝ այնտեղից վերադառնալ հնարավոր չէ:

ԿԻՆ - *(երազանքով)*: Իսկ ես չեի էլ վերադառնա...

ՏՂԱՄԱՐԳ - Ինչպե՛ս թե... Բա ամուսինը, բա ճա՛շը, արդուկը, լվացքը...

ԿԻՆ - Ո՛նց եմ ձանձրացել բոլորիցդ:

ՏՂԱՄԱՐԳ - Ինձանի՞ց էլ:

ԿԻՆ - Այո՛: Այն պահից, երբ ներխուժեցիք վերելակ: Անգամ դրանից առաջ: Դուք այնքան կանխատեսելի եք...

ՏՂԱՄԱՐԳ - *(հստաչում է)*: Գուցե... Այսինքն՝ թերևս...

ԿԻՆ - Ես գիտեի... Ես զգում էի... Հրաշքներ չեն լինում:

ՏՂԱՄԱՐԳ - Ես չգիտեմ...

ԿԻՆ - Բայց անգիր գիտեք վերելակի արագությունն ու մեքենայի կառուցվածքը, չէ՞: Չմենային անվադողեր, շարժիչի յուղ, անվահեծեր ու էլի ինչ-որ ձանձրոյթներ...

ՏՂԱՄԱՐԳ - Իրավացի եք, անվադողերը փոխելու ժամանակն է:

ԿԻՆ - Ձեզ մոտ գինի չկա՞:

ՏՂԱՄԱՐԳ - Գինի՞... Գինի չկա:

ԿԻՆ - Չանձրալի մարդ եք դուք, պարոն...

ՏՂԱՄԱՐԳ - *(համակերպված)*: Չանձրալի եմ... Խոստովանում եմ...

ԿԻՆ - Ինքնախոստովանությունը դեռևս գործի կեսն է:

ՏՂԱՄԱՐԳ - Հաստատ:

ԿԻՆ - Ե՛վ:

ՏՂԱՄԱՐԳ - Ի՞նչը «Ե՛վ»:

ԿԻՆ - Հետո՞:

ՏՂԱՄԱՐԳ - Ի՞նչը «Հետո»...

ԿԻՆ - Հետևություններ, պարոն Չանձրալի, հետևություններ...

ՏՂԱՄԱՐԳ - Հըմ... Չգիտեմ... Մի անգամ... Չեմ հիշում...

ԿԻՆ - Փաստորեն ես ճիշտ էի:

ՏՂԱՄԱՐԳ - Անվադողերի հարցում: Միանշանակ ճիշտ եք: Փոխելու ժամանակն է:

ԿԻՆ - Սպասեք: Լո՛նք, խնդրում եմ:

Լո՛ում են մի քանի վայրկյան:
Վերելակային ձայներ են լսվում:

ԿԻՆ - Ի՞նչ ձայն էր:

ՏՂԱՄԱՐԳ - *(ակասյց դնելով)*: Կարծես ինչ-որ հարկի հասանք:

ԿԻՆ - *(հույսով)*: Երկնքի՞ն:

ՏՂԱՄԱՐԳ - Չեմ կարծում:

ԿԻՆ - Ափսո՛ս...

ՏՂԱՄԱՐԳ - Ուզում եք, որ հասնենք երկնքի՞ն:

ԿԻՆ - Շատ... Շատ եմ ուզում...

ՏՂԱՄԱՐԳ - Բայց ասում են՝ այնտեղից վերադարձ չկա:

ԿԻՆ - Իսկ ես չեմ էլ ուզում վերադառնալ:

ՏՂԱՄԱՐԳ - Ինչպե՞ս: Բա ամուսի-
նը, ճաշը, լվացքը...

ԿԻՆ - (*սրբունեղած*): Լո՞ւնք, խնդրում
եմ... Դուք երբեք ինձ չեք հաս-
կանա:

ՏՂԱՄԱՐԳ - (*քիչ վրդովված*): Ին-
չո՞ւ չեմ հասկանա:

ԿԻՆ - Որովհետև գիտեմ՝ ով եք:

ՏՂԱՄԱՐԳ - Գիտե՞ք:

ԿԻՆ - Միանշանակ: Ով միշտ ու-
շանում է համերգից, հերիք չէ,
մոռանում է անշատել հեռախո-
սը:

ՏՂԱՄԱՐԳ - Բայց ես...

ԿԻՆ - (*ընդհարելով*): Բացի այդ,
ավտոմեխանիկ եք:

ՏՂԱՄԱՐԳ - (*ընդվզելով*): Բայց ես
ավտոմեխանիկ չեմ:

ԿԻՆ - Դուք հոգով եք ավտոմե-
խանիկ՝ շարժիչ, յուղ, ձմեռա-
յին անվադողեր... Անգամ ձեր
իսկական՝ ոչ-պայմանական
անունը գիտեմ:

ՏՂԱՄԱՐԳ - Գիտե՞ք: Որտեղից:

ԿԻՆ - Գիտեմ: Ձեր անունը Ձանձ-
րոյթ է:

ՏՂԱՄԱՐԳ - Հըմ... Բայց ես...

ԿԻՆ - Ինչ էլ նեղվածք է այստեղ...
Անգամ պարելու տեղ չկա...

ՏՂԱՄԱՐԳ - (*փորձելով սեղմվել
վերելակի անկյունում*): Ահա-
վասիկ...

Կինը ցած է դնում պայուսակը, փոր-
ձում է պարային պտույտ կատա-
րել, ձեռքը քսվում է Տղամարդուն:

Այդ պահին մեխանիզմի կոնյուն է
լավում, և վերելակը կանգ է առնում:
Միաժամանակ լույսերը թուլա-
նում են՝ գրեթե մարելու աստիճան:
Միայն թույլ «հերթապահ» լույսի
շող է ընկնում վանդակի մեջ և աս-
տիճանաբար մարում: Այսուհետև
ամբողջ շեշտադրությունը ձայնա-
յին կատարման վրա է՝ բացարձակ
մթություն մեջ:

ԴՐՎԱԳ 2

ԿԻՆ - (*վախեցած*): Ի՞նչ եղավ:

ՏՂԱՄԱՐԳ - Կարծես լույսերը
գնացին:

ԿԻՆ - Ո՞ր գնացին:

ՏՂԱՄԱՐԳԻԿ - Չգիտեմ... Լսել
եմ, որ ամենաներքևում, առա-
ջին հարկից վար, մի հարկ էլ
կա, անունը՝ նկուղ: Գուցե այն-
տեղ...

ԿԻՆ - Նկո՞ղ:

ՏՂԱՄԱՐԳ - Նկուղ...

ԿԻՆ - Ջրմուղի հետ կապ ունի:

ՏՂԱՄԱՐԳ - Չեմ կարծում, թեև
վստահ չեմ:

ԿԻՆ - Իսկ ի՞նչ կա նկուղում...

ՏՂԱՄԱՐԳ - Ինքս էլ լավ չգիտեմ:
Կուզե՞ս քեզ տանեմ այնտեղ:
Ասում են՝ այնտեղ հրաշալի
հասարակություն է հավաք-
վում:

ԿԻՆ - Չէ, սպասիր... Թույլ կտան
բռնել քո ձեռքը: Ես վախենում
եմ...

ՏՂԱՄԱՐԴ - Այո, իհարկե: Հիմա կպարզեմ ձեռքս... Ահա... Սա քո ձեռքն է:

ԿԻՆ - Դե, եթե քոնը չէ, ուրեմն իմն է: Կարծեմ վերելակում միայն մենք ենք, չէ: *(Օրծաղկուր ձայնով:)* Անո, ո՞վ կա այստեղ:

ՏՂԱՄԱՐԴ - Ես եմ:

ԿԻՆ - Դու ո՞վ եք:

ՏՂԱՄԱՐԴ - Պարոն Չանձրույթը:

ԿԻՆ - Հսն, հիշեցի... Պարոն Չանձրույթը, որի ուշքն ու միտքը ձմեռային անվաղողերն են:

ՏՂԱՄԱՐԴ - *(ուրախացած):* Ինչ լավ է, որ մտաբերեցիր ինձ:

ԿԻՆ - Բայց դա քեզ իրավունք չի տալիս ձեռքս այդպես բռնել:

ՏՂԱՄԱՐԴ - Ներիր, խնդրում եմ...

ԿԻՆ - Ո՞ւր կորար: Բաց մի՛ թող ձեռքս: Ես վախենում եմ: Ինչ տաք է քո ձեռքը:

ՏՂԱՄԱՐԴ - Իսկ քոնը՝ փափուկ...

ԿԻՆ - Եվ ուժեղ...

ՏՂԱՄԱՐԴ - Եվ նուրբ...

ԿԻՆ - Ինչ ես կարծում՝ լույսերը շոտ կգան:

ՏՂԱՄԱՐԴ - Չգիտեմ: Սովորաբար դա տևում է ամիսներ և անգամ տարիներ...

ԿԻՆ - Տարիներ...

ՏՂԱՄԱՐԴ - Շտապում ես:

ԿԻՆ - Մի քիչ... Հասկանում ես՝ լվացքս, արդուկս, ճաշս... Գրողը տանի... Ես չեմ ուզում շտապել... Գրողի ծոցը թող գնան լվացքն ու արդուկը...

ՏՂԱՄԱՐԴ - Հասկանում եմ:

ԿԻՆ - Եվ անգամ ճաշը...

ՏՂԱՄԱՐԴ - Հասկանում եմ քեզ:

ԿԻՆ - Միտում եմ: Մյուս ձեռքս էլ բռնիր, խնդրում եմ... *(Կարճ դադար:)* Ա՛խ, ինչ տաք և ուժեղ են քո մատները...

ՏՂԱՄԱՐԴ - Իսկ քոնը՝ նուրբ ու գեղանի... Եվ բուրում են միլիոնավոր վարդերի պես:

ԿԻՆ - *(երազկուր):* Վարդեր... Ասում ես՝ ինչ կա նկուղում:

ՏՂԱՄԱՐԴ - Չգիտեմ... Պատմում են, որ այնտեղ մութ է...

ԿԻՆ - Ովքեր են պատմում: Ջրմուղի մարդիկ:

ՏՂԱՄԱՐԴ - Երևի: Ասում են՝ այնտեղ շատ մութ է:

ԿԻՆ - Այս վերելակի պես:

ՏՂԱՄԱՐԴ - Ավելի մութ... Այնտեղ բոլորը մշտնջենական տառապանքի մեջ են...

ԿԻՆ - Չէ, ես չեմ ուզում տառապել: Հերիք է: Իմ ձանձրույթը հենց իմ տառապանքն է: Գիտե՞ս՝ միակ ազատությունս այս երկար ու ձիգ տարիներին իմ երագներն էին: Այն մի քանի ժամը, երբ կարելի էր մոռանալ լվացքի ու աման-չամանի մասին ու երագել... Իսկ դու գիտե՞ս՝ ինչի մասին եմ միշտ երագել... Լո՛իր, երբեք չես կռահի: Քեզ կասեմ: Պատկերացնում ես՝ քնած ձևանալ ու երագել այն հույսով, որ ոչ ոք քեզ այդ

պահին չի ասի՝ սոված եմ, ծարավ եմ, ո՞ր է սպիտակ վերնաշապիկս, ճաշը պատրաստ է, չիշիկ ունեմ, երեկոյան չմոռանաս՝ հրավիրված ենք, առավոտյան չմոռանաս՝ ծնողական ժողով է, չմոռանաս, որ կին ես, իմ կինը... Իսկ ես չեմ ուզում որևէ մեկի կինը լինել, հասկանո՞ւմ ես: Ես ուզում եմ պարզապես կին լինել ու ճախրել, բարձրանալ ու խառնվել աստղերին: Ու խառնել աստղերը... Ու սիրո բառեր լսել... Ու սիրված լինել... Հասկանո՞ւմ ես... Ասա՛, իմ սիրելի ու ձանձրալի ավտոմեխանիկ, ասա՛...

ՏՂԱՄԱՐԳ - Դու հրեշտակի պես ես՝ թեթև, եթերային... Եվ վարդերի բույրով օծված...

ԿԻՆ - *(անհանգստացած)*: Ինչ ես անում...

ՏՂԱՄԱՐԳ - Համբուրում եմ քո մատները...

ԿԻՆ - Բայց դու դողում ես...

ՏՂԱՄԱՐԳ - Այո, դողում եմ: Եվ իմ սիրտն է դողում...

ԿԻՆ - Գրկիր ինձ... ուզում եմ ինձ կին զգալ... հոգնել եմ... ճախրել եմ ուզում... Պտտիր ինձ ձեռքերիդ վրա... Ինչ ընդարձակ է այստեղ... Ինչո՞ւ լույսերը շուտ չէին գնում... Այո, պտտիր ինձ... Ես ուզում եմ թռչուն դառնալ և ճախրել... Ես ուզում եմ հասնել վերջին հարկին, ուր աստղերն

ու լուսինն են... Ես ուզում եմ, որ քամին տանի ինձ... Ուզում եմ փաթաթվել ծառերի ճյուղերին ու շոյել պարտեզի վարդերը... Ջով տանել սիրո կարոտից տոչորվող սրտերին ու սիրո չասված բառերից չորացած շուրթերին...

ՏՂԱՄԱՐԳ - Հիմա դու կարող ես անել դա...

ԿԻՆ - Ինչ լավն է վերելակը, մեր վերելակը... Այստեղ չկան ցավեր, ու չկա ճնշումը չափող սարք: Չկան բժիշկներ ու ավտոտեսուչներ, չկան ջրմուղի մարդիկ ու չկան հարևաններ... Չկա մեկը, որի հետ ստիպված ես ապրել, քնել ու արթնանալ, հյուր գնալ ու սպանել կիրակի օրերդ... Այդ ամենաձանձրալի օրը, որն սկսվում է ու երբեք չի ավարտվում... Եվ միայն քունը, երբ, ամուսնական պարտականություններդ կատարելուց հետո, վերջապես կարող ես շրջվել մյուս կողքիդ, փակել աչքերդ ու երագել... *(Կարճ դադար)*: Դու հասկանո՞ւմ ես... այստե՞ղ ես:

ՏՂԱՄԱՐԳ - Այստեղ եմ:

ԿԻՆ - Ինձ լսո՞ւմ ես:

ՏՂԱՄԱՐԳ - Լսում եմ:

ԿԻՆ - Հաստատ ավտոմեխանիկ չես:

ՏՂԱՄԱՐԳ - Ոչ, ես...

ԿԻՆ - *(ընդհատելով)*: Չէ, չհասկա-

ցար ինձ: Դու հոգուդ խորքում
ավտոմեխանիկ չես, չէ՛: Ես չեմ
զգվում քո մարմնի հոտից: Ես
չեմ զգվում քո ձեռքերի հոտից,
երբ մեքենայիդ յուղն ես փո-
խում կամ էլ շարժիչը մաքրում:
Ես սիրում եմ մարմնիդ ու ձեռ-
քերիդ հոտը: Բայց զգվում եմ,
երբ տղամարդու սրտից է վառ-
ված յուղի ու մեքենայի շար-
ժիչի հոտ գալիս: Ինչ հզոր են
քո ձեռքերը... Ես սիրում եմ քո
ձեռքերը, իմ մի քիչ ձանձրալի
պարոն... Սիրում եմ քո ձեռքե-
րը... Քո հզոր ձեռքերը...

ՏՂԱՄԱՐԴ - Ես սիրում եմ քո մաշ-
կը...

ԿԻՆ - Ինձ մի հետաքրքիր բան
պատմիր, խնդրում եմ:

ՏՂԱՄԱՐԴ - Հետաքրքիր... Հե-
տաքրքիր... Հա, հիշեցի... Ներ-
քին այրման շարժիչը նախա-
տեսված է քիմիական էներ-
գիան մեխանիկականի վերա-
փոխելու համար: Շարժիչները
լինում են քառատակտ ու...

ԿԻՆ - Օ՛րհ, միայն թե ոչ դա...
Խնդրում եմ...

ՏՂԱՄԱՐԴ - Լավ... Հիշեցի: Աշ-
խատանքը որոշվում է որպես
ուժի և անցած ճանապարհի
արտադրյալ...

ԿԻՆ - (մի քիչ զգված): Չէ՛...

ՏՂԱՄԱՐԴ - Մի անգամ վայրի
ձիեր տեսա...

ԿԻՆ - Ավելի լավ է, բայց ինչ շատ
ես խոսում...

ՏՂԱՄԱՐԴ - Ես կլռեմ...

ԿԻՆ - Ո՛հ, մի՛ լռիր: Ուզում եմ լսել
քո ձայնը: Ասա, որ գեղեցիկ եմ:

ՏՂԱՄԱՐԴ - Չքնաղ ես:

ԿԻՆ - Ասա, որ թեթև եմ:

ՏՂԱՄԱՐԴ - Եթերային ես:

ԿԻՆ - Ասա, որ քեզ հարբեցնում է
ին բույրը...

ՏՂԱՄԱՐԴ - Եվ անգամ գինի
պետք չէ քեզնով հարբելու հա-
մար:

ԿԻՆ - Սկսում ես տղամարդ դառ-
նալ...

ՏՂԱՄԱՐԴ - Տղամարդ...

ԿԻՆ - Բայց քեզ պետք էր մի կնոջ
հետ մենակ մնալ վերելակի մեջ
տղամարդ դառնալու համար...

ՏՂԱՄԱՐԴ - Երևի... Թերևս...
Հաստատ...

ԿԻՆ - Հաստատ: Եվ մի՞թե քո
մտքով երբեք չի անցել հասնել
վերջին հարկին, որ «տանիք»
են անվանում, դուրս գալ վե-
րելակից, նայել աստղերին ու
վարակվել նրանցով: Ու լուս-
նից մի փոքր արծաթափոշի
խնդրել ու դրանով օձել երեսդ
ու մարմինդ... Որ վարակվես
աստղերի քնքշությամբ ու լուս-
նի խորհրդավորությամբ...

ՏՂԱՄԱՐԴ - Ինձ քեզ պես կին էր
պետք, որ ինձ տղամարդ զգայի:

ԿԻՆ - Կին... Իսկ դու գիտե՞ս, ինչ
է կինը:

ՏՂԱՄԱՐԴ - Կինը...

ԿԻՆ - Այո, կինը...

ՏՂԱՄԱՐԳ - Կինը...

ԿԻՆ - Ես եմ... Գիտեմ, ինչ է պետք, որ ինձ կին զգամ: Այնքան պարզ ու միաժամանակ, այնքան բարդ մի բան՝ տղամարդ: Տղամարդ, որն առանց վախենալու ինձ վերելակով կհասցնի ամենավերին հարկը, ուր աստղերն ու լուսինն են՝ արծաթե փռշով:

ՏՂԱՄԱՐԳ - Դու այնքան կին ես...
Դու արժանի ես դրան...

ԿԻՆ - *(քիչ հուսահատ, սրտնեղած)*: Եթե արժանի եմ, ինչո՞ւ ես անընդհատ փորձում ինձ նկող տանել, ուր մութ է և չի հասնում աստղերի լույսը: Մի՞թե դրան եմ արժանի: Մի՞թե ինձ նվաստացնելով ես ինքնահաստատվում:

ՏՂԱՄԱՐԳ - Բայց ես... Ասում են՝ նկողում շատ հետաքրքիր հասարակություն է հավաքվում:

ԿԻՆ - Օ՛, պարոն Չանձրույթ... Դու չես կարող միայնակ բավարարել իմ որոնումները: Քեզ այլ ձանձրալի պարոնների ընկերակցությունն է անհրաժեշտ:

ՏՂԱՄԱՐԳ - Պարզապես ցանկացա ասել, որ...

ԿԻՆ - Լռի՛ր, խնդրում եմ: Գրկիր ինձ, ուզում եմ զգալ հզոր ձեռքերդ: Ուզում եմ զգալ սերդ: Ես հոգնել եմ վերմակի տակ բռնորից գաղտնի երազելուց: Ես ուզում եմ հարթման երազել,

հասկանում ես: Ես ուզում եմ կին լինել...

ՏՂԱՄԱՐԳ - Հասկանում եմ...

ԿԻՆ - Սո՛ւս, լսո՛ւմ ես: *(Ավելի ցածր ձայնով)*: Մեկը կարծես քայլում է աստիճաններով: Լսիր...

Կարճ դադար: Քայլերի ձայն է լսվում:

ՏՂԱՄԱՐԳ - Ճիշտ ես: Պետք է օգնություն կանչել...

ԿԻՆ - Չհամարձակվե՛ս: Ինչո՞ւ ես ուզում օգնություն կանչել:

ՏՂԱՄԱՐԳ - Դե՛... Որ...

ԿԻՆ - Այդքան անօգնակամ ես:

ՏՂԱՄԱՐԳ - Ես... Երևի... Թերևս...

ԿԻՆ - Ինչո՞ւ ես ուզում, որ ավարտվի այս հեքիաթը: Դու վախենում ես:

ՏՂԱՄԱՐԳ - Ինչի՞ց: Մթությունից:

ԿԻՆ - Ինձանից: Դու վախենում ես ինձանից: Դու՛ հզոր, բայց մի քիչ ձանձրալի տղամարդդ, վախենում ես մի թույլ և անօգնական կնոջից:

ՏՂԱՄԱՐԳ - Ոչ... Ես չգիտեմ... Պարզապես...

ԿԻՆ - Ուրեմն լռի՛ր, խնդրում եմ:

ՏՂԱՄԱՐԳ - Դու ճիշտ ես:

ԿԻՆ - Եթե ճիշտ եմ, ուրեմն՝ լուռ գրկիր ինձ: Չեմ ուզում, որ գա վերելակի մասնագետն ու փրկի մեզ: Դա մահ է: Հասկանում ես, դա մահ է: Այդ ջրմուղի, գազի ու վերելակի մարդիկ մահվան պես են գալիս ու մահ

են բերում: Եվ հենց այն պահե-
րին, երբ ցանկանում ես մենակ
մնալ ու երազել... Ես չեմ ուզում,
որ մեկը, որի սրտից մեքենայի
ու վառված յուղի հոտ է գալիս,
անգամ փորձի փրկել ինձ: Դա
նույնն է, թե վարդը փորձես
քահով շոյել կամ էլ ցանցով
փորձես քամի որսալ:

ՏՂԱՄԱՐԴ - Իմ քնքուշ վարդ...

ԿԻՆ - Իսկ դու գիտե՞ս, ես ինչ եմ
սիրում:

ՏՂԱՄԱՐԴ - Ի՞նչ ես սիրում:

ԿԻՆ - *(ծիծաղկոյալ)*: Մտքովդ չի
անցնի... Ես սիրում եմ համեր-
գից ուշանալ: Այդ պահին բոլոր
ընտանուհիներն են խմբավարին
ու երաժշտությունը և շրջվում
են իմ կողմը: Այնքան եմ սիրում
համերգների գնալ: Հագնում
եմ լավագույն զգեստ... Ու
բոլորը շրջվում ու ինձ են նա-
յում... Տղամարդիկ ապշում են
ու սիրահարվում, կանայք՝ նա-
խանձից ու խանդից պայթում:
Հսկա դռնով մտնում եմ ներս՝
իմ ամենագեղեցիկ շորով... Ու
հսկա դահլիճ ներխուժած քա-
մին խաղում է շորիկիս ու մա-
զերիս հետ: Թե՛ կարծում ես՝
ուշանում եմ համերգից, քանի
որ չեմ հասցնում ամանները
լվանալ ու լվացքը անել: Ո՛հ, ո՛հ,
հազար անգամ ոչ: Ես կարող
եմ այնքան գործնական լինել,
որ բոլոր տղամարդիկդ միա-

սին միայն իմ արածի կեսն էլ
չեք կարողանա անել:

ՏՂԱՄԱՐԴ - Վստահ եմ:

ԿԻՆ - Բայց ես չեմ ուզում: Հաս-
կանում ես: Չեմ ուզում... Ես
ուզում եմ կին մնալ և ուզում
եմ մի փոքր ուշանալ համեր-
գից... Նաև հատուկ հեռախոս
միացրած եմ թողնում: Ինքս
ինձ զանգ եմ ուղարկում: Եվ այդ
պահին բոլորը կրկին շրջվում
են իմ կողմը: Տղամարդիկ, ար-
տաքուստ հանդիմանությամբ,
ուրախանում են, քանի որ օրի-
նական պահանջ ունեն կրկին
անգամ ինձնով հիանալու: Դե,
իսկ կանայք էլ... Դե կանայք
են, էլի... Գիտե՞ս՝ ինչ հրաշք է,
երբ քամին խաղում է մազերիս
ու շորիկիս հետ...

ՏՂԱՄԱՐԴ - Պատկերացրի: Երա-
նի ես քամի լինեի ու խաղայի
մազերիդ հետ...

ԿԻՆ - Իսկ դու եղի՞ր: Հզոր ու տաք
քամի եղիր... Տար ինձ քո հոր-
ձանուտը, բարձրացրու վեր՝
դեպի աստղերն ու պտտիր ինձ
այս հոգնած քաղաքի տանիք-
ներից անդին՝ աստղերի մեջ...
Պտտի՛ր ինձ, հարբեցրո՛ւ ինձ...
Ես այնքան եմ ուզում կին լինել՝
սիրող ու սիրված... Ես այնքան
եմ զգվել մեքենայի յուղի հո-
տով սրտերից ու հոգիներից...
Ես սիրում եմ քո ձեռքերը, քո
հզոր ու սիրող ձեռքերը... Ասա՛

ինձ աստղերի ու քամու կախարդական բառերը: Ես ուզում եմ լսել դրանք:

ՏՂԱՄԱՐԴ - Ես քեզ սիրում եմ, իմ Կին...

ԿԻՆ - Ես քեզ սիրում եմ, իմ Տղամարդ... Տարի ինձ տանիք, տարի ինձ դեպի աստղերը...

ՏՂԱՄԱՐԴ - Դեպի հեքիաթ և դեպի աստղերը...

ԿԻՆ - *(մըսահոգ):* Բայց գուցե պետք չէ, որ մարդու բոլոր երազանքներն իրականանան: Ինչ-որ բան էլ պիտի անհասանելի մնա, որ մարդը ճախրելու տեղ ունենա, սիրելու տեղ, երազանքներ ու հույսեր: Երազանքներ չունեցող մարդը սպառված է... Ես ուզում եմ երազել վերջին հարկի ու տանիքի մասին, ուր աստղերն ինձ են սպասում...

Կարճատև լռություն և դադար:
Վառվում են նախկին լույսերն ու լսվում է վերելակի շարժիչի ձայնը: Կինը, հանկարծակիի եկած, դուրս է պրծնում Տղամարդու գրկից:

ԴՐՎԱԳ 3

ԿԻՆ - Ինչ եղավ:

ՏՂԱՄԱՐԴ - Լույսերը եկան:

ԿԻՆ - *(հարդարելով մազերն ու շորը):* Ինչ ահավոր է... Աչքերս մղկտացին այս լույսից...

ՏՂԱՄԱՐԴ - *(իրեն կարգի բերելով):* Իմն էլ: Երկար ճանապարհ

հի համար խորհուրդ է տրվում արևի ակնոց ունենալ: Քո պայուսակում ավելորդ ակնոց չկան:

ԿԻՆ - *(զարմացած հայացք ներկելով Տղամարդու կողմը):* Ներեցեք, իսկ դուք ո՞վ եք: Եվ ինչո՞ւ եք ձեզ թույլ տալիս ինձ հետ «Դու»-ով խոսել ու ակնոց պահանջել...

ՏՂԱՄԱՐԴ - *(մեղավոր ձայնով):* Պարզապես հարցրի... *(Ուրախացած ու զգասար:)* Պատիվ ունեմ ներկայանալու: Իմ անունը...

ԿԻՆ - Սպասե՛ք... Մի բռնե՛ք... Պե՛տք չէ... Ես անծանոթ տղամարդկանց հետ չեմ ծանոթանում: Առանց այդ էլ ճանապարհը երկար է...

ՏՂԱՄԱՐԴ - Ուրեմն եկե՛ք, այսպես ասած, նախնական ծանոթանանք, քանի որ ճանապարհը երկար է:

ԿԻՆ - Երկմը: Բայց ես այնքան գործ ունեմ անելու...

ՏՂԱՄԱՐԴ - Ես էլ... Ի դեպ, եթե իմ անունը ձեզ չի հետաքրքրում, կարող եք ինձ պարզապես Տղամարդ կոչել:

ԿԻՆ - Տղամարդ... *(Հեզմանքով):* Ախր, դուք ինչ Տղամարդ:

ՏՂԱՄԱՐԴ - Պայմանական անուն է:

ԿԻՆ - Լավ, պայմանական Տղամարդ...

ՏՂԱՄԱՐԴ - Թույլ կտամք իմանալ ձեր նախնական անունը:

ԿԻՆ - Կին... Ձեզ համար՝ պարզապես Կին:

ՏՂԱՄԱՐԴ - Անչափ ուրախ եմ:

ԿԻՆ - Մի հարցնող լինի՝ ինչո՞ւ եք այդքան ուրախ:

ՏՂԱՄԱՐԴ - Ամեն օր ձեզ պես հմայիչ կնոջ չես հանդիպի վերելակում: Չեք հավատա, բայց նախորդ կյանքում վերելակում մի... Մի կնոջ հետ էի: Ուֆֆ... Կյանքս կերավ... Հակառակի պես հեռախոսի լիցքն էլ վերջացել էր: Ոչ խաղալ էր լինում, ոչ էլ անգամ եղանակի տեսությունը նայել... Ստիպված այդքան տարի նրան եմ լսել...

ԿԻՆ - Ես հասկացա:

ՏՂԱՄԱՐԴ - Ի՞նչ հասկացաք:

ԿԻՆ - (*հեզոճաբար ժպտում*): Ես ամեն ինչ հասկացա...

ՏՂԱՄԱՐԴ - Դե ասե՛ք, անհամբերությունից մեռնում եմ:

ԿԻՆ - (*ինքնագոհ ժպտում*): Ամեն ինչ հասկացա...

ՏՂԱՄԱՐԴ - Խնդրում եմ՝ ասե՛ք, թե ինչ հասկացաք:

ԿԻՆ - Ձեր նմաններն են, որ ուշացումով ներս են խուժում համերգարահ՝ դուրը ճոռացնելով: Մի կերպ գտնում են իրենց տեղն ու, հերթով բուրի ոտքերը տրորելով, վերջապես տեղավորվում են՝ ինքնագոհ ժպտով...

ՏՂԱՄԱՐԴ - Հըմ...

ԿԻՆ - Անգամ վերելակից քիչ էր

մնում ուշանայիք: Երանի՛ թե ուշանայիք...

ՏՂԱՄԱՐԴ - Բայց հասցրեցի:

ԿԻՆ - Մի թոուցիկ հայացքն էլ հերիք էր, որ ճանաչեմ ձեզ...

ՏՂԱՄԱՐԴ - Ախր ես...

ԿԻՆ - Մի՛ փորձեք արդարանալ: Այդպես խցկվում եք ամեն տեղ, անգամ՝ համերգարահ ու վերելակ: (*Պաթոնով*;) Եվ այն պահին, երբ թվում է, թե վերջապես կարելի է վայելել երաժշտությունը... (*Հիասթափությամբ*;) Ես գիտեմ, թե ինչ է լինում:

ՏՂԱՄԱՐԴ - Ի՞նչ է լինում:

ԿԻՆ - Ես գիտեմ...

ՏՂԱՄԱՐԴ - Դե ասե՛ք, խնդրում եմ: Ի՞նչ է լինում:

ԿԻՆ - Հնչում է ձեր հեռախոսի զանգը... Ուֆֆ, հոգնել եմ այս ամենից...

ՏՂԱՄԱՐԴ - Ես էլ...

Տղամարդն խոնարհում է հայացքը: Կարճատև դադար:

ԿԻՆ - Գիտե՛ք, ինչն է հետաքրքիր:

ՏՂԱՄԱՐԴ - Ի՞նչը:

ԿԻՆ - Իրար մոտիկից ճանաչելով՝ մենք անցանք «Դուր»-ի... Թեև դա գուցե բնական է...

ՏՂԱՄԱՐԴ - Բնականն է:

ԿԻՆ - Թերևս...

Կարճատև դադար:

ՏՂԱՄԱՐԴ - Իսկ դուք ի՞նչ եք անում:

ԿԻՆ - Չեք հավատա, եթե անգամ ասեմ:

ՏՂԱՄԱՐԳ - Ի՛նչդուրեմ եմ...

ԿԻՆ - Բարձրանում եմ վերելակով:

ՏՂԱՄԱՐԳ - (*ժպտում է*): Դա նկատեցի: Իսկ ընդհանրապես՝ ի՛նչ եք անում: Կյանքում:

ԿԻՆ - Նույնը:

ՏՂԱՄԱՐԳ - Այսինքն:

ԿԻՆ - Բարձրանում եմ վերելակով:

ՏՂԱՄԱՐԳ - Դա շո՛ւտ սկսեց:

ԿԻՆ - Երբ ծավեցի, մի քիչ հասակ առա, սկսեցի խոսել ու ինձ մանկապարտեզ տարան: Հենց այդ օրվանից...

ՏՂԱՄԱՐԳ - Այդքանը:

ԿԻՆ - Քիչ է: Թե՛ Ժեզ թվում է՝ դուր ուրիշ բան եք անում:

ՏՂԱՄԱՐԳ - Հըմ... Չէի մտածել: Ճիշտ եք՝ ես էլ նույնն եմ անում:

ԿԻՆ - Այ տեսնո՞ւմ եք...

ՏՂԱՄԱՐԳ - Տխուր է...

ԿԻՆ - Տխուր է, բայց սա է կյանքը...

C'est la vie, mon chere amie...

ՏՂԱՄԱՐԳ - Իսկ է՛լ ի՛նչ եք անում...

Դե, վերելակով բարձրանալուց բացի:

ԿԻՆ - Ես...

ՏՂԱՄԱՐԳ - Դուք:

ԿԻՆ - Չանձրանում եմ:

ՏՂԱՄԱՐԳ - Դարձյալ չհասկացաք: Նկատի ունեմ՝ կյանքում... Ընդհանրապես...

ԿԻՆ - Ասացի՛ ձանձրանում եմ:

ՏՂԱՄԱՐԳ - Ինչպե՛ս եմ ձեզ հասկանում...

ԿԻՆ - Մի՞թե տղամարդը կարող է հասկանալ կնոջը...

ՏՂԱՄԱՐԳ - (*վայրահ*): Կարող է...

ԿԻՆ - (*ասես չլսելով Տղամարդուն, կհսաձայն*): ...և ցրել նրա ձանձրույթը...

ՏՂԱՄԱՐԳ - (*ավելի անվայրահ*): Կարող է...

ԿԻՆ - (*թեթևակի շրջվելով դեպի Տղամարդը*): Ասացիք՝ ի՛նչ է ձեր անունը:

ՏՂԱՄԱՐԳ - Տղամարդ:

ԿԻՆ - Ի՛նչ ձանձրալի է:

ՏՂԱՄԱՐԳ - Բայց ես...

ԿԻՆ - Ի՛նչդուրեմ եմ՝ լռեք: Թողեք լսեմ վերելակի ձայնը... (*Ականջ դնելով*.) Հետաքրքիր է, ո՞ր հարկին հասանք:

ՏՂԱՄԱՐԳ - Յոթերորդ կամ ութերորդ:

ԿԻՆ - Թեև դա ի՛նչ էական է... Որքան եք սիրում ճշգրտություն ամեն ինչում...

ՏՂԱՄԱՐԳ - (*մեղավոր*): Դուք հարցրեցիք...

ԿԻՆ - Կարող էինք և ավելի ոռմանտիկ պատասխան գտնել... Հենց դրանից եմ ձանձրանում... Ի դեպ, իսկ ի՛նչ կա վերևում...

ՏՂԱՄԱՐԳ - Ամենավերևում:

ԿԻՆ - Ըհր:

ՏՂԱՄԱՐԳ - Ասում են՝ երկինքն է...

ԿԻՆ - Ի՛նչ հետաքրքիր է... Ա՛յն, ինչպես կուզեի գոնե մի անգամ այնտեղ հայտնվել... Ասում են,

թեև ինքս չեմ հավատում, այնտեղ աստղեր կան ու մի լուսին... Թեթև քամի է, որը խաղում է մազերիդ մեջ ու ալիքում շորիկդ... *(Շարժում է շորիկը, ձեռքով ալիքում մազերը:)* Այնտեղ եղև էք:

ՏՂԱՄԱՐԴ - Ավա՛ղ...

ԿԻՆ - Ավաղ այո՛, թե՛ ավաղ ոչ:

ՏՂԱՄԱՐԴ - Չգիտեմ: Կուզեի լինել, բայց ասում են՝ այնտեղից վերադառնալ հնարավոր չէ:

ԿԻՆ - Իսկ ես չեի էլ վերադառնա...

ՏՂԱՄԱՐԴ - Ինչպե՛ս թե չեիք վերադառնա... Բա ամուսինը, բա ճանշը, արդուկը, լվացքը...

ԿԻՆ - Ո՛ւց եմ ես ձանձրացել բոլորիցդ...

ՏՂԱՄԱՐԴ - Ինձանի՛ց էլ:

ԿԻՆ - Այն պահից սկսած, երբ ներխուժեցիք վերելակ: Անգամ դրանից առաջ: Դուք այնքան կանխատեսելի եք... Դուք միշտ այդպես ներխուժում եք ուրիշի կյանք...

ՏՂԱՄԱՐԴ - *(հառաչում է):* Գուցե... Այսինքն՝ թերևս...

ԿԻՆ - Ես գիտեի... Ես զգում էի... Հրաշքներ չեն լինում, չէ՛:

ՏՂԱՄԱՐԴ - Արդեն չգիտեմ... Ես ոչինչ չգիտեմ:

ԿԻՆ - Իհարկե գիտեք: Գիտեք վերելակի արագությունն ու ձեր մեքենայի կառուցվածքը, չէ՛:

Ձմեռային անվաղողեր, շարժիչի յուղ, անվահեծեր ու էլի ինչ-որ...

ՏՂԱՄԱՐԴ - Այո, ի՛նչ ճիշտ եք, անվաղողերը փոխելու ժամանակն է...

ԿԻՆ - Իսկ ձեզ մոտ գինի չկա՛:

ՏՂԱՄԱՐԴ - Գինի... Գինի չկա... Ավտոմեքենայի յուղ կա՛ փոքրիկ սրվակով... *(Օղագրպանից փոքրիկ սրվակ է հանում:)*

ԿԻՆ - *(Տղամարդուն չնայելով):* Պարզ է...

ՏՂԱՄԱՐԴ - *(սրվակը դնում է գրպանը, համակերպված):* Ես ձանձրալի եմ... Խոստովանում եմ...

ԿԻՆ - Ինքնախոստովանությունը դեռևս գործի կեսն է:

ՏՂԱՄԱՐԴ - Այո:

ԿԻՆ - Ե՛վ:

ՏՂԱՄԱՐԴ - Ի՛նչը «Ե՛վ»:

ԿԻՆ - Հետո՛:

ՏՂԱՄԱՐԴ - Ի՛նչը «Հետո»...

ԿԻՆ - Հետևություններ, պարոն Ձանձրալի, հետևություններ...

ՏՂԱՄԱՐԴ - *(մոլորված):* Հըմ...

ԿԻՆ - Փաստորեն ես ճիշտ էի:

ՏՂԱՄԱՐԴ - Անվաղողերի հարցում: Միանշանակ ճիշտ եք: Փոխելու ժամանակն է:

ԿԻՆ - Սպասե՛ք: Լռե՛ք, խնդրում եմ:

Լռում են մի քանի վայրկյան՝ ականջ դնելով: Վերելակային ձայներ են լսվում:

ԿԻՆ - Ի՞նչ ձայն էր:
ՏՂԱՄԱՐԳ - Կարծես ինչ-որ հարկի հասանք:
ԿԻՆ - Երկնքի՞ն:
ՏՂԱՄԱՐԳ - Չեմ կարծում...
ԿԻՆ - Ափսոս...
ՏՂԱՄԱՐԳ - Ափսոս...
ԿԻՆ - Շանտ ափսոս...
ՏՂԱՄԱՐԳ - Ուզում եք, որ հասնենք երկնքի՞ն:
ԿԻՆ - Շանտ... Շանտ եմ ուզում... Շանտ կուզեի...
ՏՂԱՄԱՐԳ - Բայց ասում են՝ այնտեղից վերադարձ չկա:
ԿԻՆ - Իսկ ես չեմ էլ ուզում վերադառնալ...
ՏՂԱՄԱՐԳ - Ինչպե՞ս: Բա ամուսինը, ճաշը, լվացքը...
ԿԻՆ - *(սրտնեղած, ծաղրելով)*: Ճանշը, լվացքը... Լո՛ւնք, խնդրում եմ... Դուք երբեք չեք հասկանա ինձ:
ՏՂԱՄԱՐԳ - Ինչո՞ւ չեմ հասկանա:
ԿԻՆ - Որովհետև գիտեմ, դուք ով եք:
ՏՂԱՄԱՐԳ - Գիտե՞ք:
ԿԻՆ - *(ընդհատելով)*: Գիտեմ: Դուք ավտոմեխանիկ եք:
ՏՂԱՄԱՐԳ - *(ընդվզելով)*: Ես ավտոմեխանիկ չեմ:
ԿԻՆ - Դուք հոգով եք ավտոմեխանիկ՝ շարժիչ, յուղ, ձմեռային անվադողեր... Անգամ ձեր անունը գիտեմ:

ՏՂԱՄԱՐԳ - Գիտե՞ք: Որտեղի՞ց:
ԿԻՆ - Գիտեմ: Ձեր անունը Ձանձրույթ է:
ՏՂԱՄԱՐԳ - Հըն... Բայց ես...
ԿԻՆ - Ի՞նչ էլ նեղվածք է այստեղ... Անգամ պարելու տեղ չկա...
ՏՂԱՄԱՐԳ - *(փորձելով սեղմվել վերելակի անկյունում)*: Ահավասիկ...
ԿԻՆ - Անիմաստ է... Ես կպարեմ, երբ հասնեմ վերջին հարկին: Վստամի եք, որ դա արդեն երկինքն է:
ՏՂԱՄԱՐԳ - Մի քանի քայլ էլ աստիճաններով, ու կհասնեք երկնքին:
ԿԻՆ - *(ինքն իրեն)*: Կամ էլ կիջնեմ ամենավարը... Ասում եք՝ ի՞նչ է կոչվում:
ՏՂԱՄԱՐԳ - Նկուղ:
ԿԻՆ - Համարյա Ջրմուղ... Ի՞նչ կա այնտեղ:
ՏՂԱՄԱՐԳ - Հրաշալի հասարակություն...
ԿԻՆ - Իսկ այնտեղ մնո՞ւթ է:
ՏՂԱՄԱՐԳ - Կարելի է լապտեր վառել:
ԿԻՆ - *(տխուր քնիծաղով)*: Եթե լապտեր ունենայի՝ ինչո՞ւ պիտի վերելակից օգտվեի: Ի՞նչ միամիտ եք...
ՏՂԱՄԱՐԳ - Լավ իմաստով ասացի...
ԿԻՆ - *(հեզասանքով)*: Լսվ՛լ իմաստով...

ՏՂԱՄԱՐԳ - Ի դեպ, կարծես հասնում ենք:

ԿԻՆ - Իրո՞ք:

ՏՂԱՄԱՐԳ - Դատելով ձայներից և արագության նվազումից:

ԿԻՆ - Լավ է, որ հասնում ենք: (Հանասչելով:) Ամուսինս, լվացքս, ճաշը, արդուկը...

ՏՂԱՄԱՐԳ - (հոգասաշար ձայնով): Ես էլ մեքենայիս յուղը պիտի փոխեմ...

ԿԻՆ - Մեքենայի յուղը...

ՏՂԱՄԱՐԳ - (գրեթե հասնասչելով): Մեքենայի յուղը...

ԿԻՆ - Իսկ որտեղ եք փոխելու: Եթե գաղտնիք չէ, իհարկե...

ՏՂԱՄԱՐԳ - Գաղտնիք չէ... Դեռ չգիտեմ...

ԿԻՆ - (պայուսակից այցեքարտը է հանում, մեկնում Տղամարդուն):

Ահա, կարող եք դիմել մեր ընկերությանը: Մենք քաղաքում լավագույն սպասարկումն ենք ապահովում բոլոր մակնիշների ավտոմեքենաների համար:

ՏՂԱՄԱՐԳ - (Կնոջ ձեռքից վերց-

նելով այցեքարտը և ուշադիր գննելով): Հըմ... Ինչո՞ւ ոչ... Թերևս, այո... Իսկ ձեր ընկերությունը ձմեռային անվադողեր տրամադրո՞ւմ է:

ԿԻՆ - Մեքենայի հետ կապված ցանկացած ծառայություն ու ցանկացած պահեստամաս: Այդ թվում՝ արգելակման կոճղակներ: Երբ դիմեք՝ կնշեք իմ անունը: (Ձայնն իջեցնելով և ձեռքով մազերը հարդարելով:) Այդ դեպքում ես իմ տոկոսը կստանամ:

ՏՂԱՄԱՐԳ - (ուսումնասիրելով այցեքարտը): Բայց այստեղ ձեր անունը չկա:

Վերելակի կանգ առնելու և դռները բացվելու ձայն:

ԿԻՆ - (վերելակից դուրս գալով և դեպի Տղամարդը շրջվելով): Իմ անունը:

ՏՂԱՄԱՐԳ - Ձեր անունը:

ԿԻՆ - Կին, պարզապես Կին:

Կինը շրջվում, գործնական քայլերով անցնում է կուլիսներ: Տղամարդը դուրս է գալիս՝ նայելով Կնոջ ետևից ու չիմանալով անելիքը: Զարմացած նայում է հանդիսատեսին, ապա շրջվում ու քայլում է կուլիսների հակառակ կողմը:

Նոյեմբեր 2022 թ.

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



Ռազմիկ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կարծում եմ, մի կողմից պատանեկության, երիտասարդության երազանքներով լեցուն ոսկե «նավակով» մարդը բարձրանում-բախվում է իրականությանը, ապա իրականության «նավակով» մյուս կողմից սկսում է իջնել, և այս երկու պտույտների միջև ընկած տարածությունը կոչվում է կյանք: Այս պիեսում փորձել եմ այդ պտույտների միջև եղած կյանքի ինչ-որ հատված ցույց տալ:

ՑԱՆՑ

(խաղ մեկ գործողությամբ)

Գործող անձինք

ԱՐՄԵՆ - երիտասարդ

ԱՆԻ - Արմենի ընկերուհին

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ

ՏԱՐԵՑ ԿԻՆ - տղամարդու կինը

ՄՈՒՐԱՑԻԿ

Բեմը բաժանված է երկու մասի: Երկուսն էլ հիշեցնում են նույն սենյակը: Մեկը գեղեցիկ կահավորմամբ է, կարմիր մահճակալով, կողքին՝ հայելի, որի սեղանիկին օժանելիքի սրվակներ են: Մյուս սենյակը պատված է ցանցով. անկողինը սև է, հայելին՝ կտրված: Գործողության ընթացքում գեղեցիկ կահավորված սենյակը բարձրանում է, իսկ ցանցով պատվածն իջնում է ներքև: Անին նստած է կարմիր մահճակալի վրա, ներս է մտնում Արմենը՝ ձեռքին ծաղկեփունջ, մոտենում, գրկում է Անիին:

ԱՐՄԵՆ - Սա քեզ:

ԱՆԻ - *(վերցնելով ծաղկեփունջը)*:
Շնորհակալություն: Այսօր տո՛ն է:

ԱՐՄԵՆ - Ի՛նձ համար ամեն օր էլ տոն է:

ԱՆԻ - Ի՛նչո՞ն:

ԱՐՄԵՆ - Որովհետև դու իմ կինն ես:

ԱՆԻ - Զգացված եմ, չհաշված այն փաստը, որ տղամարդիկ սիրում են ստել ու դա հաճոյախոսություն անվանել:

ԱՐՄԵՆ - Իսկ հնարավոր չէ առանց ստելու հաճոյախոսել:

ԱՆԻ - Եթե հնարավոր է, ինչո՞ւ այդպես չեք վարվում:

ԱՐՄԵՆ - Ես բոլորին նման չեմ:

ԱՆԻ - Հենց այդ նախադասությամբ հիշեցնում ես բոլորին:

Ցանցապատ սենյակում:

Տարեց տղամարդն ու կինը նստած են անկողնում՝ իրար մեջք արած:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Այդ օրը հասկացա, որ ստում ես:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Իսկ ինչո՞ւ չասացիր այդ մասին, գուցե երկուսիս էլ կարողանայիք փրկել:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ուշ էր փրկելու համար:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Ինչո՞ւ էր ուշ:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Մինչ այդ արդեն երկուսիս էլ սպանել էիր:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Դե, տղամարդիկ որսորդներ են:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Որոնք ամենից հաճախ իրենց վրա են կրակում:

ԱՐՄԵՆ - Չես հավատո՞ւմ:
ԱՆԻ - Հավատում եմ:
ԱՐՄԵՆ - Կանացի բնավորություն է՝ անպայման հակառակվել տղամարդուն:
ԱՆԻ - Գուցե: Ինչպե՞ս այդքան կարևոր դարձա քեզ համար:
ԱՐՄԵՆ - Որբանոցում միակն էիր, ով լսում էր ինձ:
ԱՆԻ - Ուրեմն դու ավելի շատ քեզ լսողի, քան սիրո կարիք ունեիր:

Ցանցապատ սենյակում:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ես սիրո կարիք չունեի, ոչ էլ ուշադրության:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Երազանք էլ չունեի՞ր:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ունեի, ուզում էի մոդել դառնալ:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Որի համար ոչ մի հատկանիշ չունեիր:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Իմ ամենաբացասական հատկանիշը դու էիր:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Որ սիրեցի՞:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Որ սպանեցիր:

Արմենը դուրս է գալիս սենյակից: Անին նստած է անկողնու վրա: Ներս

է մտնում Արմենը՝ երկու բաժակ գինի ձեռքին, մեկը տալիս է Անիին:

ԱՐՄԵՆ - Ես ո՛չ լսողի, ո՛չ էլ սիրո կարիք ունեի:

ԱՆԻ - Բա՛...

ԱՐՄԵՆ - Ես քո կարիքն ունեի պարզապես, դու բոլորն ես:

ԱՆԻ - Չգիտեմ՝ քեզ ուղղակի կի՞ն էր պետք, թե՛ ես, բայց ինձ հավատալ ես սովորեցնում:

ԱՐՄԵՆ - Դա լսվ է, թե՛ վատ:

ԱՆԻ - Չգիտեմ:

ԱՐՄԵՆ - Ինձ մի հարց էր տանջում՝ ինչի համար ողջ մնացի: Քեզ հանդիպելուց հետո հասկացա՝ այդ օրը չմեռա, որպեսզի հանդիպեմ քեզ:

ԱՆԻ - Օ՛, ինչպիսի կոմպլիմենտ: Եվ քանի՞ կնոջ ես այդպես ասել:

ԱՐՄԵՆ - Մեկ, ու ցավալիորեն այդ կինը դու ես:

ԱՆԻ - Ցավո՞ւմ ես, որ ես եմ:

ԱՐՄԵՆ - Չհավատալուդ համար եմ ցավում:

Արմենն ու Անին բաժակները խփում են իրար, խմում են: Անին բաժակը դնում է անկողնու կողքի փոքրիկ պահարանին, վերցնում է հեռակառավարման վահանակը, միացնում է, հնչում է վալս: Անին և Արմենը պարում են:

Ցանցապատ սենյակ:

Հնչում է վալսը:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Անջատիր այդ երաժշտությունը:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ո՛չ, լսում եմ:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - (*գոռում է*):
 Անջատիր, ասում եմ:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - (*անջատում է երաժշ-
 րությունը*): Հետո՞:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Պիտի ֆուտ-
 բոլ նայեմ:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Երբվանի՞ց ես սկսել
 ֆուտբոլ սիրել:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Վերջերս,
 ինձ դուր է գալիս այդ խաղը:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Իրականում դու
 ֆուտբոլ նայում ես, որովհետև
 ես զգվում եմ այդ խաղից:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Հենց դա է
 պատճառը, որ այդ խաղը ինձ
 հանճարեղ է թվում:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Երբ սկսեցիք մեռ-
 նել այսպես անձայն:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Երևի առա-
 ջին օրը, երբ հանդիպեցիք:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Որտե՞ղ ենք հանդի-
 պել... ճաշարանում, այդ օրը
 նստել էի քո կողքին:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Ու դրանից
 հետո ամեն ինչ անում էիր,
 որ նստեիր իմ կողքին: Չգի-
 տակցված երիտասարդական
 արարք:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Քեզ պետք է մեկը,
 ում միշտ կմեղադրես:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Ես ամեն օր
 աշխատում եմ ու որևէ մեկին
 մեղադրելու ժամանակ չունեմ:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Անում ես չսիրածդ
 աշխատանքը, ապրում ես չսի-
 րածդ կնոջ հետ: Ինչո՞ւ կտրուկ
 քայլ չես անում:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Ի՞նչ անեմ:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Բաժանվիր:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Գիտես, որ
 անհնար է, դրա համար այդ-
 պես ինքնավստահ խոսում ես:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ինչո՞ւ է անհնար:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Եթե բաժան-
 վենք, պետությունը բնակարա-
 նը կվերցնի ձեռքներիցս:
ՏԱՐԵՑ ԿԻՆ - Տեսնո՞ւմ ես, ինչ հե-
 ուստես է պետությունը:
ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԳ - Եվ ավելի խո-
 րամանկ, քան կինը:

**Արմենը և Անին պարում են, վայսն
 ավարտվում է:**
ԱՆԻ - (*վերցնում է բաժակը*): Դու
 քեզ երջանիկ համարո՞ւմ ես:
ԱՐՄԵՆ - Ըհը:
ԱՆԻ - Լավ է հնչում, բայց սուտ է:
ԱՐՄԵՆ - Ինչո՞ւ:
ԱՆԻ - Ի՞նչ երջանկություն: Եթե
 պետությունը չլիներ, երկուսս
 էլ հիմա մեռած կլինեիք, հաս-
 կանո՞ւմ ես:
ԱՐՄԵՆ - Բայց կա պետությունը:
ԱՆԻ - Լավ բան է, չէ՞, պետությու-
 նը:
ԱՐՄԵՆ - Քաղաքացին ավելի լավ
 բան է, քան պետությունը:
ԱՆԻ - Այսինքն:
ԱՐՄԵՆ - Պետության անվտան-
 գության երաշխիքն է քաղա-
 քացին:
ԱՆԻ - Ուզում ես ասել...
ԱՐՄԵՆ - Եթե մենք քաղաքա-
 ցի լինեիք, պետություն չէիք
 կորցնի:

ԱՆԻ - *(գինի է խմում)*: Ինչո՞ւ չես խոսում ծնողներիդ մասին:

ԱՐՄԵՆ - Չեմ հիշում նրանց... համարյա չեմ հիշում:

ԱՆԻ - Ինչո՞ւ:

ԱՐՄԵՆ - Վեց տարեկան եմ եղել, միայն մորս ճիչն եմ հիշում այդ ավտովթարից:

ԱՆԻ - Հետո՞:

ԱՐՄԵՆ - Ինձ հիվանդանոցից տարել են որբանոց:

ԱՆԻ - Բա ձեր տո՞նը:

ԱՐՄԵՆ - Մնաց հորեղբորս:

ԱՆԻ - Մնաց, թե՛ խլեց:

ԱՐՄԵՆ - Փոքր եմ եղել, չգիտեմ, արի փակե՞նք թեման:

ԱՆԻ - Տեսնո՞ւմ ես, նոր ասում էիր՝ երջանիկ ես:

ԱՐՄԵՆ - Էլի եմ ասում, երջանիկ եմ:

ԱՆԻ - Երջանիկ մարդը չի խուսափում իր անցյալի մասին խոսելուց:

ԱՐՄԵՆ - Արի խմենք:

ԱՆԻ - *(մի կում գինի խմելուց հետո, կտրուկ)*: Դու իրոք երջանիկ ես:

ԱՐՄԵՆ - Ինչո՞ւ:

ԱՆԻ - Որ ծնողների մահացել են:

ԱՐՄԵՆ - Հարբեցի՞ր:

ԱՆԻ - Չէ՛:

ԱՐՄԵՆ - Խելագարվեցի՞ր:

ԱՆԻ - Չէ՛:

ԱՐՄԵՆ - Զատանցնո՞ւմ ես:

ԱՆԻ - Ո՛չ:

ԱՐՄԵՆ - Հիմարացա՞ր:

ԱՆԻ - Ո՛չ: *(Գնում, նստում է ան-*

կողմու վրա:) Ծնողներս ինձ տարել են որբանոց:

ԱՐՄԵՆ - Այսինքն՝ մինչև հիմա ստո՞ւմ էիր, ծնողների մահացած չե՞մ:

ԱՆԻ - Ո՛չ:

ԱՐՄԵՆ - Ինչո՞ւ են որբանոց տարել:

ԱՆԻ - Որովհետև աղջիկ եմ ծնվել, իրենք տղա էին ուզում:

ԱՐՄԵՆ - Դրա համար ես ատում տղամարդկանց:

ԱՆԻ - Դրա համար ուզում եմ նախագահ դառնալ: Ու մահապատժի ենթարկել բոլոր նրանց, ովքեր սեռով պայմանավորված արքորս են անում:

ԱՐՄԵՆ - Երագում ես նախագահ դառնալ, որ մա՞րդ սպանես:

ԱՆԻ - Որ մարդասպաններին սպանեմ:

ԱՐՄԵՆ - Ես ուրիշ բան եմ ուզում:

ԱՆԻ - Ի՞նչ:

ԱՐՄԵՆ - Որ երեխաներ ունենանք, երջանիկ ապրենք, խաղաղ ծերանանք...

ԱՆԻ - *(այլայլված)*: Երեխաներ: *(Վեր է կենում անկողնու վրա-յից, մոտենում է հայելուն:)*

ԱՐՄԵՆ - Հա:

ԱՆԻ - Իսկ չի լինի՞, որ ո՛չ երեխաներ ունենանք, ո՛չ էլ ծերանանք:

Ցանցապատ սենյակ:

Տարեց տղամարդը բացում է պատուհանը:

ԱՄԲՈՒՏԻ ձայն - Պայքար, պայքար, մինչև վերջ... Մահ դավաճանին... Գնալու ենք մինչև վերջ...

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Լսում ես:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Գնա միացիր:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - *(փակում է պատուհանը)*: Միանամ՝ ինչ անեն:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Մի բան արա, փրկիր երկիրը, գնա մինչև վերջ:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Միշտ խուսափում ես:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ինչից:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Խոսելուց: Ինչնո՞ւ չէիր ասում, որ հիվանդ ես:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - *(գրկում է փրկկնիկին)*: Ես հիվանդ չեմ:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Բժշիկն ասաց՝ քեզսից է, չսեցիր:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ասաց նաև, որ վարակը քեզսից է անցել:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Քեզ հույս տալու համար ասաց:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Չթողեցիր՝ երեխա որդեգրելի:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Հեշտ ես ասում, որսեղի՞ց էիր որդեգրելու:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Որբանոցից:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Որբանոցում ապրած ամուսինները որբանոցից երեխա են որդեգրել. գեղեցիկ վերնագիր կլիներ, եթե ընկներ լրագրողների ականջը:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Թող ընկներ:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Դա էիր ուզում, որ գրեին քո մասին,

ասեին՝ ինչ բարի է, տեսնք, երեխա է որդեգրել, գային, նկարեին, ցույց տային: Ուզում էիր շոու անել:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ուզում էի ապրել:

Արմենը և Անին սենյակում են, անձրևի ձայն: Պատուհանը թակում են:

ԱՆԻ - *(վախեցած)*: Ո՞վ է այս ժամին... ինչ է ուզում:

Արմենը մոտենում է, նայում, բացում է պատուհանը: Պատուհանի մոտ կանգնած է մութացիկը՝ սպիտակ մագերով, պատռված հովանոցը ձեռքին:

ՄՈՒԲԱՑԻԿ - Բարի երեկո:

ԱՐՄԵՆ - Բարի երեկո: Ո՞վ ես... ինչ ես ուզում:

ՄՈՒԲԱՑԻԿ - Քո ապագան եմ:

ԱՆԻ - Ուտիկանություն կզանգեմ, եթե չհեռանաք:

ՄՈՒԲԱՑԻԿ - Զանգիր, բայց լավ կանես, գնաս խոհանոց, հաց բերես ու մի բաժակ էլ գինի:

ԱՆԻ - *(Արմենին)*: Հրամայում է: Փակիր պատուհանը:

Արմենը փակում է պատուհանը: Երկու քայլ հեռանում է, նորից վերադառնում է պատուհանի մոտ:

ԱՐՄԵՆ - Սոված է, հաց տանք: *(Բացում է պատուհանը)*:

Մութացիկը կանգնած է՝ պատռված հովանոցը ձեռքին: Անին դուրս է գալիս սենյակից, վե-

բաղառնում է՝ ձեռքի ափսեի մեջ միս ու երկու կտոր հաց, տալիս է մուրացիկին:

Մուրացիկը ափսեն դնում է պատու- հանագոգին:

ՄՈՒՐԱՑԻԿ - Բա գինի՞ն...

Անին բաժակի մեջ գինի է լցնում, տալիս է մուրացիկին:

ՄՈՒՐԱՑԻԿ - *(ուրում է միսը)*: Լավ չես եփել, հում է, աղը քիչ է, ու սխալ ես համեմել:

ԱՆԻ - Ծաղրո՞ւմ ես...

ՄՈՒՐԱՑԻԿ - Խորհուրդ եմ տալիս, որ մյուս անգամ այս թե- րությունները չլինեն:

ԱՐՄԵՆ - Մենք թքած ունենք քո խորհուրդների վրա, մնացել էր՝ հասարակ բումժը մեզ խոր- հուրդ տար:

ՄՈՒՐԱՑԻԿ - *(վերցնում է գինու գավաթը)*: Խմում եմ ձեզ հա- մար, երիտասարդ ընտանիք եք, մաղթում եմ ձեզ երջանկույթ- յուն, յոթ որդով սեղան նստեք, շատ երեխաներ ունեցեք, հատ- կապես տղա երեխաներ:

Մուրացիկը խմում է գինին, բաժա- կը դնում է պատուհանագոգին, հե- ռանում է:

Արմենը փակում է պատուհանը:

Լուսություն: Անին դանդաղ մոտե- նում, նստում է հատակին՝ մեջքը հենած անկողնուն:

ԱՆԻ - Լսեցի՞ր, ինչ ասաց, երեխա- ներ, հատկապես տղա երեխա- ներ: Չէ, բուրդը նույնն էք, դուք

ատում եք աղջիկ երեխանե- րին: *(Վեր է կենում, նետրվում է դեպի Արմենը)*: Դու էլ ես այդ- պես մտածում, դե՛, մի՛ կեղծիր, ասա՛, ասա՛, որ տղա երեխա կուզեիր, դե ասա՛, վախենում ես, մի՛ լո՛իր, ասա՛:

ԱՐՄԵՆ - Հանգստացիր, բան չա- սացի:

ԱՆԻ - Չասացիր, բայց մտածում ես: Ո՞րն է տղամարդու առա- վելությունը, որ նա կին չէ: Դե ասա՛, բացատրի՛ր, մեղք է կին ծնվելը, հա՛: *(Ձեռքերով բռնում է գլուխը, ծնկի է գալիս)*:

ԱՐՄԵՆ - Դեղերդ որտե՞ղ են, ներոզդ կսկսվի...

Արմենը դարակի մեջ փնտրում, ապա փակում է դարակն ու արագ դուրս է գալիս սենյակից:

Ցանցապատ սենյակ:

Տարեց տղամարդը կանգնած է պատուհանի մոտ՝ ձեռքին տուփի նմանվող խաղալիք, որի վրա բա- րակ ձող կա: Պտտեցնում է ձողը, լսվում է երածշտություն:

Տարեց կինը նստած է հատակին՝ տիկնիկը գրկին:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Դա ի՞նչ է:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Խաղալիք:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Մանկությունդ ես հիշել:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Անհնար է հի- շել, ինչը չի եղել: *(Բանդաղ քայ-*

լում է կնոջ կողքով՝ պարտեցնելով բարակ ձողը, որից երածշ-
րություն է լսվում:) Հիշում ես
մեր դաստիարակին՝ Աննային:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ոչ:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Երբ տարան
որբանոց, նա էր ինձ խնա-
մում... փոքր էի ու չէի ճանաչում
մորս, սկսեցի նրան մայրիկ
ասել: Մի անգամ, ծննդյանս
օրը, կարծեմ յոթ տարեկան էի,
գնեց այս խաղալիքը: Սա իմ
առաջին ու վերջին խաղալիքն
է: Իսկ դու ասում ես՝ մանկութ-
յունդ ես հիշել, ահա իմ ման-
կությունը, ընդամենը:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Դեղս կտամ:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - (բացում է ան-
կողնու կողքի փոքրիկ պահա-
րանի դարակը, դեղը փայխս է
կնոջը): Հետո ոչչչից խոսել չի
լինում: Ներոզդ սկսվում է:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Քո ընտրությունն է,
ինչ անեմ: Տանել չեմ կարողա-
նում, երբ մանկությունից կամ
երեխաներից են խոսում իմ
ներկայությամբ:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Տղա երեխա-
ներից:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Լռի՛ր, խնդրում եմ:

**Տարեց տղամարդը գնում, կանգ-
նում է պատուհանի մոտ՝ հայացքը
դեպի դուրս. լռում է:**

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ինչի՞ մասին ես
մտածում:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Մենակ մնալու:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Հոգնե՛լ ես:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Հա:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ասում են՝ սարսա-
փելի բան է մենակությունը:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Սարսափե-
լին ինչ-որ մեկի ներկայութ-
յամբ մենակ մնալն է:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Տղա որ ունենայինք,
քեզ մենակ չէի՛ր զգա:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Բնականա-
բար, ոչ:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Իսկ եթե աղջիկ...

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Հիմա դրան
էլ եմ համաձայն:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Որովհետև տղա չու-
նեմ:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Դե հա:

**Տարեց կինը, օրորոցային երգելով,
դանդաղ մասնատում է տիկնիկն ու
մասերը փռում է հատակին:
Տղամարդն անշարժ կանգնած է
պատուհանի մոտ:**

ՏԱՐԵՑ ԿԻՆ - (ընդհատում է երգը,
վեր կենալով): Լսում ես, սիրե-
լիս, լսում ես, նա գալիս է:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - (հայացքը
չկտրելով պատուհանից): Ո՞վ:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Բժիշկը՝ սպիտակ
խալաթով, գալիս է ասելու, որ
ես հիվանդ չեմ: Մենք, ինչպես
միշտ, կժպտանք, ցույց կտանք,
որ երջանիկ ենք, նա կհիանա
մեզնով, սիրալիք կժպտա ու
կասի, որ պետք է հավատալ ու
շարունակել բուժումը, մենք հա-
մաձայնության նշան կանենք

գլխով, հետո ամեն անգամ-վա պես կասես, որ երեխան երեխա է, ինչ տարբերություն: Կասես ու կմտածես տղա երեխայի մասին, ես կլռեմ, բժիշկը կհավատա... Բայց այս անգամ ուրիշ է կարծես, տեսնում ես, չի ժպտում, լուռ քայլում է դեպի ինձ, ասես կանչում է ձեռքի շարժումով, ուզում է ասել, որ ես հիվանդ չեմ, այո՛, հիվանդ չեմ... Բաց դուռը. նա հասավ...

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - (*մոտենում է կնոջը*): Գժվե՛լ ես: Ո՞ւմ հետ ես խոսում, այստեղ ոչ ոք չկա, գիշերվա երեքն է:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - (*ուզում է գնալ դեպի դուռը*): Նա դռան ետևում է, սպասիր:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - (*բռնելով կնոջը*): Հանգստացիր, ոչ ոք չկա այնտեղ, գնա պառկիր:

Տղամարդը, կնոջը բռնած, մոտենում է անկողնուն:

Անին պառկած է անկողնում, Արմենը նստած է նրա կողքին:

ԱՐՄԵՆ - Ո՞նց ես զգում հիմա:

ԱՆԻ - Արդեն լավ եմ:

ԱՐՄԵՆ - Բժիշկ կանչե՛մ:

ԱՆԻ - Ոչ, պարզապես մանկությունից ու երեխաներից մի խոսիր հետս, խնդրում եմ:

ԱՐՄԵՆ - Լավ, ինձ մնում է ոչ մի բանի մասին չխոսել հետո:

Պատուհանը թակում են: Արմենը վեր է կենում, մոտենում է պատուհանին, նայում է պատուհանից, բացում է:

ՄՈՒՐԱՑԻԿ - Բարի երեկո:

ԱՐՄԵՆ - Բարի երեկո:

ՄՈՒՐԱՑԻԿ - Ինչպե՛ս ես:

ԱՐՄԵՆ - Լավ, շնորհակալություն:

ՄՈՒՐԱՑԻԿ - Ինչ անսիրտ տղա ես:

ԱՐՄԵՆ - Ինչո՞ւ:

ՄՈՒՐԱՑԻԿ - Քանի օր է՝ չենք տեսել իրար, սա ի՞նչ դիմավորելու ձև է:

ԱՆԻ - (*վեր է կենում անկողնուց, մոտենում է մուրացիկին*): Դու իսկապես ուզում ես՝ զանգեմ ուստիկանություն:

ՄՈՒՐԱՑԻԿ - Ես իսկապես ուզում եմ՝ գնաս խոհանոց ուտելիք ու գինի բերես, և համոզվեմ, որ անցած անգամվա թերությունները չկան:

ԱՆԻ - Բայց...

ՄՈՒՐԱՑԻԿ - Ոչ մի բայց, ես պարապ չեմ, գնա՛, արագացրո՛ւ:

Անին դուրս է գալիս սենյակից:

ԱՐՄԵՆ - Եթե մի անգամ էլ գաս, ինձնից չնեղանաս, համբերությունս սահման ունի, լսում ես:

ՄՈՒՐԱՑԻԿ - Էլ չեմ գա, իսկ դու գուցե սպասես երկար ու երկար:

Անին ներս է մտնում, ձեռքին՝ ավստի մեջ՝ կարտոֆիլ, երկու կտոր հաց: Ափսե՛ն տալիս է մուրացիկին,

մուրացիկը ափսե՛ն դնում է պատու-
հանագոգին:

ՄՈՒՐԱՑԻԿ - Բա գինի՛ն:

Արմենը բաժակով գինի է տալիս:
Մուրացիկը ուտում է կարտոֆիլն
ու հացը, ափսե՛ն դնում է պատուի-
հագոգին, թևով սրբում է բերանը:

ՄՈՒՐԱՑԻԿ - *(Անհին):* Ապրես,
աղը տեղն է, բայց կարտո-
ֆիլը մյուս անգամ շատ մանր
կկտրատես, որ չվատվի, ու մի՛
խնայիր ձեթը, մի քիչ շատ լցրու
թավայի մեջ: *(Խմում է, գավա-
թը դնում է պատուհանագոգին,
հանում է տիկնիկ, տալիս է
Անհին:)* Բեզ նվեր եմ բերել:

ԱՆԻ - Որտեղի՞ց ես բերել:

ՄՈՒՐԱՑԻԿ - Դիմացի փողոցի աղ-
բամանից, տես, ինչ գեղեցիկ է:

ԱՆԻ - *(վերցնում է տիկնիկը):*
Բայց...

ՄՈՒՐԱՑԻԿ - Ոչ մի բայց, ցտե-
սություն: *(Հեռանում է:)*

Արմենը փակում է պատուհանը:
Քայլում են անկողնու կողմ, Անին
նայում է տիկնիկին:

Անին տիկնիկը դնում է անկողնու
վրա, սենյակը դանդաղ սկսում է
բարձրանալ:

Լսվում է կայծակի ձայն, ամպի գո-
ռոց, անձրևի ձայն, նորից կայծակ:

Բե՛նը մթնում է:

ԱՐՄԵՆ - Մո՛նր որտե՛ղ է:

ԱՆԻ - Չունենք:

ԱՐՄԵՆ - Ասե՛իր՝ հետս բերե՛ի:

ԱՆԻ - Մոռացել էի:

ԱՐՄԵՆ - Բա որ այսօր չտա՛ն լույ-
սերը:

ԱՆԻ - Կտան, առաջին դեպքը չէ,
կայծակից է:

ԱՐՄԵՆ - Սա նման է մարդու
կյանքին, մի պահ, և ամեն ինչ
մթնում է:

ԱՆԻ - Ու հետո՛ էլի լույս:

ԱՐՄԵՆ - Նրանց համար, ովքեր
կտեսնեն:

ԱՆԻ - Երանի տեսնողներին...

Ցանցապատ սենյակ:

Սենյակն իջնում է վերնից, անկող-
նու վրա պառկած սպիտակահեր ծե-
րունին պտտում է ձեռքի խաղալիքի
բարակ ձողը, որից երաժշտություն
է լսվում: Քիչ անց ծերունին ընդհա-
տում է նվագը, սենյակը դանդաղ
շարունակում է իջնել... Ծերունին
գրկում է կողքի բարձը, սեղմում է
կրծքին:

ԾԵՐՈՒՆԻ - Հիմա, երբ գնացել ես,
ամենից շատ ինքս ինձ եմ կա-
րոտել. ինձ տեսնելու համար
պետք է նայեմ քեզ, ինքս ինձ
վրա գոռալու համար պետք է
վիճեմ քեզ հետ: Մեկին գումա-
րած մեկ հավասար է մեկի... Եվ
ինչպես ասում են, մենակությո-
ւունից սարսափելի բան չկա...

**Ծերունին նորից նվագում է, սենյակն իջնում է ներքև ու կոր-
չում է խավարի մեջ: Բե՛նը մթնում է:**



Նինա ՄԱԶՈՒՐ

Ազնետը՝ Վիլյամ Շեքսպիրի կինը, ինքը եկավ ինձ մոտ: Այո, այո, հենց այդպես: Մի անգամ, մթնշաղին էր, «գայլի ու շան» ժամին, ֆլեյտայի ձայն լսեցի՝ միայնակ ու զուլայ: Զգիտեմ՝ ով էր այդ երաժիշտը, դրանից հետո այլևս չկրկնվեց,

բայց ես պարզ տեսա, որ այդ մեղեդի ինչ-որ կին է լսում: Նրա դեմքը լուսավոր էր ու թախծոտ, սենյակում խոտաբույսերի բուրմունքն էր ու ֆլեյտայի ձայնը նրա համար էր նախանշված:

Իսկ հետո երևի թե աշխատեց «ֆլեյտա-Համլետ» զուգորդումը... Ու ես հանկարծ հասկացա, որ փոքրիկ Համլետը՝ Շեքսպիրի որդին է դիմում մորը այն աշխարհից, որտեղից չկա վերադարձ: Ու քանի որ պատահական ոչինչ չի լինում, հասկացա, որ Ազնետը թախում է իմ երևակայության դուռը: Ու ես նրան ներս թողեցի:

Շատ քան հայտնի չէ այդ կնոջ մասին, բայց որոշ նյութեր կան ու ես օգտվեցի դրանցից:

Այդպես ծնվեց «Ազնետը՝ Ուիլլի կինը» մոնոպիետը: Այն մասին, որ ամեն մի մեծագույն տղամարդու թիկունքին հավատարիմ ու իմաստուն կնոջ հանդարտ սովերն է: Հանճարի ուժը այդ կնոջ սիրո մեջ է:

ԱԳՆԵՍԸ՝ ՈՒՒԼԼԻ ԿԻՆԸ

Բեմում համեստ, կոկիկ հագնված կին է, նա 16-րդ դարին բնորոշ քաղաքային բնակչուհու արտաքին ունի: Տարիքը դժվար է որոշել՝ նիհարակազմ է, շարժումները՝ թեթևասահ, ոտաբոբիկ է, կոշիկները անկյունում են: Շուրջը բուժիչ խոտաբույսերի խրճիկներ են չորանում, կինը վստահ ընտրում է պետքական բույսերն ու սկսում է բուժիչ թուրմ պատրաստել. անհրաժեշտ ամեն ինչ նրա ձեռքի տակ է: Հանկարծ, գործը թողնելով, ականջ է դնում:

ԱԳՆԵՍ - Դո՛ւ ես: Դե, վերջապես...

Հիմա մենք էլ ենք լսում ֆլեյտայի ձայնը: Կինը դիմում է մեզ, գուցե և՛ ինքն իրեն.

ԱԳՆԵՍ - Տարօրինակ է, ախր երբեք ֆլեյտա չի նվագել, իսկ հիմա...

Երաժշտությունը լոռում է:

ԿԱՆԱՑԻ ոչ երիտասարդ ձայն - Է՛ն: Է՛ն...

ԱԳՆԵՍ - Այստեղ եմ: Կեսուրս է: Բոլորն ինձ այդպես են անվանում: Իսկ ընդհանրապես ես Ագնես եմ, և՛ վկայականով, և՛ մայրս ու հայրս էին այդպես ասում: Ուիլլը՝ նույնպես: Իսկ մնացած բոլորը՝ Է՛ն ու Է՛ն: Գուցե այդպես նրանց հարմար է... (Բարձրաձայն:) Դեղ եմ

պատրաստում միսսիս Գրենսթոունի համար: (Մեզ.) Ինքը կարգուկանոնի համար է կանչում... չի խանգարի: Մերին չար չէ: Չեմ ասի, որ սիրում է ինձ, ասենք, նրան կարելի է հասկանալ՝ նրա խելացի տղան՝ Ուիլլը տուն է բերել գեղջկուհու՝ հերիք չէ, մի բան էլ՝ հղի: Իսկ տունը քաղաքային է, ամեն մեկն էլ ճանաչում է ձեռնոցագործ Ջոնին, չնայած նրա վատ համբավին՝ տաքգլուխ կովագան, ձեռքն էլ՝ ծանր: Մերիի կյանքը շաքար չէր՝ աչքդ վրան պահիր, հանկարծ մարդդ երեխաներին չհաշմի: Ու մեկ էլ ես՝ վրադիր... բազեն էլ ձեռքիս: (Ծիծաղում է:) Այո, այո, մի ձեռքում իրերով կապոցս էր, մյուսի վրա բազեն էր թառել: Իսկ որպես վերջա-

բան՝ աչքիս տակի կապտուկը,
խորթ մորս հրաժեշտի պստիկ
նվերը... *(Ականջ է դնում:)* Նվա-
գում է: Չէ, ինձ թվաց...

Մեր ֆերման անտառի եզրին
է: Հանգուցյալ մայրս ամեն ինչ
գիտեր անտառի մասին, զգում
էր նրա հոգին: Պատահում էր,
եղբորս կապում էր մեջքին, ես
ավագն էի՝ բռնվում էի մորս փե-
շից ու ամբողջ օրն անտառում
ենք: Խոտաբույսեր է հավա-
քում, ծառերի հետ է զրուցում...
Անտառի փերու պես... Մայրս
ուրիշ էր, առանձնահատուկ
էր... Ասում են՝ նրան եմ քաշել:
Իսկ թե հայրս ոնց էր նրան սի-
րում: Մազին կպնել թույլ չէր
տալիս: Իսկ երբ մահացավ եր-
րորդ ծննդաբերության ժամա-
նակ, տեղը չէր գտնում, կորց-
րել էր իրեն: Դե, ամուսնացավ
հետո, պարզ բան է... Բայց
ֆերման կտակեց ոչ թե խորթ
մորս ու իրենց ընդհանուր երե-
խաներին, այլ ինձ ու եղբորս:
Հարուստ ֆերմա է... Այնպես
որ ամուսնուս տունը անօժիտ
չմտա: Ու կեսրարս՝ Ջոնը, մի
անգամ ձեռք չբարձրացրեց
վրաս: Իսկ Ուիլլը նեղացնում
էր... *(Սիրախիռ:)* Ախր Ուիլլը
հսկա չէ... ոչ... իսկ եղբորս կող-

քին՝ համեմատելու չէ: Բարձ-
րահասակ, նիհարակազմ, քա-
ղաքային հագուստով, աչքերը՝
մուգ, ուշադիր զննող: Որպես
դասուսույց եկավ մեր ֆերման,
դպրոցական եղբայրներիս լա-
տիներեն սովորեցնելու, հոր
պարտքը մարելու: Նրա հայ-
րը մեզ պարտք էր, իսկ վերա-
դարձնել պարտքը չէր ուզում,
ահա և Ուիլլին առաջարկեց որ-
պես ձրի դասուսույց: Չգիտեմ
էլ՝ ինչ գտավ իմ մեջ Ուիլլը...
Երևելի գրագետ չեմ... *(Ժպտում
է:)*

Իսկ ես գիտեմ՝ ինչ գտա: Բռնե-
ցի նրա ձեռքը, այ, այստեղ՝ մեծ
մատի ու ցուցամատի միջև, ինչ-
պես մայրս էր ցույց տվել՝ նրա
էությունը տեսնելու համար: Եվ
այնպիսի մի խորություն բաց-
վեց: Ես գուցե բոլորի պես չեմ,
բայց Ուիլլին այնքան է տրված,
ես՝ ուր, ինքը՝ ուր... Նրա ճա-
նապարհն առանձնահատուկ
է: Այնպես որ, ես գիտեի՝ ինչ էի
անում, երբ խնձորի ամբարում
հղիացա Սյուզանով:

Ու գիտեի, որ երկու երեխա
կունենանք: Այդպես էլ ասացի
Ուիլլին՝ երբ վրա կհասնի իմ
ժամանակը, անկողնուս մոտ
կանգնած կլինեն երկու դուստ-

րերս: Նա ժպտաց ու գլուխն օրորեց՝ իբր, քեզ շուտ է մահվան մասին մտածել: Իսկ ես չեմ մտածում... պարզապես տեսնում եմ...

ԱՂՋԿԱԿԱՆ ձայն - Մայրիկ, միսսիս Գրենսթոունն է եկել: Իրենք հարցնում են՝ պատրաստ է դեղը:

ԱԳՆԵՍ - Ասա նրանց, Սյուզաննա, որ հենց ավարտեմ՝ ինքս կրերեմ: (Մեզ:) Աղջիկս է՝ ավագը: Գիտե, որ չեմ սիրում, երբ սենյակ են մտնում, գործից շեղում են: Խոտաբույսերը ուշադրություն են պահանջում: Մայրս էլ, պատահում էր, ինձ ու եղբորս թույլ չէր տալիս խանգարել, երբ դարման էր սարքում:

Ասենք, ով կարող է ինձ խանգարել... Տունը մեր սեփականն է: Այ, երբ Ուիլլի ծնողների հետ էինք ապրում, մշտապես իրարանցում էր՝ ջահելները, պստիկները, ծառաները, պատվիրատուները... Փառահեղ տուն էր, ոչինչ չես ասի: Դե, ինչ խոսք, սրա հետ չես համեմատի, սա երևի ամենալավն է Ստրատֆորդում: Ուիլլն այնպես էր հպարտանում, որ կարող է իրեն թույլ տալ այսպիսի տուն ունենալ: Ախր, նա Լոնդոն-

նում ոտքի կանգնեց, լավ փողեր է վաստակում: Ջուդիթը՝ մեր կրտսեր աղջիկը, մեկ էլ տեսար՝ հարցնում է. «Իսկ հայրիկն ինչ է անում Լոնդոնում»: Իսկ ես չգիտեմ էլ... Թատրոնում է աշխատում, ինչ-որ բան է գրում: Ու որ այստեղ է գալիս, էլի գրում ու գրում է...

Ֆլեյտայի կամաց ձայնը:

ԱԳՆԵՍ - Ահա՛: Փառք Աստծո: Բայց ինքը ինձ չի երևում... Մի անգամ հարցրի Ուիլլին. «Ինչո՞ւ է նա թաքնվում, մեր Համլետը: Միթե չգիտե, ինչպես եմ իրեն կարոտում»: Իսկ Ուիլլը սևեռուն ինձ նայեց, ուղիղ աչքերիս մեջ... ու տխրամած խոնարհեց գլուխը: Ոչինչ չասաց: Ու ես մտածում եմ՝ իսկ Ուիլլը լսում է այս ֆլեյտայի ձայնը: Աղջիկներս հաստատ չեն լսում: Նրանց դա չի տրված: Իսկ նա... պարտավոր է...

Չէ, Ջուդիթն էլ պիտի լսի: Ախր եղբոր հետ այնպես էին իրար կապված, ասելու չի: Պարզ բան է՝ երկվորյակներ էին: Ես չգիտեի, որ գույգ եմ բերելու: Երկրորդ աղջկաս էի սպասում: Ու հանկարծ տղա է ծնվում առաջինը: Դե, մտածում եմ,

նախազգացումն երբեք ինձ չի խաբել, իսկ հիմա, փաստորեն, խաբեց: Մեկ էլ տատները գոռում է. «Աստված իմ, էլի երեխա կա...»: Ու հայտնվեց Ջուդիթը: Ուրեմն, էլի որ երկու աղջիկ: Իսկ ինչո՞ւ որդուս մասին ոչինչ չէի կանխազգում: Չհասկացա այն ժամանակ, որ նա իմ հյուրն էր՝ եկավ ու կգնա...

Ընդհատում է գործը, փակ աչքերով ճոճվում է մեղեդու տակտին համահունչ: Ֆլեյտան լռում է: Ազնեսը բացում է աչքերը, ասես քնից արթնացավ:

ԱԳՆԵՄ - Գնանց: Ասես մեկը կանչեց նրան, իբր՝ հերիք է նվագես: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ նա միայն նվագում է, իսկ ինձ հետ չի խոսում: Գուցե պատժում է: Որ չփրկեցի: Ջուդիթին փրկեցի, իսկ իրեն՝ ոչ: Ուշ հասկացա, որ անիծված ժանտախտը նրան էլ է բռնել: Իսկ ինքը չէր բողոքում, համբերում էր, քրոջ մասին էր միայն մտածում:

Իսկ ես... չնկատեցի... Դե չէ, նա բարի հոգի է... քնն չի պահի: Այդ ես ինձ չեմ ներում... Առավոտից գիշեր խոտաբույսերի հետ եմ, ինձ համոզում եմ, որ երբ մարդկանց ցավերն

եմ դարմանում, այնտեղ հեշտ է նրա համար...

Իսկ Ուիլլը Լոնդոնում էր, երբ մեր տղան մահացավ: Անմիջապես եկավ՝ երեսին գույն չկար: Հասավ թաղմանը: Մարդիկ չէին ճանաչում, ասես ոչ թե Համլետի հայրն էր, այլ նրա ուրվականն էր հայտնվել: Ինձ գրկեց, իսկ ձեռքերը՝ սառույց, ու շուրթերն են շարժվում, ասես աղոթում է: Բայց դա աղոթք չէր, ոչ, աղոթք չէր... Ուրիշ բան էր... Բառերը չէին հասկացվում... «Մնաս բարով, մնաս բարով»-ի պես մի բան: Ու էլի ինչ-որ բան... Կարծես՝ «Հիշիր իմ մասին», բայց այդ մեկը՝ դժվար թե... Դա Ուիլլը պետք է հիշեր, ոչ թե մեր փոքրիկ տղան:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ձայն - Մայրիկ, կարելի է քեզ մոտ գալ:

ԱԳՆԵՄ - Ջուդիթ, գիտես, որ չի կարելի: Սպասիր, կավարտեմ ու դուրս կգամ:

ՆՈՒՅՆ ձայնը - Հայրիկից նամակ է եկել:

ԱԳՆԵՄ - Նամակն էլ կապասի: (Մեղ.) Նոր բան գրած չի լինի: Կարևոր բան՝ նույնպես: Եղանակի մասին, տոմսերի վաճառքի ու այստեղ՝ Ստրատ-

Ֆորդում հողատարածք գնելու մասին, թեև արդեն բավական չափով գնված է:

Թաղումից հետո Ուիլյն ասաց. «Իրերդ հավաքիր, Ագնես: Աղջիկներինը՝ նույնպես: Գնում ենք Լոնդոն»: Իսկ ինչ ենք անելու այնտեղ՝ Լոնդոնում: Այդպես էլ իրեն ասացի. «Քեզ, ասում եմ, այստեղ անելու բան չկա, իսկ մեզ՝ այնտեղ»: Իմ Ուիլլը այնտեղ իր կյանքն ունի, իսկական կյանքը:

ԿԱՆԱՑԻ ձայն - Էնն, հոգյակս: Անցնում էի այստեղով, մտածեցի՝ ներս մտնեմ, ախր օտարներ չենք: Իսկ Սյուզանը ներս չի թողնում, մայրիկը զբաղված է, ասում է:

ԱԳՆԵՍ - Ճիշտ է ասում, զբաղված եմ: Գուցե մյուս անգամ տեսնվենք: Դու էլ երևի լիքը գործեր ունես: *(Մեզ.)* Խորթ մայրս է, Ջոանը: Ժամանակին երեսու տեսնել չէր ուզում, իսկ հենց Ուիլլն սկսեց վաստակել, այս տունը գնեցինք, զայրույթը փոխարինեց սիրալիքությամբ ու մեկ էլ տեսար՝ հայտնվում է: Հետաքրքրությունից դրդված: Աչքերով պատերն է գննում-քննում... Դե, նաև գիտե, որ առանց երեխաների համար նվերների չի գնա:

Մի անգամ եկավ ու ասում է. «Ո՞նց ես դու, հիմարիկդ, մարդուդ Լոնդոն թողել: Մարդիկ ասում են, էստեղ սիրուհիներին հաշիվ չկա»: Իսկ ինքը նայում է ինձ չարախինդ, իբր, կարո՞ղ է, սիրտդ ցավում է:

Չեմ ասի, որ չի ցավում: Բայց ոչ՝ նրա խոսքերից: Առանց նրա ասելուն էլ ամեն ինչ հասկանում էի: Այնտեղ Ուիլլը մենակությամբ չի դիմանա, արյունը եռում է: Բայց մի բան էլ գիտեմ՝ մարմինը մարմին, իսկ հոգին այստեղ է, ինձ հետ, մեր աղջիկների հետ, գերեզմանի, որտեղ մեր տղան է քնած: Ես եմ նրան Լոնդոն թողել, այնտեղ է նրա ճանապարհը... Իսկ այստեղ նա կվերադառնա, հաստատ գիտեմ: Ընդամիշտ կվերադառնա, երբ իր ժամը գա: Եվ այդ ժամը նա կդիմավորի ինձ հետ:

(Նայում է դահլիճ:) Գնաց Ջոանը... ըհը, գնում է... զամբյուղները դատարկ են՝ վաճառել է, ինչ շուկա էր բերել: Ինձնից չի նեղանա, գիտե, որ քեն չեմ պահում: Պետք է ֆերմա գնալ, փոքրիկներին նվերներ տանել, ծնողներիս գերեզմաններիս այցելել: Եղբորս հետ տեսնվեմ:

Մի անգամ եկավ՝ աչքերը փայլում են, զամբյուղից ինչ-որ փաթեթ է հանում: «Ահա,- ասում է,- Էնն, տես, ինչ է ինձ տվել մեր հարևանը Լոնդոնից վերադառնալուց հետո»: Նայում են՝ թատերական աֆիշա է: Ուիլլի անունը կա գրված: Եվ,- Աստված իմ,- ներքևում, որտեղ ներկայացման վերնագիրն է, մեր տղայի անունն է գրված: Այդպես էլ մեծ տատերով գրված է. Համլետ: Դե, մտածում եմ, սիրելիս, ինչո՞ւ ես մեր ցավն աշխարհով մեկ անում:

Բայց զգացածս ցույց չեմ տալիս ու ասում եմ խորթ մորս. «Շնորհակալ եմ, Ջոան: Կարո՞ղ եմ աֆիշան ինձ վերցնել»: Իսկ նա՝ «Դե իհարկե, թանկագինս, ախր քեզ նվեր եմ բերել»: Իսկ ինքը հո չի ժպտում, հո չի ժպտում...

Լոնդոն մեկնելու պատրաստություն տեսա: Այդ պրեմիերային, ուրեմն... Բայց եղբայրս ինձ մենակ չթողեց, հետս եկավ: Սկզբում Ուիլլի բնակարանը գնացինք: Բարձրացանք ձեղնահարկ, դուռը թակեցինք, հարևանուհին դուրս եկավ: «Տանը չէ,- ասում է,- օրերով թատրոնում է, իսկ պահուստ

բանալին ինձ մոտ է, կարող եմ դուռը բացել, դուք սպասեք նրան»: Եղբորս հետ ներս մտանք: Աղքատիկ սենյակ է՝ աթոռ, սեղան ու մահճակալ: Աթոռին կամզոլն է կախված: Մահճակալին ձեռագրերն են դարսված: Իսկ սեղանին կիսատ թողած նամակ. «Թանկագին Ագնես...»: Չսպասեցինք Ուիլլին, ձիերն արձակեցինք ու ուղևորվեցինք թատրոն: Գետի այն ափը:

Դժվարությամբ տեղ գտանք, նստեցինք: Աղմուկը լռեց: Սկզբում չհասկացա՝ մարդիկ բեմում ինչի մասին են խոսում, ինչի համար է այդ դրյակը:

Հետո հայտնվեց ուրվակներ՝ միանգամից ճանաչեցի Ուիլլին: Ու հանկարծ լսում եմ. «Հանլետ: Հանլետ»: Այդ մարդիկ տալիս են իմ որդու անունը: Ինչո՞ւ, ինչպե՞ս են համարձակվել:

Իսկ հետո բեմ եկավ պատանին: Ոսկեզանգուր, ինչպես տղաս, բայց ավելի տարիքով: Նույն շարժումները, գլխի նույն թեքելը, նույն քաջությունն աչքերում...

Ու ես հասկացա՝ Ուիլլը մեր տղայի հետ փոխվել է տեղե-

րով: Վերածվել է ուրվականի, որպեսզի հարություն տա զավակին: Ու կարևոր չէ, որ այդ պատմությունը մեր Համլետի կարճատև տղայական կյանքի մասին չէ: Իմ Ուիլլը նրան նոր կյանք է նվիրել: Որպեսզի միշտ կողքին լինի:

Հագնում է կոշիկները, վերցնում դեղերով զամբյուղը:

ԱԳՆԵՍ - *(բարձր:)* Ձուդիթ, ես դուրս եմ գալիս: Որտեղ է նամակը: *(Գնում է, շրջվում, ետ է նայում:)* Ես որ գիտեմ՝ ինչու Ուիլլը գնաց Լոնդոն: Փառքի ետևից: Դե ինչ, նրա փառքը բոլորիցս երկար կապրի...

Լսվում է ֆլեյտայի մեղեդին:

ԱԳՆԵՍ - Նվագի՛ր, նվագի՛ր, Համլետ: Մենք քեզ լսում ենք...

**Ռուսերենից թարգմանեց
Կարինե ԽՈՒԴԻԿՅԱՆԸ**

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

Էլեկտրոնային

գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամատուրգիա», 2022

Տպագրվում է պետական աջակցությամբ

Խմբագիր՝
Կարինե ԽՈՂԻԿՅԱՆ

Կազմը և էջադրումը՝
Նատա ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:
Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար
դիմեն անմիջական իրավատերերին՝ հեղինակներին:

Խմբագրության հասցեն՝
Երևան, Օրբելի 18/6, հեռ. (010) 22-76-08

Գրանցման վկայական՝ 01Մ 000089